

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱՆԱՐԱՆ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԳՄՆԵՐ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ  
ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2017**

ՀՏԴ- 327(07)  
ԳՄԴ- 66.4g7  
Ն 152

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի  
գիրական խորհուրդը*

**Հ. Զ. Նազարյան**

Ն 152 Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ/Նազարյան Հ. Զ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 146 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկը նպատակ ունի ուսանողներին ներկայացնելու «տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն» առարկան, ծանոթացնելու արդի միջազգային հարաբերություններում տեղեկատվական պատերազմների իրականացման միջոցներին: Ձեռնարկը հնարավորություն կընձեռի սովորելու՝ ինչպիսին են եղել տեղեկատվական գործողություններն անցյալում, ինչպես են ըմբանում տեղեկատվական հակամարտությունները «տեղեկատվական հասարակության» ժամանակաշրջանում:

Դասընթացի շրջանակներում տեսական նյութին համապատասխան կիրականացվի նաև գործնական աշխատանք:

Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է միջազգային հարաբերությունների և հումանիտար այլ ֆակուլտետների (ժուռնալիստիկա, սոցիոլոգիա) համար:

ՀՏԴ- 327(07)  
ԳՄԴ- 66.4g7

ISBN 978-5-8084-2214-8

© ԵՊՀ հրատ., 2017

© Նազարյան Հ. Զ., 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
ԹեՄԱ 1. «Տեղեկատվական Պատերազմներ» Հասկացությունները եվ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	9
ԹեՄԱ 2. Տեղեկատվական Պատերազմների Տեսակները	14
ԹեՄԱ 3. Տեղեկատվական Գործողություններ Անցնելու մասին	19
ԹեՄԱ 4. Տեղեկատվական Գործունե 20-րդ դարի Միջուկային Հարմարություններին Պատկերաստվածություն	24
ԹեՄԱ 5. Տեղեկատվածի (ինֆոգեն) Սպանելու և Լիքները եվ Դրանց Միջուկային Վերաբերվածություն Միջոցները	30
ԹեՄԱ 6. Տեղեկատվական Գործընթացները եվ Դիվանագիտությունները	35
ԹեՄԱ 7. Տեղեկատվական Պատերազմների Իրականացում Միջոցները	41
ԹեՄԱ 8. ՉԼՄ-ների Կիրառումը Տեղեկատվական Պատերազմներում	49
ԹեՄԱ 9. ԱՄՆ-ի Տեղեկատվական Զարգացումները Սկզբունքները: Չինական Փորձը Տեղեկատվական Պատերազմներում	63
ԹեՄԱ 10. Արևելյան Տեղեկատվական Զարգացումները Վերաբերված Շեղանակներ (2016 թ. Արևելյան Զարգացումները Պատերազմի Օրինակով)	71
ԹեՄԱ 11. Իրան-Ամերիկայի Տեղեկատվական Պատերազմները 21-րդ դարում	83
ԹեՄԱ 12. Հասարակական Զարգացումները եվ Իրանի Միջուկային Վարկանիշը	114
ԹեՄԱ 13. Իրան, Լիբիան, Սիրիան Դեմ Տեղեկատվական Պատերազմների Հասկացումները Վերաբերվածությունները «Տեղեկատվական Պատերազմներ եվ Դիվանագիտություն» Առարկայի ճիշդագիտ.	134

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՎ  
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ..... 139

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒ-  
ԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ ..... 141

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 142

## **Ներածություն**

Արդի միջազգային հարաբերություններում պետությունները մեծ կարևորություն են տալիս տեղեկատվական պատերազմներ վարելու մեխանիզմների արդիականացմանը և տեղեկատվական անվտանգության պահպանման հիմնախնդիրներին: Տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը և հեռահաղորդակցության միջոցների ժամանակակից ձեռքբերումները միջազգային անցուղարձեղում սեփական շահերը և նպատակները առաջ մղելու կարևոր գործիք են դարձել, ուստի պետությունները ջանք ու եռանդ չեն խնայում ունենալու արհեստավարժ «տեղեկատվական բանակ» և պաշտպանված տեղեկատվական ենթակառուցվածքներ: Վերջին տարիների համաշխարհային փորձը վկայում է, որ հակառակորդի դեմ գործողությունների իրականացման համար տեղեկատվական հոսքերի ազդեցությունը կարող է պետությունների ձեռքում հզոր զենք լինել, իսկ այդ զենքին դիմագրավելու ներուժ չունեցող պետությունները կարող են հայտնվել պարտվողների շարքերում:

Հայտնի է, որ իրական ռազմական գործողություններին նախորդում, զուգորդում և հաջորդում են տեղեկատվական - հոգեբանական գործողությունները, որոնց նպատակը հասցեատիրոջը ճնշելը կամ այս կամ այն չափով ազդեցության ենթարկելն է: Նման գործողությունները կարող են հանգեցնել հակառակորդի ուժերի պառակտմանը, կազմալուծմանը: Մեր օրերում հաղորդակցական-տեղեկատվական նորագույն միջոցների սրընթաց զարգացման պայմաններում «խաղի կանոններ» թելադրող պետությունները հակառակորդ և այլախոհ պետություններին միջազգային հանրության աչքում կարող են դարձնել վարկաբեկված, վտանգ ներկայացնող, ոչ ժողովրդավար և այլն: Այս առումով արդիական է ուսումնասիրել տեղեկատվական պատերազմների օրինակներ, մասնավորապես հայ-ադրբեջանական, իրանա-ամերիկյան, Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնել տեղեկատվական պա-

տերազմների իրականացման միջոցները, հասարակական կարծիք ձևավորելու սկզբունքները, տեղեկատվածին (ինֆոզեն) սպառնալիքների միջազգային վերահսկման միջոցները և այլն:

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել Ադրբեջանի կողմից հակահայ քարոզչության սկզբունքներին (2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրինակով) և իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմներին:

Վերջին տասնամյակներում Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը ակտիվորեն ներգրավված են տեղեկատվական պատերազմներում: Ադրբեջանական տեղեկատվական քաղաքականության դեմ պայքարում հայկական հանրապետությունները բավականին փորձ և գիտելիք ունեն: Սակայն օրեցօր փոփոխվող և զարգացող հաղորդակցության միջոցները, ինչպես նաև հակառակորդի կողմից սաստկացող քարոզչությունը անհրաժեշտություն են առաջացնում քայլելու ժամանակի փոփոխություններին համընթաց, ինչպես նաև պատրաստ լինելու ոչ միայն դիմագրավման, այլև՝ անհրաժեշտության դեպքում համարժեք հակահարվածի:

Իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմների ուսումնասիրումը կարևորել ենք այն հանգամանքով, որ ԻԻՀ-ն Հայաստանի Հանրապետության անմիջական հարևան, բարեկամ պետություն է, և նրա հետ կատարվող կարևոր իրադարձությունները կարող են որոշակի ազդեցություն ունենալ ինչպես տարածաշրջանում, այնպես էլ մեր հասարակության վրա: Այդ իսկ պատճառով նման հակամարտության բազմակողմանի ուսումնասիրումը կարող է օգտակար լինել: Իրանը, թերևս, միակ հարևան պետությունն է, որի հետ Հայաստանը չունի հակամարտության որոշակի եզրեր: Իրանում կայունության հաստատումը և ամրապնդումը միաժամանակ բխում է Հայաստանի շահերից: Իրանին վերագրվող բացասական տրամադրություններին երբեմն անդրադառնում են նաև ՀՀ-ի լրատվամիջոցները, քանի որ հաճախ են հղում կատարում արևմտյան աղբյուրներին: ԱՄՆ-ի կողմից Իրանի ոչ դրական իմիջի ներկայացումն ունի հստակ նպատակներ, սակայն նման մոտեցումը մեր հանրապետության շահերի արտահայտման տեսանկյունից կարող է լինել ոչ նպատակահարմար: Ուստի, մեր տեղեկատվական

ուղորտում արևմտյան լրատվամիջոցներին զուգահեռ տեղին կլինի ուշադրություն դարձնել նաև իրանական աղբյուրներին, ինչն էլ կնպաստի մեր հասարակության մեջ բազմակողմանի տեղեկատվության և օբյեկտիվ կարծիքի ձևավորմանը:

Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների ուսումնասիրումը կարևոր տեղեկություններ և գիտելիք է տալիս մեզ. հայկական հանրապետությունները, շրջապատված լինելով թշնամական երկրներով, հեռու չեն տեղեկատվական-հոգեբանական գրոհներից: Նաև՝ հայտնի լրատվամիջոցները, սեփական շահերով առաջնորդվելով, կարող են համապատասխան հասարակական կարծիք ստեղծել մեզանում: Ուստի, հետագա մարտահրավերներին դիմակայելու համար վերոնշյալ երկրների դեմ կիրառված օրինակը, տեղեկատվական պատերազմների նորագույն մեթոդների հետազոտումը կարող են օգտակար լինել մեզ համար: Վերոնշյալից բացի՝ ուսումնամեթոդական ձեռնարկում ուսումնասիրել և ներկայացրել ենք հետևյալը՝

- դեռևս հազարամյակներ առաջ պատմության էջերից հայտնի տեղեկատվական գործողությունների որոշ օրինակներ,
- միջազգային հարաբերություններում տեղեկատվածին (ինֆոգեն) սպառնալիքները և դրանց միջազգային վերահսկողության միջոցները,
- տեղեկատվական պատերազմների իրականացման հիմնական մեթոդները,
- տեղեկատվական պատերազմների միջազգային փորձը՝ հաշվի առնելով վերջին տարիների տարբեր երկրների անցած ուղին:

«Տեղեկատվական պատերազմներ» հասկացությունը, ի հայտ գալով 20-րդ դարի վերջին քառորդում, կարճ ժամանակամիջոցում բազում հեղինակների ուշադրության կենտրոնում է հայտնվել: Առանձնացնենք մի քանիսը, որոնք տեղ են գտել ուսումնամեթոդական ձեռնարկում. Մ. Լիբիկիի «Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը», Գ. Պոչեպցովի «Տեղեկատվական պատերազմներ, ռազմական-հաղորդակցական հետազոտությունների հիմունքներ», Գ. Հարությունյանի «ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային ան-



վտանգության համատեքստում»<sup>1</sup> և այլն: Իգոր Պանարինը, «Տեղեկատվական պատերազմներ և աշխարհաքաղաքականություն» գրքում քննարկելով ԱՄՆ-ի լրատվամիջոցների կողմից տարվող տեղեկատվական պատերազմների թեման, մատնանշում է դրանց որդեգրած մարտավարությունը, իրականացման մեխանիզմները, որոնք նպատակ են հետապնդում հակառակորդի նկատմամբ հասնելու տեղեկատվական առավելության: Է. Հերմանը, Ն. Չոմսկին «Արտադրական համաձայնություն»<sup>2</sup> աշխատության մեջ անդրադառնում են ԱՄՆ-ի բարձրակարգ լրատվամիջոցներին և քարոզչությանը: Նրանք նշում են, որ ԱՄՆ-ի հայտնի լրատվամիջոցներն ունեն բավականին մեծ լսարան, որոնք գործում են ծրագրված, իսկ տեղական լրատվամիջոցները քիչ թե շատ ընդօրինակում են նրանց կառուցվածքը: Այս բարձրակարգ լրատվամիջոցները որոշում են, իսկ մյուսներն՝ ընդօրինակում:

«Տեղեկատվական պատերազմներ» ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են առարկայական ծրագիրը, դասընթացի հիմնական նկարագրիչները, առարկայի հարցաշարը, թեմային վերաբերող գրականության ցանկը: Յուրաքանչյուր թեմայի վերջում առանձնացված են առաջադրանքներ:

---

<sup>1</sup> St'u **Libicki M.**, What is Information Warfare? National Defense University, Institute for National Strategic Studies, August,1995. **Почепцов Г.**, Информационные войны, Основы военно-коммуникативных исследований, М.: «Рефл-бук», «Ваклер», 2000. **Հարությունյան Գ.**, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» Գ-ԿՀ, Եր., Բավիղ, 2003:

<sup>2</sup> St'u **Edward S., Chomsky N.**, Manufacturing Consent: A Propaganda Model, «Pantheon Books», 1988, e-book, <http://www.thirdworldtraveler.com>:

**Թեմա 1.**  
**«Տեղեկատվական պատերազմներ» հասկացությունը  
և սահմանումը**

«Տեղեկատվական պատերազմ(ներ)» եզրույթը, համակարգված ձևով ի հայտ է եկել 20-րդ դարի վերջին տասնամյակներում: Դեռևս ԽՍՀՄ-ԱՄՆ «սառը պատերազմի» տարիներին «տեղեկատվական պատերազմ» ձևակերպումը օգտագործվել է ԱՄՆ պաշտպանության նախարարության գաղտնի փաստաթղթերում: 1976 թ. արևմտյան գիտնական Թոմաս Ռոնան իր զեկույցում «Բռնիզ» ընկերության համար օգտագործեց «Սպառազինությունների համակարգը և տեղեկատվական պատերազմ»<sup>3</sup> (Weapon Systems and information war) բնորոշումը, որի հիմնական թիրախ էին հաղորդակցության համակարգերը: Թոմաս Ռոնան կարևորում էր, որ ռազմական ոլորտում հաղորդակացության միջոցների նոր ձեռքբերումները պահանջում են ինտեգրացիոն նոր որակ: Տեղեկատվական արտահոսքերի բացառման միջոցով հակառակորդին չպետք է հասու լինեն հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված հաջողությունները: Նա գտնում էր, որ տեղեկատվական պատերազմը հակառակորդի վտանգավոր տեղեկատվական արտահոսքերից պաշտպանվածությունն է, միաժամանակ՝ հակառակորդի դեմ ուղղված տեղեկատվական հոսքերի ապահովումը:

Հետագա տարիներին «տեղեկատվական պատերազմներ» եզրույթը պաշտոնապես գործածվել է 1992-1993 թթ. ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության փաստաթղթերում:

1990-ական թթ. սկզբներին՝ Պարսից ծոցի պատերազմից հետո, այն սկսվեց լայնորեն շրջանառվել, և հասկացվում էր որպես մի գործողու-

---

<sup>3</sup> **Thomas P. Rona**, Weapon Systems and Information War. Boeing Aerospace Co., Seattle, WA, 1976, [http://www.dod.mil/pubs/foi/Reading\\_Room/Science\\_and\\_Technology/09-F-0070-Weapon-Systems-and-Information-War.pdf](http://www.dod.mil/pubs/foi/Reading_Room/Science_and_Technology/09-F-0070-Weapon-Systems-and-Information-War.pdf).

թյուն՝ ուղղված իրաքյան տեղեկատվական համակարգերի դեմ: Այս պատերազմից հետո ի հայտ եկան տեղեկատվական պատերազմի տեսաբաններ: 1995 թ. Մարտին Լիբիկին իր «Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը»<sup>4</sup> աշխատության մեջ ներկայացրեց իր մոտեցումները տեղեկատվական պատերազմների վերաբերյալ՝ առանձնացնելով դրանց 7 բաղկացուցիչ մասեր: Ի տարբերություն Թոմաս Ռոնայի, ով հիմնականում ռազմական ոլորտի հետ էր կապում տեղեկատվական պատերազմները, Մ. Լիբիկին կարևորեց և՛ ռազմական (ղեկավար-հրամանատարական, էլեկտրոնային, հետախուզական), և՛ հասարակական (հոգեբանական, հաքերային, տնտեսական-տեղեկատվական և կիրեռապատերազմներ) ոլորտները:

Տեղեկատվական պատերազմները արագ տարածվեցին գլոբալիզացիայի պայմաններում և ժամանակի պահանջների հետ փոփոխություններ կրեցին: 1998 թ. ԱՄՆ-ը կիրառության մեջ դրեց «Տեղեկատվական օպերացիաների միասնական դոկտրինը» (Joint doctrine for information operations, Washington) կամ, ըստ որոշ աղբյուրների, «տեղեկատվական պատերազմների միասնական դոկտրինը»: Այստեղ խոսվում է «տեղեկատվական գործողություններ» և «տեղեկատվական պատերազմներ» հասկացությունների մասին: «Տեղեկատվական գործողությունները» սահմանվում է որպես սեփական տեղեկատվական համակարգերի, կարևոր տեղեկությունների պաշտպանվածություն և հակառակորդի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման և փոխանցման խոչընդոտում:

«Տեղեկատվական պատերազմը» բնորոշվում է որպես տեղեկատվական գործողությունների համախումբ, որն ուղղված է հակառակորդի կառավարող համակարգի և դրա ղեկավարների դեմ: Այն ռազմական գործողությունների ժամանակ ենթադրում է վնասել հակառակորդի կառավարող ենթակառուցվածքները, իսկ խաղաղ պայմաններում կարող է ունենալ տեղեկատվական ներգործություն, ազդեցություն, որպեսզի

---

<sup>4</sup> **Libicki M.**, What is Information Warfare. National Defense University. ACIS paper 3. August 1995, <http://www.iwar.org.uk/iwar/resources/ndu/infowar/a003cont.html>.

առաջ մղի և ընդունելի դարձնի սեփական որոշումները, կամքը, տեսակետը:

Տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն (տեղեկատվական գործողությունների ամբողջություն) է հակառակորդի պետական ու ռազմական կառավարման համակարգի, նրա ռազմաքաղաքական ղեկավարության վրա: Խաղաղ ժամանակ այն կարող է նպաստել տեղեկատվական ներգործության միջոցով բարենպաստ, սեփական շահերին ծառայող՝ հակառակորդի որոշումների ընդունմանը, իսկ ռազմական գործողությունների ժամանակ՝ խանգարել հակառակորդի կառավարական ենթակառուցվածքի գործառությանը:

Տեղեկատվական պատերազմների մասնագետները, «տեղեկատվական պատերազմ» ասելով, նկատի ունեն գործողությունների համակարգ, որն ուղղված է հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական ենթակառուցվածքների վրա ազդեցություն գործելուն, սեփական տեղեկատվությունն ու տեղեկատվական համակարգերը պաշտպանելուն: Այս սահմանումից երևում է, որ տեղեկատվական պատերազմները ներառում են ոչ միայն տեղեկատվական հարձակումներ, այլև տեղեկատվական պաշտպանություն և անվտանգություն:

«Տեղեկատվական պատերազմներ» և «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Տեղեկատվական պատերազմը սուբյեկտն է, որի խնդիրն է խանգարել, շարքից հանել կամ ոչնչացնել տեղեկատվական անվտանգությունը (օբյեկտը): Տեղեկատվական անվտանգությունը կարելի է բնորոշել որպես հասարակության և ղեկավար մարմինների, պետության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածություն: Անհրաժեշտ է նշել, որ տեղեկատվական անվտանգությունը ներառում է ինչպես հասարակության և պետության տեղեկատվական միջավայրի անվտանգության պաշտպանվածությունը, այնպես էլ՝ տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության հիմնախնդիրները:

«Տեղեկատվական պատերազմների» ռուս հայտնի մասնագետ է Ի. Պանարինը գրում է. «Տեղեկատվական հակամարտությունը կողմերի միջև պայքարի ձև է, որը հատուկ ազդեցության միջոցների (քաղաքական, տնտեսական դիվանագիտական, ռազմական և այլն) և մեթոդների

կիրառումն է՝ հակառակորդի տեղեկատվական դաշտի վրա սեփական շահերի և նպատակների հասնելու համար»։ Նա տեղեկատվական պատերազմը բնորոշում է որպես տեղեկատվական հոսքերի կառավարման համար ստեղծված համակարգ, որի նպատակն է սեփական շահերին ծառայեցնելու համար տեղեկատվական - հոգեբանական միջավայրի ստեղծումը։ Այն նաև միջազգային քաղաքականության իրականացման մի միջոց է, որի նպատակն է նպատակահարմար ձևով ուղղորդել հասցատերերի գործողությունները։

Ռուս հեղինակներ Վ. Ա. Լիսիչկինը և Լ. Ա. Շելեպինը ավելացնում են, որ տեղեկատվական պատերազմները «որակապես նոր տիպի պատերազմներ են, որտեղ որպես զենք ծառայում է տեղեկատվությունը, իսկ պայքարն ընթանում է դեպի հասարակական գիտակցության նպատակաուղղված փոփոխումը»։

Տեղեկատվական պատերազմների բնորոշումը, կարելի է տալ այսպես՝ տեղեկատվական առավելության (Ա. Վ. Բեդրիցկին տեղեկատվական առավելությունը սահմանում է որպես տեղեկատվական պատերազմի նպատակ) հասնելու համար գործողություններ՝ ուղղված հակառակորդի տեղեկատվության, սեփական տեղեկատվական ոլորտի պաշտպանման հետ մեկտեղ, տեղեկատվական գործընթացների վրա ազդեցություն գործելուն, որտեղ գործունեության հիմնական նպատակն է հակառակորդի մոտ համապատասխան մշակույթի տարածումը («սեփական մշակույթի կողմից ինպլանտացիան մրցակցի սոցիումի մեջ»)։

Խոսելով «տեղեկատվական պատերազմների» մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն ոչ թե քարացած, մնայուն, այլև փոփոխվող, զարգացող գործողությունների համախումբ է։ Տեղեկատվական պատերազմների գործընթացում սկսվում, շարունակվում են համակարգի բաղադրիչների փոփոխություններ, այդ իսկ պատճառով բարդ է հստակորեն կանխատեսել, թե գործընթացն իր բազմաբանակ տարրերով ինչպիսի վերջնական տեսք կունենա։

## Առաջադրանքներ

### Ներկայացնել՝

• Ե՞րբ սկսեց կիրառվել «տեղեկատվական պատերազմ» եզրույթը:

• Ըստ Թոմաս Ռոնայի՝ ինչ է «տեղեկատվական պատերազմը»:

• Ինչպե՞ս են փոխկապակցված «տեղեկատվական պատերազմը» և «տեղեկատվական անվտանգությունը»:

• Ինչպե՞ս են սահմանում ռուս մասնագետները «տեղեկատվական պատերազմը»:

## **Թեմա 2.**

### **Տեղեկատվական պատերազմների տեսակները**

Տեղեկատվական պատերազմների հայտնի տեսաբան Մարտին Լի-բիկին գրում է, որ տեղեկավական պատերազմը՝ որպես պատերազմ մղելու առանձին տեխնիկա, գոյություն չունի, փոխարենը գոյություն ունեն տեղեկատվական պատերազմների դրսևորման որոշակի ձևեր: Առանձնացվում են տեղեկատվական պատերազմների 7 բաղկացուցիչ մասեր՝ ղեկավար-կառավարական, հետախուզական, հոգեբանական, հաքերային, տնտեսական, էլեկտրոնային և կիբեռպատերազմական<sup>5</sup>:

1. Ղեկավար-կառավարականը ժամանակակից նշանակությամբ ուղղորդում կամ ոչնչացնում է ղեկավարին՝ «կտրելով գլուխը» (կապի միջոցները):

2. Հետախուզական պատերազմի նպատակն է հավաքել անհրաժեշտ տեղեկություններ՝ պաշտպանելով սեփականը:

3. Էլեկտրոնային պատերազմներն ուղղված են էլեկտրոնային հաղորդակցության միջոցների դեմ՝ ռադիոկապ, ռադարներ, համակարգչային ցանցեր և այլն: Նրա կարևոր բաժինն է ծածկագրությունը (էլեկտրոնային տեղեկատվության կողավորում և ապակողավորում):

4. Հոգեբանական պատերազմների մեջ մտնում են քարոզչությունը, ուղեղների լվացումը, բնակչության տեղեկատվական վերամշակումը: Առանձնացվում են մշակութային պատերազմները:

5. Հաքերային պատերազմները «տեղեկատվական դարաշրջանի» երևույթ են: Դրանք դիվերսիոն գործունեություն են քաղաքացիական օբյեկտների դեմ և միաժամանակ պաշտպանում են հակառակորդի դիվերսիաներից: Հաքերների զենքը վիրուսներն են, օրինակ՝ «տրոյական

---

<sup>5</sup> Տե՛ս **Libicki M.**, What is Information Warfare? National Defense University, Institute for National Strategic Studies, August, 1995:

ծին»։ Լիբիկին հաքքերներին համարում է ԱՄՆ-ի լուրջ թշնամիներ, քանի որ ԱՄՆ-ը առավել «ցանցային» պետություն է։

6. Տնտեսական տեղեկատվական պատերազմ ասելով՝ Լիբիկին հասկանում է տեղեկատվական շրջափակում և տեղեկատվական իմպերիալիզմ։

7. Կիրեռապատերազմը պայքարն է համացանցում, որի հիմնական դրսևորումը կայքեր կոտրելն է։

Ըստ մասշտաբի՝ տեղեկատվական պատերազմները լինում են՝ գլոբալ, տարածաշրջանային, միջպետական և ներպետական, մրցակիցների, խմբավորումների, կազմակերպությունների, ընկերությունների միջև, առօրյա-կենցաղային և այլն։

Տեղեկատվական պատերազմներում թիրախը խոցելու տեսանկյունից կամ տեղեկատվությունը նպատակին հասցնելու համար հիմնական միջոցներն են ՁԼՄ-ները, հատուկ ծառայությունները, ոչ ֆորմալ կապերը, դիվանագիտական աղբյուրները, գործարար միջավայրը և այլն։

Ուղղորդված տեղեկատվության հիմնական նպատակ է համոզել, ազդել, պատասխան հակազդեցություն ցուցաբերել, վարկաբեկել, նոր արժեքներ և կանոններ ներդնել։

Ոլորտի մասնագետ Գ. Հարությունյանը առանձնացնում է 3 սերնդի տեղեկատվական պատերազմներ<sup>6</sup>։ 1-ին սերնդի պատերազմները դիտվում է միջուկային, կենսաբանական միջոցների կողքին՝ որպես դրանց կարևոր բաղկացուցիչ մաս։ Այստեղ տեղեկատվական գործոնը ինքնուրույն տարր չէ, այն զուգակցում, նախորդում կամ հաջորդում է իրական ռազմական գործողություններին։

2-րդ սերնդի պատերազմներն ինքնուրույն բնույթ ունեն, որտեղ կարևորվում են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները։ Վերջիններիս բաղադրամասերը կիրառվել են «գունավոր» հեղափոխությունների ժամանակ (2003 թ. Վարդերի հեղափոխությունը Վրաստանում, 2004 թ.՝ Նարնջագույն հեղափոխությունը Ուկրաինայում, 2005 թ. Կալչաների հեղափոխությունը Ղրղզստանում)։

---

<sup>6</sup> Տե՛ս **Հարությունյան Գ.**, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, <http://ysu.am/files>, Եր., 2009։



Համացանցի առկայությունը փոփոխեց ավանդական որոշ պատկերացումներ. կիբեռպատերազմները տեղեկատվական պատերազմներին հաղորդեցին որակական, քանակական արդյունավետություն: Այստեղ տեղեկատվական գործոնը ունի ինքնուրույն-նպատակաուղղված ապակառուցողական և կառուցողական ազդեցություն տեղեկատվական հոսքերի վրա:

3-րդ սերնդի տեղեկատվական պատերազմները հենված են «էֆ-ֆեկտների» վրա և հաճախ ներկայացնում են միաժամանակ մի քանի ոլորտներում սիներգետիկայի օրինաչափություններին ենթարկվող գործողությունների համախումբ: Ըստ, այսպես կոչված, «ցանցակենտրոն տեղեկատվական պատերազմների» հայեցակարգի՝ ելակետ է ընդունվում այն դրույթը, որ տեղեկատվական հասարակարգում պետության-հանրության հզորությունը պայմանավորված է առաջին հերթին իրագրությունների և տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ, այդ գործընթացների արագ ու համապատասխան արձագանքելու ունակությամբ: «Ցանց» հասկացությունը ենթադրում է հրաժարվել ինդուստրիալ հասարակարգին բնորոշ «կենտրոն-ծայրամաս» ստորակարգային (հիերարխիկ) կառավարման մեթոդից և ձևավորել հստակ կառուցվածք չունեցող համակարգ, որը ենթարկվում է ինքնազարգացման, ինքնակազմակերպման և ոչ գծային գործընթացների տրամաբանությանը: Նման համակարգում բացակայում է «կենտրոնը», սակայն համակարգը կազմող օղակներից յուրաքանչյուրն իր վրա կարող է վերցնել ղեկավարող «կենտրոնի» գործառնությունները: 3-րդ սերնդի տեղեկատվական պատերազմներում մանիպուլյացիայի տեխնոլոգիաները ակտիվ կիրառություն ունեն:

Կարող ենք առանձնացնել տեղեկատվական պատերազմների 2 հիմնական տեսակ՝ աշխարհաքաղաքական տեղեկատվական պատերազմներ և ներքին տեղեկատվական պատերազմներ: Աշխարհաքաղաքական տեղեկատվական հակամարտությունները պետությունների միջև ժամանակակից պայքարի միջոց են: Դրանք կարող են ընթանալ ինչպես պետությունների, այնպես էլ քաղաքակրթությունների միջև, որոնցում կարող են ներգրավվել տարածաշրջանային կամ դաշնակից

երկրներ: Աշխարհաքաղաքական տեղեկատվական հակամարտության նպատակն է՝

- խախտել հակառակորդ(ների) տեղեկատվական անվտանգությունը,
- կանխել իր դեմ նմանօրինակ գործողությունները,
- հասնել տեղեկատվական գերակայության,
- ուղղորդել (միջազգային) հանրության կարծիքը, դիրքորոշումը,
- հասնել որոշակի նպատակի:

Կարելի է առանձնացնել արևմտյան - իսլամադավան երկրներ հակասությունները կամ կապիտալիզմ-սոցիալիզմ հակամարտությունը և այլն: Վառ օրինակ են իրաքյան, իրանական, լիբիական, սիրիական իրադարձությունները, երբ դաշնակից երկրների լրատվամիջոցները անհավասար տեղեկատվական պատերազմ էին մղում: Այս գործընթացներում բավականին ազդեցիկ են ԱՄՆ-ի, նրա դաշնակից երկրների լրատվամիջոցները, որոնք բազմամիլիոնանոց լսարան ունեն: Նրանց համատեղ և միևնույն բնույթի տեղեկատվության պայմաններում աշխարհաքաղաքական տեղեկատվական պատերազմների արդյունավետությունը տարբեր վարչակարգերի հանդեպ բացասական մթնոլորտ ստեղծելու գործում ավելի ընդգծված է դառնում: Թիրախի հանդեպ տրամադրվածությունն ավելի համոզիչ դարձնելու համար արդյունավետության միջոցներ են կիրառվում.

- միևնույն տեղեկատվությունը ներկայացնում են ոչ միայն տվյալ երկրի, այլև համախոհ երկրների հեղինակություն ունեցող ՁԼՄ-ները, տեղեկատվական-վերլուծական կենտրոնները,
- ստեղծվում է տպավորություն, թե բոլորը խոսում են տվյալ թեմայի շուրջ,
- դրանց պարբերական շրջանառման պայմաններում ժամանակի ընթացքում տվյալ տեղեկատվությունը ամրապնդվում է մարդկանց գիտակցության մեջ և աստիճանաբար ընկալվում է որպես ճշմարտություն:

Ներքին տեղեկատվական պատերազմների վառ օրինակ կարելի է բերել հայաստանյան իրադարձությունները՝ կապված 2008 թ. հետընտ-

րական շրջանի հետ: Մարտիմեկյան իրադարձություններից հետո հայտարարվեց արտակարգ դրություն, որի հետևանքով առաջացավ տեղեկատվական վակուում: Արգելափակվեցին գրեթե բոլոր հայկական համացանցային կայքէջերը՝ բացառությամբ «Պանարմենիան» և «Նովուստի Արմենիայի», ինչպես նաև «Պանորամայի» գործունեությունը: Դադարեցվեց թերթերի հրատարակումը, իսկ հեռուստատեսությամբ և ռադիոյով ոչ մի խոսք չլսվեց ծավալված իրադարձությունների մասին, ինչը կբավարարեր տեղեկատվական պահանջը: Տեղեկատվական պատերազմների մասնագետները նշում են, որ դա իշխանությունների կողմից կիրառված ներքին տեղեկատվական պատերազմն էր: Այնուամենայնիվ, այդ օրերին տեղեկատվություն փնտրող քաղաքացին գտնում էր անհրաժեշտ տեղեկատվությունը: Օրեր անց իշխանությունները գիտակցեցին տեղեկատվական արգելափակման բացասական հետևանքները, և նվազեցվեցին ՁԼՄ-ների դեմ կիրառված սահմանափակումները:

Հետաքրքրական է, որ այդ օրերին Հայաստանում կատարվող բոլոր իրադարձություններին արագ արձագանքում էր ադրբեջանական կողմը: Պարզ է դառնում, որ կիրառված ներքին տեղեկատվական պատերազմը հարմար առիթ է արտաքին տեղեկատվական գրոհների համար:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Մարտին Լիբիլիի՝ տեղեկատվական պատերազմների 7 բաղկացուցիչ մասերը:
- Տեղեկատվական պատերազմների տեսակները՝ ըստ մասշտաբի:
- Երեք սերնդի տեղեկատվական պատերազմները՝ ըստ Գ. Հարությունյանի:
- Աշխարհաքաղաքական տեղեկատվական հակամարտության նպատակները:

### **Թեմա 3.**

#### **Տեղեկատվական գործողություններն անցյալում**

Մարդու էությանը բնորոշ է ձգտումը ճանաչելու շրջապատող աշխարհը և դրանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ ձեռք բերելու տեղեկություններ: Տեղեկատվության պահպանման և փոխանցման անհրաժեշտությունն է մարդկությանը դրդել ստեղծելու գրեր<sup>7</sup>:

Պատմության մեջ պահպանվել են տեղեկատվական գործողությունների տարբեր օրինակներ, որոնցից է Ողիսևսի տրոյական ձիու ստեղծումը: Երբ հույները 10 տարի պաշարել էին Տրոյան, նրանց չէր հաջողվում գրավել քաղաքը, Ողիսևսը մտածեց տեղեկատվական գործողություն, որի շնորհիվ հնարավոր եղավ գրավել քաղաքը: Նա իր գործակալ Սիոնիս ուղարկեց տրոյացիների հետ բանակցության, որն էլ համոզեց, թե փայտե ձին աստվածների (Աթենասի) մվերն է, պետք է բանդել քաղաքի դարպասները, որպեսզի ձին մտնի քաղաք: Փաստորեն, ապատեղեկատվության տարածմամբ հույները հասան հաջողության:

Ողիսևսի կողմից այս տեղեկատվական գործունեությունը մտավ տեղեկատվական պատերազմների դասագրքեր որպես ապատեղեկատվության տարածման փայլուն օրինակ, որի միջոցով հնարավոր է հասնել հաջողության:

Տեսաբանները հավաստում են, որ չինացի մասնագետները տեղեկատվական գործողությունների հմտություններին ծանոթ են եղել հազարամյակներ առաջ, և այսօր էլ տեղեկատվական հակամարտությունների չին մասնագետներն աշխարհում լավագույններն են: Տեղեկատվու-

---

<sup>7</sup> Պատմությունից հայտնի են տեղեկությունների փոխանցման մի շարք դեպքեր, ինչպիսիք են՝ աղավնիներով փոստը, կրակով, թմբուկներով, ազդանշաններ փոխանցելը: Դեռևս Ք.ա. 1-ին դարում Հռոմում Հուլիոս Կեսարի հրահանգով հրապարակվել են հատուկ տեղեկագրեր, որոնց վրա արձանագրվում էին կարևոր որոշումները և կատարվող իրադարձությունները: Հռոմում կարդացողը նստում էր բարձր տեղում, թելադրում էր նորությունները, իսկ մյուսները գրի էին առնում թելադրվածը: Ավելի ուշ շրջանում ի հայտ եկան պապիրուսն ու մագաղաքը:

թյունը՝ որպես համակարգված հասկացություն և ռազմարվեստի բա-  
ղադրիչ, առաջին անգամ հիշատակվել է չին ռազմավար և փլիսոփա  
Սուն Ցզիի (Ք.ա. 6-5-րդ դար) «Երկ ռազմարվեստի մասին»<sup>8</sup> աշխատու-  
թյան մեջ: Նա գտնում էր, որ հակառակորդի դեմ պայքարելու լավա-  
գույն միջոցներից է նրա նկատմամբ տեղեկատվական գործողություն-  
ների իրականացումը:

Չինացի գեներալն իր գրքում (Ք.ա. 544 - Ք.ա. 496) ասում է. «Եթե  
դու ունես բավարար տեղեկություններ և լավ գիտես և՛ քեզ, և՛ թշնամուդ,  
ապա կարող ես հաղթել հարյուրավոր ճակատամարտերում՝ առանց որ-  
և՛ պարտության: Եթե դու միայն քեզ գիտես ու չգիտես թշնամուդ, ապա  
կհաղթես կամ կպարտվես: Եթե դու ո՛չ քեզ գիտես, ո՛չ էլ բավարար չա-  
փով տեղեկություններ ունես թշնամուդ մասին, ապա անընդհատ  
վտանգների մեջ ես լինելու»: Սուն Ցզիի «ստեղծի՛ր հակառակորդի մոտ  
քառս, անկարգություն, և դու կհաղթես նրան» հայեցակարգի դրույթը  
կիրառվում է ամերիկյան «REND» կորպորացիայի կողմից երկրորդ  
սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգի հիմքում:  
Ընդհանուր առմամբ նա գտնում էր, որ անհրաժեշտ է՝

1. քայքայել այն լավը, որը գոյություն ունի հակառակորդ երկրում,
2. ներգրավել հակառակորդի հայտնի գործիչներին հանցավոր  
գործունեության մեջ,
3. գցել հակառակորդի ղեկավարության վարկը և անհրաժեշտ  
պահին հասարակության առաջ անարգանքի սյունին գամել,
4. այդ նպատակների իրականացման համար համագործակցել  
ամենաստոր և գարշելի մարդկանց հետ,
5. թշնամի երկրի բնակչության մեջ ընդհարումներ և վեճեր հրա-  
հրել,
6. երիտասարդությանը հանել ծերերի դեմ,
7. բոլոր միջոցներով խանգարել իշխանությունների աշխատանքը,
8. ամեն կերպ խոչընդոտել թշնամական բանակի կարգուկանոնին  
և մարտունակությանը,
9. շեղել հակառակորդի զինվորներին երգով ու երաժշտությամբ,

---

<sup>8</sup> **Սուն Ցզի**, Երկ ռազմարվեստի մասին, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., ՎՆ, էջ 68:

10. անել հնարավորը՝ արժեզրկելու համար թշնամիների ավանդույթները և թուլացնելու նրանց հավատը իրենց աստվածների նկատմամբ,

11. առատաձեռն լինել տրված առաջարկներում և նվերներով տեղեկություններ գնել,

12. ընդհանրապես չխնայել փողերը և խոստումները, քանի որ դրանք հիանալի արդյունք են տալիս:

Հայոց պատմության էջերում ևս ապատեղեկատվության և հակառակորդին ապակողմնորոշելու փալյուն օրինակներ կան, մասնավորապես Աշոտ Երկաթի մարտավարությունը 921 թ. Սևանի ճակատամարտում հաջողությամբ պսակվեց: Այստեղ թշնամուն ապակողմնորոշելու, նրա զգոնությունը թուլացնելու և անակնկալ հարձակում կազմակերպելու մարտավարությունը հնարավորություն ստեղծեց խուճապ ստեղծելու արաբների մոտ և ջախջախելու նրանց:

Ք.ա. 1-ին դարում պարթև արքա Հրահատ 3-րդը (Ք.ա. 38-32) դիմակայում էր հռոմեացի զորավար Անտոնիոսի արշավանքներին: Անտոնիոսը փորձում էր այդ արշավանքով վրեժխնդիր լինել պարթևներից՝ պարտություն կրելու և Կրասոսի գլուխը կտրելու համար: Անտոնիոսը ստիպեց հայոց արքա Արտավազդին իրեն գորք տրամադրել, որը Արտավազդի սրտով չէր:

Պարթևները մանրամասն տեղեկություններ ունեին հռոմեական զորքերի քանակի, շարժման ուղղությունների մասին: Մինչ ռազմական գործողություններ սկսելը պարթևական ավագանու ներկայացուցիչներից մեկը՝ զորավար Մոնեսը, պարթև արքայից դժգոհ լինելու պատրվակով փախչում է Հռոմ և ապաստան է խնդրում հռոմեացիներից: Անտոնիոսը նրան սիրով ընդունում է և հանձնում Ասորիքի 3 մեծ քաղաքների ղեկավարումը՝ խոստանալով մահ հաղթանակից հետո տալ պարթևական գահը: Սակայն հռոմեացիների արշավանքի նախօրեին Հրահատ 3-րդը ետ է կանչում Մոնեսին և նրան հանձնում իր զորքերի հրամանատարությունը, իսկ Անտոնիոսը հասկանում է, որ դա ընդամենը պարթևների կողմից կազմակերպված տեղեկատվական-հետախուզական խաղ է եղել, որի նպատակը տեղեկատվություն ստանալն էր: Սա վկայում է այն մասին, որ պարթևների հետախուզական ծառայությունը դրված էր

փայլուն հիմքերի վրա և մինչև մարտական գործողություններին անցնելը այս կամ այն միջոցով ապահովվել է անհրաժեշտ տեղեկատվությամբ:

13-րդ դարում Կենտրոնական Ասիայում համախմբվեցին մոնղոլները՝ գրավելով մեծ տարածքներ: Մոնղոլական ցեղերի առաջնորդ դարձավ Տիմուչինը: Նա հետագայում՝ 1206-1277 թթ., ստացավ Չինգիզ խան (մեծ խան) տիտղոսը: Սկզբում գրավեց որոշ չինական տարածքներ, այնուհետև պարտության մատնեց Իրանի խորեզմշահերին: Խորեզմշահերի տիրապետության տակ էր Իրանը՝ բացի իսմայիլականների տիրույթներից:

Հատկանշական էր, որ Չինգիզ խանը մանրակրկիտ պատրաստվում էր արշավանքներին: Ռազմական գործողություններին նախորդում էին՝

1. հետախուզական գործողությունները՝ լրտեսների, դիվանագետների և առևտրականների միջոցով: Հայտնի փաստ է, երբ Չինգիզ խանը պատրաստվում էր արշավանքի դեպի Խորեզմ, նա դիվանագետներ էր ուղարկում Խորեզմ, որոնք բանակցություններ վարելու պատրվակով արժեքավոր տեղեկություններ էին ստանում երկրի մասին:

2. Տարածվում էին իր սեփական բանակի և կարողությունների մասին ահասարսուռ տեղեկություններ, որոնք ընկճում էին հակառակորդի մարտական ոգին: Իր ընտրած մարտավարության շնորհիվ Չինգիզ խանը գրավեց Իրանի գլխավոր քաղաքները՝ հասնելով մինչև Անդրկովկաս և հարավուսական հողեր:

Պատմությունից հայտնի են նաև դեպքեր, երբ զորքի կողմից պաշարված բերդի մեջ անցք էր բացվում, որը հոգեբանորեն ճնշում էր պաշարվածներին: Վերջիններս էլ, տեղի տալով, անձնատուր էին լինում: Հատկանշական է, որ կիրառվել է նաև կենսաբանական զենք<sup>9</sup>:

---

<sup>9</sup> Հայտնի է մոնղոլների կողմից Կաֆայի (Դրիմ) պաշարումը, որտեղ հիշատակվում է կենսաբանական զենքի գործածման առաջին դեպքերի մասին: Տիֆով հիվանդ կամ մահացած մարդկանց կատապուլտ էին անում քաղաքի պարիսպներից ներս, որի արդյունքում համաճարակի պատճառով քաղաքն անձնատուր եղավ, իսկ փրկվածները եկան Հյուսիսային Իտալիա: Եվրոպայով մեկ սկսեց մղեկգնել բժավոր տիֆը:

Գարեգին Նժդեհի խոհերում տեղ են գտել «Ահավարության» (այսինքն՝ ասի, սարսափի ազդեցությամբ մարտի վարման) սկզբունքները: Վերջինս մարտի դաշտում հաղթանակը ապահովելու համար երեք նախապայման էր առանձնացնում՝ զորքի թվաքանակ, զենքի արդիականություն և բարոյահոգեբանական գերազանցություն, սակայն որպես վճռորոշ նախապայման շեշտում էր վերջինը՝ դրանով հենց բացատրելով Սյունիքում իր վարած հերոսամարտերի հաջողությունը: Նա գտնում էր, որ հարյուր զինվորի ուժը հավասար չէ հակառակորդի հարյուր զինվորի ուժին: Դա կախված է, թե ով ինչպիսի մարտական ոգի ունի, ինչ մթնոլորտ է տիրում միջավայրում, ով է ղեկավարում այդ հարյուր զինվորին և այլն:

Սյունիքում ձեռք բերված ռազմական հաջողությունների պատճառների թվում Գ. Նժդեհն առանձնացնում է մաս իր մշակած և կիրառած՝ «գայլի ռազմավարություն», «գրոհող ժայռեր և պայթուցիկ տակառներ», «մուրճ և ոստայն», «որսորդ» և մարտավարական այլ հնարները, որոնք արդյունավետորեն կիրառում էին նրա դավիթբեկյան ուխտերը և գայլավաշտերը:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Ողիսևի տեղեկատվական գործողությունը:
- Մուն Յզիի դրույթները՝ հակառակորդին շեղելու և նրա վրա ներգործության հնարավորությունների մասին:
- Ինչպե՞ս էին մոնղոլները ձեռք բերում տեղեկություններ հակառակորդի մասին և ինչպե՞ս էին ընկճում հակառակորդի մարտունակությունը:



#### **Թեմա 4.**

### **Տեղեկատվական գործունը 20-րդ դարի միջազգային հարաբերությունների պրակտիկայում**

20-րդ դարասկզբում մի շարք երկրներ սկսեցին կարևորել տեղեկատվական գործունի դերը միջազգային քաղաքական գործընթացներում: Տեսանելի դարձավ, որ տեղեկատվական համակարգի զարգացման և տեղեկատվական սպառնալիքներին դիմակայելուն մեծապես առնչվում է յուրաքանչյուր պետության առաջընթաց:

Առաջին աշխարհամարտի տարիներին Մեծ Բրիտանիայում ստեղծվեց տեղեկատվության նախարարություն, որի նպատակն էր ակտիվ քարոզչություն իրականացնել Անտանտի հակառակորդ երկրների դեմ: Տեղեկատվական գործողությունների համակարգման և իրականացման մեկ այլ հզոր կառույց էր 1920 թ. բոլշևիկների կողմից ստեղծված ագիտացիոն-պրոպագանդիստական բաժինը՝ «ագիտպրոպը»:

1933 թ. նացիստների իշխանության գալուց հետո Գերմանիայում ստեղծվեց Ժողովրդական լուսավորության և քարոզչության նախարարություն, որը ղեկավարեց Յոզեֆ Գեբբելսը: Մտցվեց խիստ գրաքննություն, վերահսկվեց մամուլը, փակվեցին «ոչ բարեհամ» թերթեր, այլախոհները վտարվեցին, հրեաների հետ կապ ունեցողները, ամուսնացածները հեռացվեցին կարևոր պաշտոններից և այլն: Քարոզչության նախարարությունն ուներ իր բաժինները՝ վարչական, կուսակցական քաղաքականության, մշակութային, կինոարտադրության, գրական-զեղարվեստական, տեխնիկական, տնտեսական և այլն: Գեբբելսին հաջողվեց հսկողություն սահմանել լրատվամիջոցների գործունեության և դրանց բովանդակության վրա: Հատուկ ուշադրություն էր դարձվում ռադիոհեռարձակումներին, քանի որ ռադիոհաղորդումները կարող էին օպերատիվ կերպով հասցնել համապատասխան տեղեկատվությունը թիրախային լսարաններին: Ռադիոն այն լրատվամիջոցն էր, որը կարող էր հատել պետական սահմանները:

Հատկանշական է, որ բանակում ստեղծվեցին հատուկ տեղեկություններ հավաքող և հաղորդող խմբեր, որոնք, գեներլին վարժ տիրապետելուց բացի, ունեին նաև գիտելիքներ գրականությունից, լուսանկարչությունից, կարող էին լրագրողական գործունեություն ծավալել, միևնույն ժամանակ զանգվածային լրատվամիջոցների հետ կապող օղակ էին բանակում, հակառակորդի դեմ ագիտացիոն կոչեր էին տարածում և այլն: 1943 թ. նրանց թիվը բանակում կազմում էր 15.000:

Չանգվածային լրատվամիջոցները գործում էին ոչ միայն գերմաներենով, այլև օկուպացված երկրների լեզուներով: Սա հատուկ մշակված տեղեկատվական քաղաքականություն էր, որի միջոցով ընկալելի էր դառնում զավթված երկրի բնակչության համար տրամադրված տեղեկատվությունը՝ մեծապես նպաստելով գերմանական հաջողություններին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ում և Գերմանիայում տարվում էր հատուկ քարոզչություն, որտեղ կողմերը գովաբանում էին սեփական առավելությունները և անընդմեջ քննադատության էին ենթարկում հակառակորդի թերացումները: Խորհրդային Միության և Գերմանիայի միջև քարոզչական ոլորտում կային թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ: Այս երկու ամբողջատիրական երկրներում էլ կային կենտրոնական հատուկ մարմիններ՝ քարոզչական գործունեություն իրագործելու համար: Գերմանիայում լուսավորության և քարոզչության նախարարությունն էր, իսկ ԽՍՀՄ-ում՝ Կենտրոնական կոմիտեի քարոզչության և ագիտացիայի վարչությունը: Տարբերությունն այն էր, որ ԽՍՀՄ-ում կուսակցականությունն էր կարևորվում քարոզչություն սկզբունքներում: Սակայն Գերմանիայում այն ավելի բարձր մարմին էր պետական համակարգում՝ լինելով նախարարություն, քան ԽՍՀՄ-ում էր, թեև այստեղ ևս կուսակցականությունը կարևորվում էր:

Ի տարբերություն Գերմանիայի և Խորհրդային Միության քարոզչական քաղաքականության՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տոտալիտար համակարգ ունեցող այս երկրներում քարոզչական քաղաքականությունը տարվում էր սեփական հնարավորությունների գովերգմամբ և հակառակորդի փնովմամբ, իսկ անգլոամերիկյան թևը այլ կերպ էր վարվում. նրանք ոչ թե փնովում էին հակառակորդին,

այլ կոչ էին անում չթերագնահատել թշնամուն՝ ինքնակատարելագործվելու նպատակով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «սառը պատերազմի» տարիներին տեղեկատվական գործոնի դերը շարունակեց աճել: Տեղեկատվական գործողություններ վարելու ուղղությամբ ակտիվ քայլեր սկսեցին մշակել լիբերալ և կոմունիստական գաղափարախոսությունների ներկայացուցիչները: Հակառակորդի գիտակցության դեմ մղվող տեղեկատվական գործողությունների կարևոր օրինակ է 1945 թ. ԱՄՆ Սենատում Սովետական Միության կազմաքանդման նպատակով Ալեն Դալլասի (հետագայում՝ ԱՄՆ-ի ԿՀՎ ղեկավար) քաղաքական ծրագիրը, որտեղ նշվում էր հետևյալը:

1. Քառս սփռելով՝ մենք իրական արժեքները աննկատ կփոխենք կեղծով, կստիպենք հավատալ այդ կեղծ արժեքներին:

2. Կթուլացնենք արվեստը, գրականությունը: Գրականությունից և արվեստից մենք դուրս կմղենք նրա հասարակական էությունը, նկարիչներից դուրս կմղենք ժողովրդի ոգու խորքում կատարվող գործընթացների պատկերման և ուսումնասիրությունների ցանկությունը, իսկ գրականությունն ու կինոն պետք է պատկերեն և փառաբանեն միայն մարդային ամենագազրելի զգացումները:

3. Նոր սերնդին կթունավորենք հակասական-բարոյական ազդեցություններով, անբարոյականությամբ:

4. Կարծիքները կթունավորենք ռադիկալ տեսություններով, բանաձևերով և գաղափարներով, սոցիալական դասակարգերի միջև աղմուկ, իրարանցում, քառս կստեղծենք, կսերմանենք ատելություն և անվստահություն:

5. Կտարածենք անիմաստ գաղափարներ և ազգաբնակչությանը կշեղենք անիրականամալի գաղափարներով: Կքարոզենք ճոխություններ, շվայտ կյանք: Կզբաղեցնենք մեծամասնության ժամանակը տոներով և խաղերով:

6. Կքայքայենք ընտանեկան կյանքը:

7. Մենք պետք է օգնենք և բարձրացնենք այնպիսիներին, որոնք կսկսեն սերմանել և ներարկել մարդկային գիտակցության մեջ ցանկա-

սիրության, բռնության, սադիզմի, դավաճանության, այլ խոսքով՝ ցանկացած անբարոյականության պաշտամունք:

8. Յածր խավի մարդկանց կառավարիչներ կնշանակենք: Վերին խավի հոգևոր ուժն ամբողջովին կնստնացվի:

9. Հարգանքը սրբությունների նկատմամբ կբայքայվի: Հեղինակավոր, հարգանք վայելող անձնավորությունների մասին կհորինենք ստոր պատմություններ:

10. Մենք աննկատ, բայց ակտիվորեն կօժանդակենք հիմարությանը, կաշառակերությանը, անսկզբունքայնությանը: Ազնվությունն ու օրինավորությունը կծաղրվեն, կդառնան անցյալի մնացուկ ու ոչ մեկին այլևս պետք չեն լինի: Մենք աստիճանաբար կսերմանենք ստահակություն ու անամոթություն, միմյանց նկատմամբ վախ, դավաճանություն ու թշնամություն: Միայն քչերը, շատ քչերը կենթադրեն կամ կհասկանան, թե ինչ է կատարվում իրականում, բայց նման մարդկանց մենք կդնենք անօգնական վիճակի մեջ, կդարձնենք խեղկատակ, կգտնենք միջոցներ՝ նրանց զրպարտելու և հասարակության տականք հայտարարելու համար:

Միջուկային զենքի առկայության պայմաններում փոխվեցին որոշ դրույթեր երկու ճամբարների միջև. կողմերը հասկացան, որ այդ զենքի կիրառումը կործանարար է ողջ մարդկության համար, ուստի դրան հետևեցին անուղակի-միջնորդավորված պատերազմները (երրորդ երկրի միջոցով), որոնց նպատակն էր առաջին հերթին խոցել հակառակորդի հոգևոր-գիտակցական, հետո՝ նյութական կարողությունները: «Սառը պատերազմի» տարիներին աճեց թերթերի, ռադիոյի և հեռուստատեսության (70-ականներից՝ ԶԼՄ-ների) դերը քաղաքականության մեջ: «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը տեղեկատվական գործողությունների վառ օրինակ է:

1. Ամերիկայի ձայնը պետք էր տեղեկատվության հուսալի աղբյուր հանդիսանար:

2. Ամերիկայի ձայնը պետք ներկայացներ Միացյալ Նահանգներն ամբողջովին, այլ ոչ թե որևէ ոլորտ ամերիկյան հասարակության մեջ՝ դրանով տալով հավասարակշռված պատկերացում ամերիկյան մտքի և ինստիտուտների վերաբերյալ:

3. Ամերիկայի ձայնը Միացյալ Նահանգների քաղաքականության մասին պետք է հայտներ պարզ և արդյունավետ տեղեկություններ, ստեղծեր հաստատուն կարծիք սեփական քաղաքականության մասին:

Որոշ մասնագետներ պնդում են, որ «սառը պատերազմում» ԽՍՀՄ կրած պարտության հիմքում ընկած էին տեղեկատվական ոլորտում արևմտյան ուժերի հաջողությունները և սոցիալիստական ճամբարի թերացումները:

Արդեն 90-ական թթ. ի հայտ եկան տեղեկատվական պատերազմների տեսաբաններ, որոնք դեռևս չունեին մերօրյա պատկերացումները տեղեկատվական պատերազմների մասին: Այս շրջանում տեղեկատվական պատերազմներն ունեին որոշակի ուղղվածություն, այն է՝ փոփոխել հակառակորդի գիտակցությունը, թուլացնել դիմակայողների կամքը, ներգործություն ունենալ այն մարդկանց վրա, որոնք ընդունում են կարևոր որոշումներ և այլն:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ի հայտ եկան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ կիբեռքաղաքականությունը, նոոքաղաքականությունը, մեդիաքաղաքականությունը<sup>10</sup>:

«Կիբեռքաղաքականություն» եզրույթը կիրառել է Դևիդ Ռոտկոպը (1998 թ.): Նա գտնում էր, որ քաղաքականության ավանդական սուբյեկտները (պետությունը, հատուկ կամ դիվանագիտական կառույցներ) կորցրել են տեղեկատվությանը տիրապետելու մենաշնորհը: Իսկ համացանցի շնորհիվ այսօր բոլորը կարող են տիրապետել այդ տեղեկատվությունը: Վաղվա ռեալպոլիտիկը կիբեռքաղաքականությունն է:

«Նոոքաղաքականություն» (գիտելիքների քաղաքականություն, 1999 թ.) եզրույթը կիրառել են Ջոն Արքիլը և Դևիդ Ռոնֆելդը: Այն մեծապես վերաբերում է արդի միջազգային պրակտիկային և հաճախ անվանվում է փափուկ ուժի կիրառման քաղաքականություն: Եզրույթի հիմնադիրները գտնում են, որ քաղաքականության նոր սուբյեկտները՝ միջազգային կազմակերպությունները, ՁԼՄ-ները, ահաբեկչական և հանցավոր կառույցները, ձեռք են բերել գիտելիքային/տեղեկատվական

---

<sup>10</sup> Տե՛ս **Հարությունյան Պ.**, Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2286](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2286), 02.09.2005:

ռեսուրսներ, ինչը թույլ է տալիս նրանց վարել ինքնուրույն քաղաքականություն գլոբալ տեղեկատվական դաշտում:

«Մեդիաքաղաքականություն» եզրույթի հեղինակը Լի Էդվարդսն է (2001 թ.): Նա գտնում է, որ հեռուստատեսությունը և համացանցը վերածվել են ներքին և արտաքին քաղաքականության կարևոր գործոնի:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Ինչպե՞ս էր վերահսկվում տեղեկատվությունը Գերմանիայում մացիստների իշխանության գալուց հետո:

- Ալլեն Դալլասի՝ հակառակորդի դեմ մղվող տեղեկատվական գործողությունների ծրագիրը:

- Միջուկային զենքի առկայության պայմաններում ի՞նչ սկզբունքային դրույթներ փոփոխվեցին լիբերալ և կոմունիստական գաղափարախոսությունների ներկայացուցիչների մոտ:

- Ի՞նչ է «կիբեռքաղաքականությունը», «նոքսաղաքականությունը», «մեդիաքաղաքականությունը»:

## **Թեմա 5.**

### **Տեղեկատվածին (ինֆոզեմ) սպառնալիքները և դրանց միջազգային վերահսկողության միջոցները**

Բոլոր ժամանակներում յուրաքանչյուր պետության գլխավոր հիմնախնդիրներից է եղել պաշտպանել երկրի անվտանգությունը: Պետության անվտանգություն մեջ կարևոր տեղ են զբաղեցնում՝

- ռազմաքաղաքական անվտանգությունը,
- սոցիալ-տնտեսական անվտանգությունը,
- տեղեկատվական անվտանգությունը:

Այս բաղադրամասերը փոխկապակցված են միմյանց հետ, իսկ նրանց միջև սահմանները շատ պայմանական են: Այս երեք տարրերից որևէ մեկի անտեսումը կարող է թերի դարձնել պետության անվտանգությունը:

Ավանդաբար ընդունված է համարել, որ անվտանգության համակարգի գազաթում է ռազմական ոլորտը (ռազմական անվտանգության հետ է հիմնականում նույնացվում «անվտանգություն» հասկացությունը), որից ածանցվում են մյուս ոլորտները: Ժամանակակից զարգացումները ստիպում են տեսաբաններին հրաժարվել ավանդական մոտեցումներից և անվտանգության ապահովման գործում ընդունել հասարակության՝ ոչ ռազմական ոլորտների կենսագործունեության կարևորությունը, որի պայմաններում անվտանգության համակարգը ներկայանում է ոչ թե բուրգի, այլ ցանցի տեսքով, ուր կենտրոնում (այլ ոչ գազաթին) գտնվող տեղեկատվական անվտանգությունը փոխկապակցում է անվտանգության համակարգի մյուս բաղադրատարրերին<sup>11</sup>:

Տեղեկատվական անվտանգությունը կարելի է բնորոշել որպես հասարակության, ղեկավար մարմինների, պետության տեղեկատվական

---

<sup>11</sup> Տե՛ս **Հարությունյան Գ.**, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Եր., Նորավանք ԳԿԿ, 2002:

միջավայրի պաշտպանվածություն: Տեղեկատվական անվտանգությունը ներառում է նաև տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության խնդիրները:

Հասարակության զարգացման ներկայիս փուլին բնորոշ է տեղեկատվական ոլորտի աննախադեպ զարգացումը, որի համար գիտական գրականության մեջ հաճախ շրջանառվում է «տեղեկատվական հասարակություն» եզրույթը: Այսօր տեղեկատվական համակարգի զարգացման մակարդակից մեծապես կախված են ցանկացած պետության և ազգի քաղաքական, գաղափարախոսական, հոգեբանական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների անվտանգությունն ու առաջընթացը, և տեղեկատվական գործոնի կարևորությունը ժամանակի հետ միայն աճելու է: Տեղեկատվական հասարակությունը, ըստ ժամանակակից սոցիոլոգիայի, քաղաքակրթության զարգացման արդի փուլն է: Ընդունված է առանձնացնել հասարակության զարգացման հետևյալ փուլերը՝

- ավանդական կամ ագրարային հասարակություն (բնորոշվում է զարգացման ցածր տեմպերով, աշխատանքի հստակ բաժանմամբ, որի հիմքում ընկած են գյուղատնտեսությունը, հողագործությունը),
- արդյունաբերական հասարակության մեջ գյուղատնտեսությամբ զբաղվում է հասարակության չնչին մասը, իսկ հիմնական մասը զբաղվում է արդյունաբերությամբ և որոշ չափով էլ ծառայությունների մատուցմամբ: Կարևորվում է տեխնիկայի կիրառումը հասարակական գործունեության տարբեր ոլորտներում:
- Հետարդյունաբերական հասարակության հիմքում ընկած է ծառայությունների մատուցումը, ինչպես նաև արդյունաբերությունը, իսկ գյուղատնտեսությամբ զբաղվում է հասարակության չնչին տոկոսը: Այս փուլում կարևոր տեղ է զբաղացնում համակարգերի ավտոմատացումը, իսկ որպես հիմնական գործոն հանդես է գալիս գիտելիքը: Հետարդյունաբերական հասարակության մեջ առանձնանում է «տեղեկատվական հասարակություն» փուլը: Ըստ տեղեկատվական հասարակության հայեցա-



կարգի՝ հասարակական կյանքում կարևորվում է առաջին հերթին տեղեկատվության և գիտելիքի դերը, մեծանում է հաղորդակցության դերը և «համակարգչայինության» չափաբաժինը, ստեղծվում է գլոբալ տեղեկատվական տարածություն, որն ապահովում է մարդկանց տեղեկատվական պահանջները:

Պետության տեղեկատվական կառույցները պետք է համապատասխանեն ազգի արժեքային համակարգին, նրա որդեգրած ուղուն, հակառակ դեպքում՝ օտար տեղեկատվական համակարգի առկայության պայմաններում, այն կարող է հանգեցնել բացասական հետևանքների, ինչպիսիք են ազգի ինքնության խեղաթյուրումն ու կործանումը:

Ինֆոգեն կամ տեղեկատվածին սպառնալիքների մասին այս կամ այն չափով պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դրա և ազգային շահերի համադրումը:

Ինֆոգեն սպառնալիքները լինում են 2 հիմնական տեսակի՝ տեխնիկական բնույթի (տեղեկատվական տեխնիկական համակարգեր) և հոգևոր-գաղափարական բնույթի (անհատի, հասարակության, ազգի, պետության գիտակցություն, հոգևոր, քաղաքակրթական արժեքներ): Հոգևոր ոլորտի ինֆոգեն սպառնալիքները կարող ենք բաժանել արտաքին և ներքին դասի:

**Արտաքին** ինֆոգեն սպառնալիքների աղբյուրներ են՝

ա. մրցակից կամ հակառակորդ պետությունները, կազմակերպությունները,

բ. սեփական շահեր հետապնդող և ուրիշների շահերը անտեսող երկրները կամ կազմակերպությունները,

գ. տեղեկատվական դաշտում առկա բացասական տեղեկատվական հոսքերը:

**Ներքին** ինֆոգեն սպառնալիքների աղբյուրներ են արտաքին պաշարներից օգտվող քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները, ՁԼՄ-ները, ազգային շահերի և մարտավարության մասին հստակ պատկերացում չունեցող մարմինները:

Ընդհանուր առմամբ ինֆոգեն սպառնալիքների շարքում կարելի է առանձնացնել հետևյալ գործոնները՝

1. հակառակորդի մշակույթի հանդեպ բացասական վերաբերմունքի ստեղծում,

2. պետության միջազգային հեղինակության գցում,

3. պետության շահերի վնասում քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում

4. հասարակության շարքերում անվստահության, կասկածամտության սերմանում, հասարակական գիտակցության մանիպուլյացիա,

5. պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվության տարածում, նրանց հեղինակազրկում,

6. սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում,

Տեղեկատվածին սպառնալիքի առկայությունը հնարավոր է ի հայտ բերել և կանխարգելել մի քանի ձևերով: Ինֆոզեն սպառնալիքները բացահայտելու համար նախ անհրաժեշտ է հստակ իմացություն տվյալ պետության վերաբերյալ այլ տերությունների հետ շահերի համընկման կամ բախման տեսանկյունից.

- ինֆոզեն սպառնալիքներից խուսափելու համար պետությունները մշակում են տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական սպառնալիքների դեմ պայքարի համապատասխան հայեցակարգեր: Իսկ գործնականում փորձված միջոց է դեկավար մարմիններ- հատուկ կառույցներ- վերլուծական կենտրոններ արդյունավետ համագործակցությունը,
- տեղեկատվական դաշտի շարունակական մշտադիտարկման (մոնիթորինգ) միջոցով,
- խորը, բազմակողմանի վերլուծության, ինչպես նաև հնի և նորի համեմատական վերլուծության միջոցով: Տեղեկատվական գործողությունների վերլուծությունը ունի նաև որոշակի կանխատեսող բնույթ: Այն կարող է բացահայտել ողջ գործընթացի ռազմավարական ուղղությունները: Առավել քան այլ ձևերով կատարվող նման վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել հեղինակի իրական նպատակային գործողությունների մասին,

- հանրության շարքերում շարունակական ճշգրիտ տեղեկատվության ապահովման միջոցով վստահության սերմանմամբ,
- ավանդական օպերատիվ-քննչական միջոցառումների միջոցով: Տեղեկատվական անվտանգության մասնագետ Ս. Մարտիրոսյանը նշում է, որ ցանցային անվտանգությունը ամենադիմամիկ զարգացող ոլորտներից է: Առաջիկայում նոր տիպի դժվարություններ են առաջանալու հետևյալ ոլորտներում.
  - գրոհներ նոր տեխնոլոգիաների դեմ,
  - գրոհներ սոցիալական ցանցերի դեմ,
  - առցանց (օնլայն) գրոհներ, մասնավորապես բանկային ծառայությունների դեմ:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Պետության անվտանգության հիմնական բաղադրիչները:
- Ինչպե՞ս է բնորոշվում «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը:
  - Ինֆոգեն սպառնալիքների հիմնական տեսակները:
  - Ինֆոգեն սպառնալիքների վերահսկողության ինչպիսի՞նք միջոցներ կան:

## **Թեմա 6.**

### **Տեղեկատվական գործընթացները և դիվանագիտությունը**

Տեղեկատվական պատերազմների ռուս մասնագետ Ի. Պանարինը գտնում է, որ դիվանագիտական ոլորտը՝ որպես տեղեկատվական պատերազմների իրականացման դաշտ, առանձին և կարևոր տեղ է զբաղեցնում: Հեղինակն առանձնացնում է տեղեկատվական հակամարտության իրականացման հետևյալ հիմնական հարթակները՝ քաղաքական, դիվանագիտական, ֆինանսատնտեսական, ռազմական:

Դիվանագիտությունը բոլոր ժամանակներում եղել է և մնում է փոխհամաձայնության գալու արվեստ: Դիվանագիտության կարևորության մասին նշում են, որ գորահրամանատարները հաղթում են ճակատամարտերը, իսկ պատերազմները՝ դիվանագետները:

Դիվանագիտությունը կամ դիվանագիտական գործունեությունը տեղեկատվական գործոնին առնչվում է հիմնականում 2 առումով: Առաջինը տեղեկատվության հավաքումն է, մշակումը և վերլուծումը, իսկ երկրորդը՝ տեղեկատվության անհրաժեշտ ուղղորդումը, տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու հատկությունը՝ լինի երկրի ներսում, թե արտաքին քաղաքականության ոլորտում: Փաստորեն, այս երկրորդ գործառնությունը դիվանագիտությունը հասարակական կարծիքի վրա ներգործելու և որոշակի հասարակական կարծիք ձևավորելու հատկություն ունի: Անհրաժեշտ է ավելացնել, որ դիվանագետի ներկայացրած տեղեկատվությունը պետք է լինի արժանահավատ, ծանրակշիռ, լիարժեք և արդիական: Կարելի է առանձնացնել այս շարքում հատկապես «կանխատեսող» տարրեր պարունակող տեղեկատվությունը, որը թույլ է տալիս պատկերացում կազմել հետագա զարգացումների մասին և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր: Փաստենք, որ դիվանագիտական աշխատանքը ոչ միայն տեղեկատվության հավաքում, վերլուծում է, այլև մշակված տեղեկատվության փոխանցում և տարածում: Նման տեղեկատվությունը կարող է լինել այս կամ այն չափով «ուղղորդված»՝ լինի դա ներքին,

թե արտաքին լսարանի համար: Տեղեկատվությունը տարածելու և «ուղղորդված տեղեկատվությունը» լսարանին հասցնելու համար անհրաժեշտ են մի քանի նախապայմաններ՝

- պատկերացում տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադրության վերաբերյալ,
- համակարգված գիտելիքներ հիմնական զանգվածների մտածելակերպի և տրամադրությունների մասին,
- հոգեբանության իմացություն՝ արդյունավետ գործելու համար:

Նման իմացությունը, սակայն, լիովին բավարար չէ «ուղղորդված տեղեկատվությունը» լսարանին արդյունավետ հասցնելու համար: Անհրաժեշտ է այդ ամենի հանգամանալից, մանրամասն ու բազմակողմանի իմացություն, իսկ հակառակ դեպքում «ուղղորդված տեղեկատվությունը» կամ քարոզչությունը կարող է այլ արդյունքներ ունենալ: Դրավա օրինակն է ՌԴ - ԱՄՆ հարաբերությունների մասին «ԱՄՆ - 2000 թ.» զեկույցում տեղ գտածն առ այն, որ Ռուսաստանում կտրուկ աճել են հակաամերիկյան տրամադրությունները 1991 թվականից հետո, ինչպիսին չէր եղել մույնիսկ «սառը պատերազմի» տարիներին: Նշված իրողությունը կարելի է բացատրել նրանով, որ ամերիկյան «ուղղորդված տեղեկատվությունը» չէր կարողացել կամ հաշվի չէր առել ռուսական իրականության ճիշտ պատկերացումը հատկապես սոցիալ-հոգեբանական առումով և ռուսական մենթալիտետը այն դիվանագետների կողմից, որոնք մշակել էին այդ «ուղղորդված տեղեկատվությունը»:

«Տեղեկատվական հասարակության» պայմաններում, երբ փոփոխության են ենթարկվել և մեծացել տեղեկատվության ծավալները, նոր իրադրություն է ստեղծվել դիվանագիտական գործընթացներում: Իհարկե, դիվանագիտական գործունեության ավանդական միջոցները պահպանում են իրենց արդիականությունը, սակայն նոր մեթոդներին տիրապետելը դառնում է հրամայական: Եթե նախկինում միայն դիվանագետներն էին քաջատեղյակ աշխարհի այս կամ այն հատվածում տեղի ունեցող անցուդարձերին, ապա ներկա պայմաններում յուրաքանչյուր քաղաքացի համացանցի միջոցով հնարավորություն է ստացել ձեռք բերելու համապատասխան տեղեկատվություն: Նման պայմաններում

որոշ չափով պակասում է դիվանագիտական աղբյուրների «բացառիկությունը» տեղեկություններ ստանալու և փոխանցելու առումով:

Վերջին տարիներին տեղեկատվական պատերազմների կողքին հնչում է «տեղեկատվական դիվանագիտություն» եզրույթը: Հիշարժան են Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի խոսքերը տեղեկատվական դիվանագիտության մասին. «Տարբեր գործընթացներում մենք հիմնվելու ենք դիվանագիտության տարբեր ձևերի վրա: Հաշվի առնելով ՁԼՄ-ների դերը ժամանակակից աշխարհում՝ տեղին է խոսել տեղեկատվական դիվանագիտության մասին, որը միանշանակ ավելի լավ է, քան տեղեկատվական պատերազմը»: Տեղեկատվական դիվանագիտությունը միջազգային լայն ճանաչման հասնելու կարևորագույն նուրբ գործիք է: Այն զանգվածային հաղորդակցության միջոցներով առաջ է տանում արտաքին քաղաքական շահերը և տեղեկատվությունը հասցնում է հասարակությանը և քաղաքական վերնախավին: Յուրաքանչյուր պետության արտաքին քաղաքականության մարմնի ներկայացուցիչ կիրառում է տեղեկատվական դիվանագիտության գործիքները:

Դիվանագիտական գործունեության իրականացման շրջանակներում տեղեկատվական անվտանգության պահպանման հիմնախնդիրները հետևյալն են.

- տեղեկատվական անվտանգությանը սպառնացող հավանական երևույթների կանխատեսում, բացահայտում և աղբյուրների գնահատում,
- տեղեկատվական անվտանգության նորմատիվ-իրավական ոլորտի բարելավում,
- միասնական և համակարգված տեխնիկական աշխատանքների ապահովում պետական և ծառայողական գաղտնիքները պաշտպանելու գործում,
- ակտիվ դիրքորոշում և նախաձեռնողական գործունեություն միջազգային տեղեկատվական անվտանգությունը ապահովելու ոլորտում,

- համապատասխան հաստատություններում ժամանակին համընթաց տեղեկատվական անվտանգության համակարգի զարգացում,
- հստակ վերահսկողության հաստատում տվյալ գործընթացները իրականացնելիս:

**Տեղեկատվական սպառնալիքները դիվանագիտական ոլորտում**

Տեղեկատվական անվտանգության սպառնալիքների աղբյուրները կարող են լինել ներքին և արտաքին: Արտաքին աղբյուրների թվում են.

- օտարերկրյա այն հատուկ ծառայությունների գործունեությունը, որոնք կարող են տեղեկություններ հայթայթել դիվանագիտական աշխատանքների վերաբերյալ,
- այլ պետություններում աղավաղված տեղեկատվության, ապատեղեկատվության տարածումը սեփական քաղաքականության այս կամ այն հարցի շուրջ,
- օտարերկրյա քաղաքական և տնտեսական կառույցների այնպիսի գործունեությունը, որը կարող է վտանգել տվյալ պետության շահերը միջազգային ասպարեգում,
- սեփական մտահղացումները իրականացնող միջազգային հանցավոր խմբերի կամ անհատների գործունեությունը,
- արտակարգ իրավիճակները:

Ներքին աղբյուրների թվում են.

- դիվաշխատակիցների կողմից հնարավոր սխալմունքները տեղեկատվական անվտանգության ոլորտում, որոնց թվում է տեղեկատվության հավաքման, մշակման և փոխանցման սահմանված կանոնների խախտումը,
- անհամակարգվածությունը և համապատասխան միջոցների բացակայությունը՝ պաշտպանելու տեղեկատվական անվտանգությունը,
- տեղեկատվական համակարգերի խափանումը,
- քաղաքական և տնտեսական անօրինական գործունեությունը, որը կարող է կողմնակիցներ ունենալ ԱԳՆ-ում,
- օտարերկրյա գործակալների ներթափանցումը և այլն:

Տեղեկատվական սպառնալիքները կարող են ուղղված լինել հետևյալ օբյեկտներին.

- տեղեկատվական պաշարներ, որոնք վերաբերում են պետական կամ ծառայողական գաղտնիքներին,
- տեղեկատվության և կապի տեխնիկական միջոցներ, օպերացիոն համակարգեր, տվյալների բազաներ,
- տեղեկատվական գործընթացը համակարգող ծրագրեր:

«Մառը պատերազմի» տարիներին, իսկ հետագայում 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, երբ ԱՄՆ-ի կառավարությունը մեծ ջանքեր գործադրեց իսլամադավան աշխարհում սեփական իմիջը բարձրացնելու ուղղությամբ, մեծացավ հանրային դիվանագիտության դերը:

Ըստ ոլորտի հայտնի մասնագետ Մարկ Լեոնարդի՝ հանրային դիվանագիտությունը նպատակ է հետապնդում բարելավվելու սեփական պետության հեղինակությունը միջազգային հանրության աչքերում: Հանրային դիվանագիտության հիմնական նախապայմանն է տեղեկատվական տարածության մեջ (հիմնականում հեռուստատեսության և համացանցի միջոցով) հասնելու առավելության (տեղեկատվական գերիշխանության):

Գործնականում այն ենթադրում է հետևյալը.

- կատարված իրադարձության կապակցությամբ դիվանագետների, քաղաքական գործիչների միջոցով մեկնաբանությունների, լուրերի հաղորդում: Սա ազդեցության կարճաժամկետ միջոց է (օրական),
- սեփական հաղորդագրության տարածում, որը կարող է հասարակական կարծիք ձևավորել (միջին տևողության՝ շաբաթներ, ամիսներ),
- հարաբերությունների ձևավորում կամ վերաձևավորում՝ փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտի պայմաններում (երկարաժամկետ՝ տարիներ):

Հանրային դիվանագիտության մեջ կարելի է գատել երկու սկզբունքներ: Առաջինը համագործակցայինն է, երկրորդը՝ մրցակցայինը:



Մրցակցայինն իր առջև խնդիր է դնում հեղինակություն ձեռք բերելու կամ այն բարձրացնելու միջազգային լսարանում, որտեղ քարոզվում են սեփական առավելությունները: Համագործակցային հանրային դիվանագիտությունը հիմնվում է փոխադարձ շահի, արդյունավետ գործընկերության, համագործակցային հարաբերությունների վրա:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Տեղեկատվական պատերազմների իրականացման հիմնական հարթակներն ըստ Ի. Պանարինի:
- Տեղեկությունների ստացման, փոխանցման առանձնահատկությունները դիվանագիտական գործունեության մեջ:
- Տեղեկատվությունը լսարանին հասցնելու տեսանկյունից դիվանագիտական ինչպիսի՞ գիտելիքներ են անհրաժեշտ:
- Դիվանագիտական ոլորտում որո՞նք են արտաքին և ներքին տեղեկատվական հիմնական սպառնալիքները:

## Թեմա 7.

### Տեղեկատվական պատերազմների իրականացման միջոցները

Կարող ենք առանձնացնել տեղեկատվական պատերազմների իրականացման մի քանի տարրեր:

**Ա. Մանիպուլյացիա (ձեռնաձուլում):** Մանիպուլյացիան տեղեկատվական-հոգեբանական ազդեցության ձևերից է, որն ուղղված է հոգեբանական ազդեցության միջոցով մարդկանց մտավոր ակտիվության ուղղությունն աննկատ փոխելուն: Մանիպուլյացիա իրականացնողը կամ իրականացման միջոցները սովորաբար սուբյեկտի համար լինում են աննկատ: Տեղեկատվական-հոգեբանական ազդեցության հնարքները մարդկանց սոցիալական ակտիվության վրա ազդող գործոններ են: Դրանք ազդում են հայացքների, կարծիքների, կարծրատիպերի վրա:

Կիրառվում են մանիպուլյացիոն ազդեցության հետևյալ տեխնոլոգիաները՝

1. անընդմեջ «անհրաժեշտ» տեղեկատվության մատակարարում,
2. իրականության ոչ ցանկալի փաստերի կանխամտացված կոծկում,
3. տեղեկատվական գերբեռնում, որը դժվարացնում է դեպքերի իրական ընթացքի ըմբռնումը<sup>12</sup>:

Նույն Չոմսկին առանձնացնում է մանիպուլյացիայի հետևյալ տասը ռազմավարությունները:

1. Շեղման ռազմավարություն: Սոցիալական վերահսկման առաջնային տարրը շեղման ռազմավարությունն է, որի էությունը հանրության ուշադրության շեղումն է այն կարևոր հետևանքներից և փոփոխություններից, որոնք առաջացել են քաղաքական և տնտեսական վերնախավի ընդունած որոշումների արդյունքում՝ դրա համար կիրառելով ժաման-

---

<sup>12</sup> Միրաքյան Վ., Տեղեկատվահոգեբանական ազդեցությունը տպագիր լրատվամիջոցներով, [http://noravank.am/arm/issues/detail.php?element\\_id=2208](http://noravank.am/arm/issues/detail.php?element_id=2208), 08.09.2009:

ցային կամ կարևորություն չունեցող տեղեկատվության հեղեղի կամ շարունակական հեղեղի տեխնիկան<sup>13</sup>: Շեղման ռազմավարությունը նպատակ ունի հանրության ուշադրությունը պահելու իրական սոցիալական խնդիրներից հեռու՝ նրան զբաղեցնելով կարևորություն չունեցող հարցերով, հանրությանը պահելով անընդհատ զբաղված, նրան զրկելով մտածելու ժամանակ ունենալու հնարավորությունից: Շեղման ռազմավարության մեջ կարևորվում է նաև գիտության, տնտեսագիտության, հոգեբանության, նեյրոկենսաբանության և կիրառական տեխնոլոգիայի ոլորտի հիմնարար գիտելիքների նկատմամբ հասարակության հետաքրքրության աճի կանխարգելումը:

2. Արհեստական օրակարգի ռազմավարություն: Նշված ռազմավարությամբ ստեղծվում են խնդիրներ, այնուհետև առաջարկվում լուծումներ: Նախ ստեղծվում է արհեստական խնդիրը, որը հանրային լսարանում առաջացնում է որոշակի հակազդեցություն և ստիպում է նրան ցանկանալ այնպիսի լուծումներ, որոնք ի սկզբանե հանրության կողմից ընդունվելու նպատակ են հետապնդում:

3. Աստիճանական ռազմավարություն: Անընդունելի լուծումներն ընդունելի դարձնելու համար բավական է դրանք կիրառել աստիճանաբար, տարեցտարի, փուլ առ փուլ, որպեսզի հասարակությունը ակնհայտորեն չզգա և չհասկանա դրանք:

4. Հետաձգման ռազմավարություն: Անցանկալի որոշումը ընդունելի դարձնելու մյուս ճանապարհը այդ որոշումը «ցավոտ, բայց անհրաժեշտ» ներկայացնելն է՝ ստանալով տվյալ պահին հանրության համաձայնությունը ապագայում դրա կիրառման հնարավորության համար: Ավելի հեշտ է ընդունել ապագա գոհաբերությունը, քան ներկա գրկանքը, քանի որ հասարակությունը ժամանակ է ունենում հարմարվելու փոփոխության գաղափարին: Հասարակությանը բնորոշ է միամիտ հավատը, ըստ որի՝ «վաղն ամեն ինչ ավելի լավ կլինի», և գուցե հնարավոր լինի խուսափել պահանջվող գոհաբերությունից:

---

<sup>13</sup> **Chomsky N.**, The International Coalition, Top 10 Media Manipulation Strategies, [http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation\\_08.html](http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation_08.html) (Ինչպե՞ս են «աշխարհի տիրակալներն» օգտագործում մեղիան. 10 ռազմավարություն՝ ըստ Նոամ Չոմսկիի, <http://www.epress.am/2013/08/30/>):

5. Հանրությանը վերաբերվել իբրև փոքր երեխայի: Լայն հասարակության համար նախատեսված գովազդի մեծ մասում խոսքը, փաստարկը, կերպարները և մանավորապես մանկական ձայներանգը օգտագործվում են այնպես, որ դիտորդը կարծես փոքրահասակ երեխա լինի: «Եթե դիմացինիդ դիմում ես այնպես, կարծես նա 12 տարեկան լինի, ապա ներշնչանքի բերումով, ամենայն հավանականությամբ, նրա պատասխանը կամ արձագանքը նույնքան զուրկ կլինի քննադատությունից, որքան 12-ամյա երեխայինը»:

6. Ավելի շատ օգտագործել հուզական կողմը, քան ռացիոնալ հայեցողությունը: Հուզական կողմի կիրառումը դասական տեխնիկա է՝ շարքից հանելու ռացիոնալ վերլուծությունը և անհատի քննադատական մտածողությունը:

7. Հասարակությունը պահել անգիտության մեջ: Հանրությանը անընդունակ դարձնելը նպաստում է, որ նա չհասկանա իրեն վերահսկելու և ստրկացնելու համար օգտագործվող տեխնոլոգիաներն ու մեթոդները: «Ցածր սոցիալական խավերին հրամցվող կրթության որակը պետք է լինի հնարավորինս աղքատ ու միջակ, այնպես, որ սոցիալական ցածր և բարձր խավերի միջև անդունդը ցածր խավերի համար լինի և մնա անհաղթահարելի»:

8. Խրախուսել հասարակությանը սիրել միջակությունը: Այս ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ է հանրությանը մղել հավատալու, թե բուր, գռեհիկ և անկիրթ լինելը «մոդայիկ» է:

9. Ընդվզման փոխարինումը մեղավորության զգացմամբ (հասարակությանը մղել անառողջ ինքնաքննադատման): Թույլ տալ, որ անհատներն իրենք մեղադրեն իրենց անհաջողությունների համար՝ դրանց պատճառը փնտրելով իրենց մտավոր կարողությունների կամ ջանքերի ձախողման մեջ: Արդյունքում համակարգի դեմ ընթրոստանալու փոխարեն անհատը տրվում է ինքնաարժեզրկման, ինչն էլ իր հերթին ծնում է անկումային իրավիճակ, որի արդյունքներից մեկը գործողություններից զերծ մնալն է:

10. Անհատների մասին իմանալ ավելին, քան իրենք գիտեն իրենց մասին: Վերջին տասնամյակների ընթացքում գիտական կտրուկ առաջընթացն անընդհատ մեծացող անդունդ է ստեղծել հանրության և իշ-

խող վերնախավի տիրապետած և գործածած գիտելիքների միջև: Կենսաբանության, նյարդակենսաբանության և կիրառական հոգեբանության զարգացման շնորհիվ հասանելի են դարձել մարդու ֆիզիկական և հոգեկան բնույթի վերաբերյալ խորը գիտելիքներ: «Համակարգն» ավելի լավ է ճանաչում հասարակ մարդուն, քան ինքը՝ մարդն է իրեն ճանաչում: Դա նշանակում է, որ առավել հաճախ վերնախավը ավելի մեծ հսկողություն և ազդեցություն կարող է ունենալ անհատների վրա, քան անհատներն իրենք իրենց վրա:

ՁԼՄ-ներում մանիպուլյացիայի դրսևորման ձևեր են՝ պիտակավորումը, իդեալականացումը, ասոցասումը, հեղինակությունների վկայակոչումը, փաստերի վերադասավորումը, ծաղրը, բամբասանքը, ասեկոսեները, կարծրատիպերի կիրառումը և այլն:

**Բ. Քարոզչություն, ենթաքարոզչություն, ապատեղեկատվություն, լոբբի:** «Քարոզչությունը տեղեկատվական պատերազմի մի մասնիկն է մարդկանց վրա ազդեցություն գործելու համար: Քարոզչությունն ուղղված է նրան, որ սեփական բոլոր հնարավորությունները և միջոցները կիրառելով՝ համոզի իր ազդեցության ոլորտի հասցեատիրոջը», – նշում է Վ. Շեյնովը<sup>14</sup>:

«Պրոպագանդա» (քարոզչություն) հասկացությունը ուշ միջնադարում կապված է եղել եկեղեցական գործունեության հետ, իսկ 20-րդ դարում այն սկսեց գործածվել քաղաքական գաղափարներ տարածելու համար<sup>15</sup>: Ելնելով իր հետապնդած նպատակից և իր առաջ քաշած խնդիրներից՝ քարոզչությունը առավելապես բացասական երանգներ ձեռք բերեց: Այն քարոզողի տեսակետն էր հաղորդում և պարտադրում հասցեատիրոջը, իսկ հասցեատերերը միշտ չէ, որ ընդունում կամ համաձայնում են այդ տեսակետներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քարոզչությունը արևմտյան հասարակագիտության մեջ ավելի բացասաբար սկսեց ընկալվել: Արևմտյան տեսաբանները 20-րդ դարի 2-րդ կեսին հրաժարվե-

---

<sup>14</sup> Шейнов В. П., Психология лидерства и власть, Издательство «Ось-89», М., 2008, стр. 360-361.

<sup>15</sup> Ժամակոչյան Ա., Պրոպագանդա, ազիտացիա, մանիպուլյացիա և համոզում, «Նորավանք» Գ-ԿՀ, 16.07.2015:

ցին «պրոպագանդայից»՝ այն փոխարինելով այլ հասկացություններով: Է. Բերնեյսը առաջ քաշեց «Public Relations»-ի (հայերեն՝ հանրային կապեր կամ հասարակայնության հետ կապեր) բառակապակցությունը: Է. Բերնեյսն այսօր հիշվում է որպես “Public Relations”-ի տեսականացման և պրակտիկ գործածության կնքահայրերից մեկը: 20-րդ դարի վերջին ժամանակակից փիլիսոփա Նոան Չոմսկին կասկածի տակ դրեց “Public Relations”-ի դրական ընկալումը:

Քարոզչությունը պարտադիր ունենում է ուղղորդող, որի օգտին և որի անունից հրապարակվում է հաղորդագրությունը: Հաղորդագրության աղբյուրը այն հասցնում է հասցեատիրոջը: Քարոզչական հաղորդագրության հաջողությունը հանգեցնում է հասցեատիրոջ արժեքների, համոզմունքների, հայացքների փոփոխման, որը վերջնական արդյունքում իրականացնում է ուղղորդողի շահերը:

Քարոզչությունը կարող է հիմնված լինել՝ 1. բաց, պաշտոնական, հայտնի աղբյուրների, 2. վերլուծության, մեկնաբանությունների, կարծիքների, 3. կեղծիքի վրա, երբ աղբյուրները կոծկվում կամ բացակայում են:

Կարելի է առանձնացնել քարոզչության մի քանի տեսակներ.

- Կերտող քարոզչություն. հետապնդում է այն նպատակը, որ անհրաժեշտ է ստեղծել, կառուցել որևէ նոր բան (կառույց, հասարակություն), կոչ է անում միանալ այդ գաղափարի իրականացման շուրջ: Այն ոչ միշտ կարող է դիտվել որպես դրական երևույթ:
- Հերոսության քարոզչություն. կոչ է անում համախմբվել այս կամ այն արժեքի, գաղափարի շուրջ, որոնց անհրաժեշտ է հասնել, օգնում է հեշտությամբ հաղթահարել դժվարությունները: Սովորաբար այն դիտվում է որպես դրական բնույթի քարոզչության տեսակ:
- Ոչնչացնող քարոզչություն. պնդում է այն գաղափարը, որ գոյություն ունի թշնամի, այդ թշնամին վտանգավոր է և սպառնալիք է: Սա, իհարկե, հանդես է գալիս որպես միանգամայն բացասական քարոզչության տեսակ:

- Բաժանող կամ տարանջատող քարոզչություն. պնդում է, որ «մենք այնպիսին չենք, ինչպեսին նրանք են», առաջացնում է տարաձայնություն, ընդգծում է սեփական առավելությունները, մատնանշում է դիմացինի թերությունները: Սա կարող է դիտվել ն՛ դրական, ն՛ բացասական քարոզչության տեսակ: Ռազմական հակամարտության ժամանակ այն կարող է դիտվել որպես դրական երևույթ:
- Սարսափի քարոզչություն. համոզում է պոտենցիալ հակառակորդին սեփական հզորությունը: Ազդեցություն ունի նաև ներքին լսարանի վրա:
- Հիասթափության քարոզչություն. ընդգծում է հավանական հակառակորդի անհուսալի կարգավիճակը, նրան մղում է հանձնվելու: Մովորաբար քարոզչության այս տեսակը չի կիրառվում սեփական բնակչության դեմ և արտաքին ազդեցության նպատակ է հետապնդում:
- Լուսավորման քարոզչություն. հանրության իրազեկում դեկավարության, կուսակցության, պետության գործունեության վերաբերյալ, գովազդում է որոշակի կենսակերպ: Կարող է դիտվել որպես դրական և բացասական քարոզչության տեսակ:

Քարոզչական գործունեության մի ձև է ենթաքարոզչությունը (ազիտացիա): Խորհրդային համատեքստում քարոզչությանը զուգահեռ կիրառվում էր նաև «ազիտացիա» հասկացությունը, ինչպես նաև դրանց համադրությունը՝ «ազիտպրոպը»: «Ազիտացիա» հասկացությամբ էլ ավելի է ընդգծվում սեփական քաղաքական նպատակներից ելնելով ուրիշներին գործողությունների մղելու կողմը:

Ենթաքարոզչությունը արթնացնում և առանձին անհատների կամ խմբավորումների՝ կոչերի, կարգախոսների, դիմումների օգնությամբ մղում է որևէ գործունեության: Հաճախ հիմնվում է զգայականի վրա, ունենում է կոնկրետ գործնական նպատակ: Աչքի է ընկնում բանավոր, տպագիր և տեսաձայնային միջոցների զանազանությամբ: Այն քաղաքական պայքարի տարածման գործիք է:

Քարոզչությունը և ազիտացիան գաղափարախոսության տարածման, սեփական շահերի պաշտպանման և հակառակորդի գաղափարախոսության դեմ պայքարի հզոր միջոցներ են: Քարոզչությունը ավելի լայն և ընդգրկուն հասկացություն է, իսկ ենթաքարոզչությունը ավելի նեղ իմաստ ունի և հիմնականում քաղաքական գործընթացներում է կիրառվում:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ քարոզչություն և ենթաքարոզչությունը օգնում են ձևավորել հասարակական կարծիք, քանի որ վերջիններիս շնորհիվ հասցեատիրոջը մղում են անհրաժեշտ գործունեության:

Քարոզչության թեման քննարկվել է Գ. Լաստելլի «Քարոզչության տեխնիկան համաշխարհային պատերազմում» (Propaganda Technique in the World War) աշխատության մեջ: Հայտնի է նրա մոդելը, որով հիմք դրվեց քաղաքական հաղորդակցությունների ուսումնասիրմանը: Նրա մոդելի շնորհիվ հնարավոր դարձավ բնորոշում տալ զանգվածային հաղորդակցությանը, որը ստացավ հաղորդակցության սոցիոլոգիական կանոններով: Այն ներկայացվեց իր բաղկացուցիչ ձևերով. ո՞վ է հաղորդում, ի՞նչ է հաղորդվում, ի՞նչ միջոցով է հաղորդում, ո՞ւմ է հաղորդում և ինչպիսի՞ արդյունավետությամբ է հաղորդում<sup>16</sup>:

Լաստելլի մոդելով ցույց տրվեցին ՉԼՄ-ների գործունեության մի քանի կարևոր գործոններ՝ ղեկավարել զանգվածային հաղորդակցության գործընթացները, ՉԼՄ-ների գործունեությունը, ՉԼՄ-ների ազդեցության արդյունքները: Հետագայում Լաստելլի մոդելը կատարելագործվեց, ավելացավ հետադարձ կապի գործոնը: Այս ամենից պարզ դարձավ, որ հաղորդակցության գործընթացը դադարում է միակուռ, ներփակ կառույց լինելուց:

ՉԼՄ-ների գործունեության ազդեցության, հասարակական կարծիքը կարճաժամկետ խեղաթյուրելու միջոց է ապատեղեկատվությունը: Ապատեղեկատվությունը միտումնավոր տարածող կեղծ տեղեկատվությունն է այս կամ այն իրադարձության վերաբերյալ: Հիմնականում լինում է անանուն, անհասցե, կամ դժվար է ճշտել դրա սկզբնաղբյուրը:

---

<sup>16</sup> **Lasswell H. D.**, The Structure and Function of Communication in Society, Mass Communication, Ed. by Schramm W. Urbana, 1960, p. 14.



Ապատեղեկատվության տարածման հիմնական սկզբունքներից է՝ որքան մեծ լինի սուտը, այնքան շատ այն կշռջանառվի, և այդքան մարդ կհավատա:

Լոբբին անմիջական կամ միջնորդավորված տարբեր մեթոդների և միջոցների համախումբ է, որը ներգործություն է թողնում հիմնականում ղեկավար (իշխանությունների վրա) շրջանակների վրա՝ որոշակի նպատակի հասնելու համար: Լոբբիի իրականացումը շատ բարդ համակարգ է, որում ընդգրկված են ոչ միայն ավանդական տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունը, այլև մի շարք նպաստող հանգամանքներ: Լոբբին հաճախ կիրառում է ամերիկյան քաղաքական տեխնոլոգիաներում: Բառացի թարգմանությամբ այն նշանակում է «միջանցք»: Բառի ծագումը գալիս է 19-րդ դարից, երբ «լոբբի» բառը կիրառվեց կոնգրեսի միջանցքներում փողով ձայներ գնելու գործընթացում: Լոբբիզմը հիմնականում անցկացվում է հոգուտ.

1. առանձին քաղաքական, սոցիալական ուժերի,
2. տարբեր պետությունների և տարածաշրջանների,
3. մասնավոր, սոցիալ և գլոբալ խնդիրներ լուծման ռազմավարու-

թյան:

Հայկական լոբբին աշխարհում ամենաարդյունավետներից մեկն է: Այն չի դրսևորվում միայն Հայոց ցեղասպանության և Հայ դատի պահանջներով. ծագումով հայ օտարերկրյա քաղաքացիները իրականացնում են հայանպաստ և հայապահպան բազում ծրագրեր:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Նոստ Զոմսկու մանիպուլյացիայի 10 ռազմավարությունները:
- Ինչպե՞ս է բնորոշվում «քարոզչություն» հասկացությունը:
- Քարոզչության ի՞նչ տեսակներ կան:
- Ո՞րն է ենթաքարոզչությունը:
- Գ. Լատելլի հաղորդակցության մոդելը:
- Տեղեկատվական-հոգեբանական ինչպիսի՞օ ազդեցություն ունի լոբբին:

## **Թեմա 8.**

### **ՉԼՄ-ների կիրառումը տեղեկատվական պատերազմներում**

Չանգվածային լրատվամիջոցները տեղեկություններ հավաքելու, մշակելու, ուղղորդելու, վերլուծության կառույցներ են, որոնց միջոցով տեղեկատվությունը մատուցվում է հասարակության տարբեր շերտերին: Ամերիկյան հետազոտող Գ. Լաստելլը առանձնացնում է ՉԼՄ-ների հիմնական գործառույթները.

1. դիտարկում և ուսումնասիրում,
2. վերլուծում և խմբագրում,
3. հասարակական կարծիքի ձևավորում և ուղղորդում,
4. մշակույթի տարածում:

Մասնագետները նշում են, որ «տեղեկատվական հասարակության» մեջ ՉԼՄ-ները ձեռք են բերել մի նոր գործառույթ՝ դաստիարակչական: Ըստ Դ. Բելլի՝ այժմ երեխաների մեծ մասը «լավ վարք» սովորում է ոչ թե դպրոցներում, այլ հեռուստատեսության և ֆիլմերի միջոցով: Հենց ՉԼՄ-ներն են հնարավորություն ընձեռում ձևավորելու որոշակի վարք, ճաշակ, նորաձևություն, հետաքրքրություն ժամանակակից մարդկանց մոտ: ՉԼՄ-ները իրենց լսարանին լիարժեքորեն մասնակից են դարձնում մշակութային, սոցիալական-քաղաքական գործընթացներին՝ մոտեցնելով հասարակ բնակչությանը կարկառուն դեմքերին և կարևոր իրադարձություններին: Ուղղակիորեն թե անուղղակիորեն ՉԼՄ-ները փոխում են ոչ միայն հասարակությանը՝ որպես միավոր, նրա բազմաթիվ կապերը և հարաբերությունները, այլ հենց մարդկային անհատականությունը՝ որպես սոցիալական, որպես հոգեբանական և կենսաբանական միավոր:

ՉԼՄ-ները մեծ կարևորություն են ձեռք բերել ինչպես միջազգային, այնպես էլ ներքին անցուղարձերը լուսաբանելու գործում: Դրանցով մարդիկ տեղեկանում են աշխարհի տարբեր անկյուններում կատարվող իրադարձությունների մասին, և մեր օրերում իրականության մասին

պատկերացումները ձևավորվում են ոչ թե իրադարձությունների մասին օբյեկտիվ իմացությամբ, այլ զանգվածային լրատվամիջոցների հաղորդած ձևով: Հետևաբար կարևոր է ուսումնասիրել ՁԼՄ-ների գործունեությունը, դրանց թողած ազդեցությունը լսարանի վրա՝ հասարակական կարծիքի ձևավորման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին պատկերացում կազմելու համար: Հատկանշական է մեջբերել ԱՄՆ-ի գեներալ Ջոն Շալիկաշվիլիի խոսքերը. «Մենք չենք հաղթել ճակատամարտը, քանի դեռ դրա մասին չի հայտարարել Սի-Էն-Էնը»:

Տեղեկատվական պատերազմներում կարևոր դերակատարություն ունեն զանգվածային լրատվամիջոցները: Տարբեր երկրներ, ունենալով զարգացած և նորագույն տեխնիկական հնարավորություններով հագեցած, հեղինակություն վայելող և աշխարհի տարբեր երկրներում հեռարձակվող լրատվամիջոցներ, միջազգային զանազան անցուղարձեռում սփռում են իրենց նպատակահարմար տեղեկատվական մթնոլորտ: Մրանք իրականացնում են տեղեկատվության հավաքում, մշակում, վերլուծում, որից հետո լուրերը հաղորդում են հասցեատիրոջը՝ ունենալով որոշակի ուղղվածություն: Մեթոդներն ու հնարավորությունները, որոնք կիրառվում են տեղեկատվական հակամարտություններում, կարող են ուղղորդել մարդկանց, հասարակության, պետությունների քայլերը:

ԱՄՆ-ում կան մի քանի տասնյակ խոշոր մեդիա հսկաներ՝ «ABC», «CBS», «NBC» («NBC»-ն, օրինակ General Elictronics-ի մաս է), որոնք մաս են կազմում խոշոր կազմակերպությունների: Այդ խոշոր կազմակերպությունները զբաղվում են գործարարությամբ, իսկ տեղեկատվությունը բիզնեսի միջոցն է: Դրանք շահույթ ակնկալող ընկերություններ են, որոնք ունեն իրենց նպատակները, խնդիրները միջազգային և տեղական շուկաներում, և միաժամանակ տեղեկատվության ձեռքբերման և տարածման հիմնական աղբյուրներ են:

Է. Հերմանը, Ն. Չոմսկին «Արտադրական համաձայնություն<sup>17</sup>» աշխատության մեջ անդրադառնում են ԱՄՆ-ի բարձրակարգ լրատվամիջոցներին և տեղեկատվության տարածմանը: Նրանք նշում են, որ ԱՄՆ-

---

<sup>17</sup> **Herman Ed., Chomsky N.**, Manufacturing Consent: A Propaganda Model, «Pantheon Books», 1988.

ի հայտնի լրատվամիջոցներն ունեն բավականին ընդարձակ լսարան, որոնք գործում են ծրագրված, ձևավորում են օրակարգ (agenda setting), շրջանակավորում (framing), ընդհանուր չափանիշներ, իսկ տեղական լրատվամիջոցները քիչ թե շատ ընդօրինակում են նրանց կառուցվածքը: Այս բարձրակարգ լրատվամիջոցները որոշում են, իսկ մյուսները՝ ընդօրինակում: Նոսամ Չոմսկին նշում է. խոշոր լրատվամիջոցները սահմանում են ընդհանուր օրակարգ, այսինքն՝ «New York Times»-ը, «The Washington Post»-ը, խոշոր հեռուստաալիքները և այլն, սահմանում են ընդհանուր չափանիշները, իսկ տեղական լրատվամիջոցները ընդօրինակում են նրանց կառուցվածքը: «Նրանք որոշում են, նրանք ընտրում են, նրանք ձևավորում են, նրանք հսկում են, նրանք սահմանափակում են, նրանք ծառայեն գերակա դիրք ունեցողների շահերին, հասարակության մեջ էլիտար խմբերին»,– նշում են հեղինակները: Այս ամենը նրանք անում են բոլոր ձևերով՝

- ըստ թեմաների ընտրության,
- ըստ մտահոգությունների բաշխման,
- ըստ խնդիրների վրա շեշտադրման և շրջանակավորման,
- ըստ տեղեկատվության գտման:

Այսպիսով՝ այն, ինչ ունենք առաջին տեղում, խոշոր ընկերություններն են, որոնք մաս են կազմում նույնիսկ ավելի մեծ կազմակերպությունների: Ինչպես և ցանկացած ընկերություն, նրանք ունեն արտադրանք, որը վաճառում են շուկայում. շուկան գովազդատուներն են, որոնք բիզնես են անում: Այսինքն՝ այն, ինչը դրոյում է լրատվամիջոցներին գործել, լսարանը չէ. նրանք փող են աշխատում իրենց գովազդատուներից: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ խոսքը բարձրակարգ լրատվամիջոցների մասին է:

Ներկա ժամանակներում լայնածավալ տեղեկատվական հակամարտությունների առկայության պայմաններում, որտեղ «հզորները թելադրում են խաղի կանոններ» և մյուսներին թելադրում են իրենց արժեքները, հենց այս գործառույթի առկայությունը ակնհայտ է դառնում գլոբալիզացիոն գործընթացներում: Այս առումով էլիտար լրատվամիջոցներ

րի ազդեցությունը բավականին մեծ է տեղեկատվական պատերազմներում:

ՉԼՄ-ների նորմատիվ սկզբունքների և գործառույթների համաձայն՝ ենթադրվում է, որ ՉԼՄ-ները «ծառայում են» հասարակական հետաքրքրություններին կամ հասարակության բարեկեցությանը: Սակայն ընդհանուր առմամբ նրանք ունեն ավելի ընդարձակ, երկարաժամկետ ազդեցության հնարավորություն, հատկապես մշակույթի, քաղաքականության, բիզնեսի հարցերում:

### **Տպագիր մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը՝ որպես տեղեկատվական պատերազմների գործոն**

Տեղեկատվահոգեբանական ազդեցության ոլորտում օգտագործվող հիմնական տպագիր միջոցներն են քարոզչական թերթիկները, թերթերը, ամսագրերը, բրոշյուրները: Երկարաժամկետ տեղեկատվական ազդեցության համար կարող են օգտագործվել նաև գրքերը: Տպագիր լրատվամիջոցը տեղեկատվահոգեբանական ազդեցության համար ունի մի շարք առավելություններ և թերություններ: Առավելություններն են՝

1. խոր վերլուծության և թեման ամբողջովին ընդգրկելու հնարավորությունը,
2. պատկերների օգտագործման հնարավորությունը,
3. հնարավոր է ընտրել կարդալու վայրը, արագությունը, վերընթերցել և օգտագործել որպես փաստաթուղթ:

Հեռուստատեսության, ռադիոյի և համացանցի համեմատությամբ՝ տեղեկատվությունը տպագիր լրատվամիջոցներով ավելի դանդաղ է և կա օպերատիվության պակաս: Վերոնշյալ առանձնահատկություններից ելնելով՝ տպագիր ՉԼՄ-ներն ավելի արդյունավետ են տեղեկատվական ազդեցության երկրորդ էշելոնի համար, որը ենթադրում է արդեն կատարված իրադարձությունների ուսումնասիրություն և խորը վերլուծություն<sup>18</sup>:

---

<sup>18</sup> Տե՛ս Միրաբյան Վ., Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները, Երևան, 2010:

Նապոլեոնի բանակում կար շարժական տպարան, որը կարող էր հրատարակել թերթիկներ այն ժամանակվա համար մեծ տպաքանակով՝ մինչև 10 հազար հատ 24 ժամում: Կան նաև տվյալներ, թե ինչպես է Նապոլեոնը մարդ ուղարկում անգլիական մամուլից լրագրողներ «գնելու» համար:

Ռադիոն առաջին հաղորդակցական միջոցն էր, որը հեշտությամբ հատեց պետական սահմանները և կարողացավ լսարան ու ազդեցություն ապահովել նաև այլ երկրներում: Դա ամմիջապես գնահատեցին պետությունների քաղաքական և ռազմական ղեկավարները՝ ռադիոն դարձնելով տեղեկատվահոգեբանական ազդեցության և քարոզչության կարևոր միջոց<sup>19</sup>: Ռադիոյի միջոցով տեղեկատվահոգեբանական ազդեցությունն ունի հետևյալ առավելությունները և թերությունները.

1. զգայական ազդեցության հնարավորություն,
2. լսարանի հետ ուղիղ կապ հաստատելու հնարավորություն,
3. տեղեկատվության հաղորդման մեծ օպերատիվություն,
4. զանգվածային լսարանի զանազան շերտեր գրավելու լայն հնարավորություններ,
5. ունկնդրելու հնարավորություն այլ գործով զբաղվելու ժամանակ:

Այսօրվա հեռուստատեսությունը լայն հնարավորություններով է օժտված: Արբանյակի միջոցով տեղեկատվությունը վայրկյանների ընթացքում կարող է սփռվել երկրագնդով մեկ:

Հեռուստատեսությունը, թերևս, շարունակում է մնալ հասարակական կարծիք ձևավորող ամենաազդեցիկ միջոցը: Այն ստեղծում է մարդկանց կամքից դուրս թույլ գիտակցվող կերպարներ: Թեմայի ճիշտ ընտրությունը, ելույթում դրսևորած տրամադրվածությունը, ցուցաբերած հստակ կողմնորոշվածությունը, հռետորությունը, «դերասանական հմտությունները», արտաքին տեսքը, շարժումները, ինչպես նաև հմուտ հեռուստալրագրողների կողմից տեսանյութի ճիշտ պատրաստումը կարող են դառնալ հաղթանակի բանալի: Լուրեր ներկայացնելիս անհրա-

---

<sup>19</sup> Միրաքյան Վ., Ռադիոյի ազդեցության հնարավորությունները, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4293](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4293), 09.02.2010:

ժեշտ է հաշվի առնել, որ տեղեկատվության առանցքը ձայնաշարն է, բանավոր խոսքը, հետևաբար բովանդակային ծանրությունը հենց խոսքինն է: Այստեղ հիմնական տեղեկատվությունը պետք է կրի առաջին նախադասությունը: Եթե ուշադրություն դարձնենք ԱՄՆ-ի նախագահի ելույթներին, նրա բանավոր խոսքին, կնկատենք, որ այն չափազանց հստակ է և պարզ, ինչն իր հերթին ավելի համոզիչ, ընկալելի է դարձնում խոսքը:

Հաճախ մարդիկ ի վիճակի չեն օբյեկտիվորեն գնահատել իրենց մասնակցությունը զանգվածային հաղորդակցությանը, քանի որ սովոր են շփվել հաղորդակցության ոլորտում անհատապես, իսկ նրանք, ովքեր ի վիճակի են կառավարել այս գործընթացը, կարող են դասվել հաջողակների շարքին: Նույնիսկ տարբեր հեռուստահաղորդումներ ի գործ են ստեղծել իմիջ: ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադը «Սի-Էն-Էն»-ի լրագրող Լ. Քինգի հեռուստահաղորդման ժամանակ, ինչպես նաև Կոլումբիայի համալսարանում հայտնի ելույթից հետո, որը մեծ արձագանք գտավ, կարողացավ ստեղծել որոշակի իմիջ իր ժողովրդի, պետության որդեգրած քաղաքականության, իսլամական կառավարման վերաբերյալ՝ չնայած նրան, որ տարիներ շարունակ ԱՄՆ հայտնի հեռուստաընկերությունները հակառակ քարոզչությունն էին իրականացնում:

Շատերը գտնում են, որ տպագիր մամուլը հետզհետե կորցնում է նախկին ազդեցությունը տեղեկատվական ոլորտում՝ իր դիրքերը զիջելով էլեկտրոնային ձևերին: «Ավանդական ՁԼՄ-ները կորցնում են իրենց գերիշխող դերը հասարակական կարծիքի ձևավորման գործում»,– նշում է «Ուկրինֆորմ» լրատվական գործակալության տնօրեն Ա. Միխայլովը,– «դա երևում է թերթերի, ամսագրերի տպաքանակների համատարած անկումից, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների լսարանների կրճատումից»: Այնուամենայնիվ, օրաթերթերը, ամսագրերը դեռևս պահպանում են իրենց որոշակի ներգործության հնարավորությունները: Իհարկե, դրանց էլեկտրոնային տարբերակներն այսօր ավելի օպերատիվ են և մատչելի, սակայն հասարակության որոշ շերտեր օգտվում են հենց այս լրատվամիջոցներից:

Համացանց: Ավանդական զանգվածային լրատվամիջոցներն աստիճանաբար կորցնում են իրենց երբեմնի դերն ու նշանակությունը առօրյա-կենցաղային կյանքում և հասարակական կարծիքի ձևավորման գործում: Այսօր արդեն ուշադրության կենտրոնում են հայտնվել համացանցն ու նոր մեդիան («նոր մեդիա» հասկացությունը ի հայտ է եկել 20-րդ դարավերջին: Նոր մեդիան հաղորդակցության ինտերակտիվ միջոց է, որը կիրառում է համացանցը՝ ներառելով սոցիալական ցանցեր, տեքստային հաղորդագրություններ, բլոգներ, վիրտուալ աշխարհներ, «online» հանրագիտարաններ և այլն: Նոր մեդիայի հիմնական գործիքներն են համակարգիչը և բջջային հեռախոսը, որոնք համացանցին միանալու հնարավորություն ունեն, և որոնք հաղորդակցության ոլորտում արմատապես փոխել են ժամանակի և տարածության ավանդական ընկալումները:

Տեղեկատվական պատերազմներում, ավանդական լրատվամիջոցների հետ համեմատած, տեղեկատվությունը համացանցի միջոցով ունի հետևյալ առավելությունները.

- խնայում է ժամանակ. հրատապ լուրերը, ցնցող նորությունները համացանցով ավելի արագ են փոխանցվում և տարածվում, քան լրատվության մյուս միջոցներով: Համացանցում նյութի տեղակայման համար ավելի քիչ ժամանակ է պահանջվում,
- տարածության առումով օգտվողին, անկախ իր գտնվելու վայրից, հասանելի է իրեն հետաքրքրող տեղեկությունը՝ աշխարհի տարբեր ծայրերում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ,
- բովանդակային-ծավալային տեսակետից հեռուստատեսությունը, տպագիր մամուլը, ռադիոն սահմանափակումներ ունեն եթերի սղություն, էջերի քանակի և այլ հարցերում, իսկ համացանցը ավելի մեծ հնարավորություններ ունի,
- ավանդական լրատվամիջոցները մատչելիության առումով զիջում են նոր մեդիային: Եթե նախկինում թերթ գնելու համար անհրաժեշտ էր հասնել մոտակա կրպակ, ապա համացանցի առ-



կայության դեպքում անվճար կարելի է ընթերցել այն էլեկտրոնային տարբերակով:

Նոր մեդիայի ընձեռած հնարավորությունները լայնորեն կիրառվում են տարբեր պետությունների, հասարակական շերտերի, անհատների կողմից սեփական կամքը թելադրելու, հակառակորդի նկատմամբ տեղեկատվական-հոգեբանական առավելության հասնելու նպատակով: Նոր մեդիան հետևում է «հետադրյունաբերական հասարակության» տրամաբանությանը, որտեղ յուրաքանչյուր մարդ ստեղծում է սեփական կյանքի ոճը, ընտրում է նպատակահարմար միջոցներ և գաղափարախոսություն կամ էլ ստեղծում է սեփական իրականությունը:

Հակամարտություններում մուլտիմեդիա նյութերի օգտագործումը ընդլայնվել է, քանի որ վերջինների ազդեցությունը հանրային կարծիքի վրա ավելի մեծ է: Մուլտիմեդիա միջավայրը օգնում է գրավել լսարանի ուշադրությունը, ավելի ընկալելի դարձնել տեղեկատվությունը, ինչը, օրինակ, տեքստային տարբերակով չէր ընկալվի լսարանի կողմից: 2009 թ. Թեհրանի փողոցներում ծավալված հայտնի բախումների լուսաբանումը ԱՄՆ-ի էլեկտրոնային ՋԼՄ-ներում ուղեկցվում էին նկարների, տեսանյութերի ցուցադրմամբ, որոնք, ի դեպ, ստացվում էին սոցցանցերի միջոցով:

Նոր մեդիան անհատներին հսկայական տեղեկատվություն է տալիս՝ շրջանցելով ավանդական տեղեկացման, լրատվության թողարկումների նշանակությունը: Միաժամանակ այն հզոր զենք է զարգացած պետությունների ձեռքում և հարկ եղած դեպքում կիրառվում է հակառակորդին կազմաքանդելու, հեղափոխականացնելու նպատակով: Նոր մեդիան կարող է աջակցել՝ կոտրելու այն մեհիշխանությունը, որը կառավարությունները, լրատվական գործակալությունները ավանդաբար պահպանում են:

Բլոգինգի (բլոգ-գործունեություն) առավելությունն այն է, որ այստեղ հայտնվում են այն նորությունները, որոնք տեղ չեն գտել ՋԼՄ-ների էջերում: Ընթերցողի հետ շփումը անմիջական է, առանց միջնորդի՝ հաճախ մանրամասնելով և «գաղտնիքներ բացելով»: Այստեղ լրագրող-խմբագիրը կարող է ավելի սուբյեկտիվ գնահատականներ ներկայացնել իրադարձության վերաբերյալ: Բլոգգինգում սովորաբար կիրառվում է առ-

օրյա խոսակցական լեզուն, ինչն ավելի անմիջական է դարձնում ընկալումը: «Լրագրողական բլոգը հավանաբար միակ լրագրողական ժանրն է, որն առկա է համացանցային միջավայրում», - նշում է Մոսկվայի պետհամալսարանի դոցենտ Մ. Լուկինան: Դա բացատրվում է նրանով, որ արագ զարգանում է բլոգոսֆերան: Լրագրողները սկսում են լրջորեն զբաղվել բլոգ-գործունեությամբ՝ բախվելով, այսպես կոչված, քաղաքացիական լրագրության համառ մրցակցությամբ:

2011 թ. սկզբում աֆրիկյան մայրցամաքում, արաբական երկրներում, Մերձավոր Արևելքում սկսվեցին և մեկը մյուսին հաջորդեցին ժողովրդական շարժումները, այդ թվում՝ նաև իրանական դժգոհությունների ալիքը: Փոփոխությունների կողմնակիցները պահանջում էին իշխանավոխություն: Շատերի մտ հարց էր առաջանում, թե ինչու և ինչպես առաջացավ այդպիսի ալիք, ինչը շարժառիթ եղավ նման ալիքի բարձրացման համար: Որոշ մարդիկ այդ ապստամբությունները որակեցին որպես «Արևմուտքի ձեռքի գործ», մյուսներն էլ հերքեցին նման տեսակետները՝ նշելով, որ այդ շարժումները ինքնաբուխ էին: Մեր կարծիքով, այս տեսակետները ունեցել են իրենց դերակատարությունը որոշ չափով, իսկ էական դեր ունեցան հենց հաղորդակցության և տեղեկատվական միջոցները: Տրամաբանությունն այն է, որ այսօր շատացել է համացանցից օգտվողների քանակը: Դա նպաստում է խմբավորումների ձևավորմանը, հատկապես երիտասարդության շարքերում:

Դիտարկենք «Ֆեյսբուքի» օրինակը: Սոցիալական նշված ցանցը նպաստում է միևնույն գաղափարի շուրջ մարդկանց համախմբմանը, նորությունների արագ տարածմանը, երկխոսության ձևավորմանը, ազատ կարծիքի արտահայտմանը, ընդ որում՝ օպերատիվ և մատչելի միջոցներով: Իսկ տեսանյութերի, հոլովակների, նկարների ցուցադրումը ավելի ուշագրավ է դարձնում նյութը: Այս զարգացումները չլրիպեցին Իրանի կառավարության ուշադրությունից: Հասկանալով սոցցանցերի կարևորությունը և հասարակության որոշ շերտերի մասնակցությամբ ցույցի դուրս գալու նախադեպերը՝ արգելվեց «Ֆեյսբուքի» օգտագործումը երկրում:

Սոցցանցերը որոշակի վերապահումով կարելի է լրատվության միջոց համարել. ոմանք «Ֆեյսբուքը» օգտագործում են տեղեկատվություն

ստանալու, ոմանք էլ՝ ժամանցային նպատակով: Սակայն սոցցանցերում առկա են մի շարք խնդիրներ: Դրանք են՝ էթիկայի կանոնների պակասությունը և ապատեղեկատվության տարածման հավանականությունը:

Համացանցին միացած բջջային հեռախոսը հասարակ քաղաքացու ձեռքում կարող է դառնալ լրագրողական գործիք: Հեռախոսի գործառույթների մեջ մտնում են նկարահանելը, հաղորդագրություն ուղարկելը, տեսանյութեր ձայնագրելը, ինչպես նաև օգտվել այն մույն հնարավորություններից, որով օժտված է համացանցը: Ինչ-որ առումով բջջային հեռախոսը ևս լրատվության միջոց կարող է լինել: Իհարկե, այն ավելի շուտ զանգվածային հաղորդակցության միջոց է, քան զանգվածային լրատվության միջոց: Սակայն բջջային հեռախոսները իրական լրատվության միջոցի վերածվեցին 2009 թ. Իրանի հայտնի իրադարձությունների ժամանակ, երբ տեղեկատվական ճգնաժամի պայմաններում հեռախոսներից հաղորդագրություններ փոխանցվեցին «Twitter», տեսանյութեր վերբեռնվեցին «Youtube»: «Չանգվածային հաղորդակցության միջոցը (ՉՀՄ), որն ընդգրկում է մույն բջջային հեռախոսը, ավելի ընդգրկում է տեխնիկական առումով, քան զանգվածային լրատվության միջոցը (ՉԼՄ), սակայն բովանդակային առումով ՉՀՄ-ը արդեն ՉԼՄ է, ՉՀՄ-ը սահմանափակվում է ՉԼՄ-ի տեխնիկական կողմով»:

«Նորավանք» ԳԿՀ փորձագետ Ս. Մարտիրոսյանը նշում է, որ ընդհանուր առմամբ համացանցի դերը այնքան է մեծացել, որ մնացած լրատվամիջոցները սկսել են զիջել իրենց դիրքերը տեղեկատվության բնագավառում, իսկ երիտասարդության շրջանում այն արդեն տեղեկատվության հիմնական աղբյուր է դարձել: Սակայն նշված հնարավորությունները միաժամանակ ունեն իրենց բացասական կողմերը: Օրինակ՝ ոմանց համար «Youtube»-ը իրենց գաղափարները տարածելու իսկական հարթակ է՝ հաճախ վատորակ տեսանյութերով: Նման դեպքերում ոչ արհեստավարժ տեսանյութերը որակական առումով չի կարելի համեմատել մասնագիտացված լրագրողի պատրաստած տեսանյութերի հետ: Առաջանում է նաև վերահսկողության հարցը: Տեսաբանների կարծիքով՝ համացանցը այնպիսի երևույթ է, որը հնարավոր չէ վերահսկել (թեև որոշ պետություններում՝ Իրանում, Չինաստանում սահմա-

նափակվում է սպառողների մուտքը համացանց): Ուստի, կարևորվում է արհեստավարժ լրագրողների դերը: «Մերօրյա տեղեկատվական գեր-բեռնվածությունը, կեղծ տեղեկատվության առատությունը, հակասա-կան տեղեկությունների մեջ կողմնորոշվելու անհրաժեշտությունը, ինչ-պես նաև ընթացիկ նորություններից և լուսաբանումներից զատ՝ ավելի ընդհանուր մեկնաբանությունների և խորը վերլուծությունների կարիքը առաջվա պես անխուսափելի են դարձում լրագրողի դերը»:

Ընդհանուր առմամբ լրագրության ոլորտում կարող ենք առանձնաց-նել նկատվող մի քանի խնդիրներ.

- թուլանում է լրագրողի և լրատվամիջոցի՝ տեղեկատվության ար-տոնյալ աղբյուրի կարգավիճակը: Համացանցի առկայության դեպքում առաջանում է այլընտրանքային լրատվության հնարա-վորությունը,
- մեծ քանակությամբ տեղեկատվության պայմաններում լրագրո-ղը հայտնվում է «տեղեկատվություն գտողի» դերում,
- կարևորվում են լսարանի հետ երկխոսությունը, կարծիքների փոխանակումը, քննարկումը,
- ավելանում է սուբյեկտիվ գործոնը: Անհատները այժմ կարող են քննարկել, թողնել հաղորդագրություններ և մեկնաբանություն-ներ նյութի վերաբերյալ,
- այժմ դիտվում է անցում նորություններից դեպի ժամանցային ոլորտ, ժամանցը մատուցվում է որպես նորություն, և նորությու-նը մատուցվում է որպես ժամանց: Այս ամենի արդյունքում կող-մերի միջև նկատվում է սահմանների վերացում և ի հայտ է գա-լիս «ինֆոթեյնմենթը» (infotainment),
- մուլտիմեդիա նյութերը ավելի հասկանալի են դարձրել տեղե-կատվությունը, քանի որ մարդկանց համար ավելի հեշտ է տես-նել, քան կարդալ,
- ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի պայմաննե-րում լրագրողը հաճախ ստիպված է կատարել ոչ թե նեղ մասնա-գիտացված գործառույթներ, այլ ընդհանուր: Նա ոչ միայն հե-ռուստատեսության լրատվական թողարկման ռեպորտաժի, այլև

համացանցային նյութի, լրատվական հոսքի հեղինակ է և այլն: Երբ Իրանում «Թվիթթեր» սոցցանցը սկսեց տեղեկատվական արտահոսքի պատճառ դառնալ և հայտնվեց ոչ միայն ցուցարարների, այլև լրագրողների ուշադրության կենտրոնում, շատ լրագրողներ, տեղեկացված լինելու ցանկությունից ելնելով, իրենց աշխատանքին զուգահեռ սկսեցին հետևել բլոգ-գործունեությանը:

Այսպիսով՝ նոր մեղիան՝ իր բազմազան հնարավորություններով դարձել է շատերի առօրյայի անբաժան մասը: Այն լրագրության մեջ փոփոխման է ենթարկել որոշ ավանդական հարցեր: Համացանցից օգտվողների աճին նպաստել են մարդկանց՝ տեղեկացված լինելու և այլընտրանքային, ազատ տեղեկատվություն ստանալու ցանկությունը, համացանցից օգտվելու մատչելիությունը, օպերատիվությունը, բջջային համացանցի օգտագործողների ակտիվացումը: Տեղեկատվությունը դարձել է ավելի մատչելի և հասկանալի: Այս հանգամանքները հաշվի են առնում հակամարտող պետությունները, որոնք, օգտագործելով տեղեկատվական միջոցները և լրագրողական հմտությունները, պատեհ առիթը բաց չեն թողնում հակառակորդի շարքերում ապատեղեկատվություն տարածելու, թիրախային լսարանների շարքերում քարոզչություն իրականացնելու առիթները՝ շահարկելով այս կամ այն զգացմունքները (Իրանում այդպիսիք են կրոնականը, էթնիկականը և այլն): Օրինակ՝ ԱՄՆ - ԻԻՀ տեղեկատվական հակամարտության պայմաններում մնան միջոցների կիրառումը նկատելի է հատկապես երիտասարդության շրջանում գաղափարախոսություններ տարածելու և ազգային (կրոնական) փոքրամասնությունների շարքերում կենտրոնացված իշխանությունից գատելու գործում:

Կիրեռապատերազմը ժամանակակից ցանկացած տեղեկատվական պատերազմի կարևոր բաղկացուցիչ մասն է: Մասնագետները կիրեռապատերազմ են անվանում համացանցում պայքարի այն տեսակը, որը միտված է թշնամու համացանցային ռեսուրսի կամ տեղեկատվական բազայի ոչնչացմանը: Կիրեռահաբեկչության ամենազանգվածային դրսևորումը համացանցային կայքեր կոտրելն է, դրանց բովանդակությունը ջնջելը և փոխարենը սեփական լոգոնգները տեղադրելը: Կիրեռ-

պատերազմը կարող է լինել վիրուսի միջոցով հակառակորդի համակարգչի և ցանցի վնասում, վերահսկում, տվյալների ոչնչացում: Կիրեռ-պատերազմի մեկ այլ դրսևորում է հակառակորդի տեղեկատվական դաշտում ՁԼՄ-ների հիմնումն և գործածումը: Կան նաև հատուկ ծրագրեր, որոնցով հնարավոր է լինում դիտել էլփոստերի նամակագրությունը, կեղծել նամակների բովանդակությունը, ապատեղեկության տարածումը: Համաշխարհային կիրեռտարածությունում մեծ դիրք ունեն ԱՄՆ, Չինաստանը, Իսրայելը, որոնք ունեն հզոր կիրեռգործեր:

Ուշագրավ են համակարգչային վիրուսների հնարավորությունները և ազդեցությունը: *Մքսքսնեթը (stuxnet)* օպերացիոն համակարգով (Microsoft Windows) գործող վիրուս է, որն առաջին անգամ կիրեռպատերազմում կարողացել է վիրուսի միջոցով ֆիզիկապես ոչնչացնել ենթակառուցվածք: Այն ընդունակ է կատարելու և՛ լրտեսություն (տեղեկությունների հավաքում), և՛ դիվերսիա: Ըստ եղած տվյալների՝ սա ԱՄՆ-ի և Իսրայելի մշակած ծրագիրն է, որն ուղղված է Իրանի միջուկային ծրագրի ոչնչացմանը: Որպես ապացույց՝ բերվում է 19790509 թիվը, որը ամսաթիվ է՝ մայիսի 5, 1979: Տարեթիվը Իսլամական հեղափոխության թիվն է և համընկնում է ծագումով հրեա գործարար Հաբիբ Էլգանյանի կախաղան բարձրացնելու օրվա հետ: Նման ծրագրի իրականացումը չի կարող լինել 1 անհատի ձեռքի գործ, դա ավելի լավ մշակված և նպատակային ծարագիր է: Ըստ որոշ աղբյուրների՝ միլիոնավոր դոլլարներ են ծախսվել (3 մլն դոլար), և փորձառու մասնագետների խումբ է աշխատել:

Ռուսական աղբյուրները նշում են, որ բելոռուսական մասնագետներն են նշված վիրուսը հայտնաբերել (Մերգեյ Ուլասեն, ով աշխատում էր Կասպերսկու լաբորատորիայում): Վիրուսը եղել է ավտոմատացված արտադրողական համակարգերում և տարածվել է հիշողության (ֆլեշ) քարտով: Այն անորսալի է և աննկատ մինչև նոր համակարգիչ մտնելն ու զարգանալը: Ըստ «Նյու Յորք Թայմսի»՝ «Սքաքսնեթ» վիրուսը արդեն հասցրել է իրագործել իր նպատակը՝ վնասել Իրանի միջուկային ծրագիրը, որը դանդաղել է մի քանի տարով: Վիրուսը շարքից հանել է Նաթանգի ուրանի հարստացման 5000 ցենտրիֆուգաններից 1368-ը՝ դրանով հետ գցելով Բուշերի ԱԷԿ-ի թողարկման ժամկետները:

«Սթաքսնեթի» ի հայտ գալով կարող ենք նշանավորել կիրեռապատե-  
րագմների մի նոր դարաշրջան, որտեղ վիրուսը փաստորեն կարողացել է.

1. իրագործել իր առջև դրված խնդիրը,
2. հասցնել այնքան վնաս, որը (ըստ մասնագետների) համեմատե-  
լի է Իսրայելի օդուժի հասցրած հարվածների վնասների չափին,
3. իրագործողը մնաց անվնաս, իսկ անունը մնաց անհայտ:

Սա ապագայի պատերազմի հիմնական միջոց է դառնալու, և բա-  
ցահայտված «Սթաքսնեթը» ընդամենը առաջիններից մեկն է, որը վս-  
տահաբար ժամանակի ընթացքում կունենա ավելի կատարելագործված  
տարբերակներ: Պայքարել այսպիսի վիրուսի դեմ կարող են միայն պե-  
տությունը և լավ զարգացած հաղորդակցական համակարգերը: Անհա-  
տը ի գորու չէ այն հաղթահարել: Այս ուղղությամբ արդեն կատարվում  
են քայլեր. քննարկվում է տարբերակ, որ կիրեռատարածությունը կարող է  
հավասարեցվել ցամաքային, օդային, ջրային տարածությունների հետ:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Որո՞նք են ՋԼՄ-ների հիմնական գործառույթները՝ ըստ Գ. Լա-  
տելլի:
- Էլիտար լրատվամիջոցների գործունեության հիմնական  
սկզբունքները:
- Ինչպիսի՞ տեղեկատվահոգեբանական ազդեցության առավելու-  
թյուններ ունեն տպագիր լրատվամիջոցները՝ համեմատած այլ լրատ-  
վամիջոցների հետ:
- Ինչպիսի՞ տեղեկատվահոգեբանական ազդեցության առավելու-  
թյուններ ունի ռադիոն:
- Որո՞նք են «Նոր մեդիայի» առանձնահատկությունները:
- Ինչպիսի՞ տեղեկատվահոգեբանական ազդեցության առավելու-  
թյուններ և թերություններ ունի համացանցը:
- Կիրեռապատերազմների հիմնական դրսևորումները:

## **Թեմա 9.**

### **ԱՄՆ-ի տեղեկատվական քաղաքականության սկզբունքները: Չինական փորձը տեղեկատվական պատերազմներում**

Խորհրդային Միության փլուզմամբ թուլացավ ԱՄՆ-ի հետ եղած նախկին լարվածությունը, որը թույլ տվեց Վաշինգտոնին ուշադրություն դարձնել գլխատեխնիկական, մասնավորապես տեղեկատվության և հեռահաղորդակցության ոլորտների զարգացմանը: Այնուհետև անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու ավելի զարգացած, արդյունավետ, օպերատիվ լրատվություն:

Միջազգային հասարակական կարծիք ձևավորելու գործում ԱՄՆ-ը վարում է հստակ մշակված տեղեկատվական քաղաքականություն: Դերանում իրենց ուրույն դերակատարությունը ունեն գանգվածային լրատվամիջոցները: Հայտնի լրատվամիջոցները, ունենալով մեծ լսարան, հսկայական ֆինանսական միջոցներ և քաղաքական հենարան, ծրագրավորված ձևով կարողանում են իրենց խոսքը լսելի դարձնել աշխարհի տարբեր անկյուններում: Նախորդ դարավերջից սկսած «Հայեցակարգային լրագրության» սկզբունքները օգտագործելով՝ ամերիկյան լրատվամիջոցներում ուշադրություն դարձվեց վերլուծությունների, մեկնաբանությունների մատուցմանը: Վերջին տարիների համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ բազմիցս տեղեկատվական գործողությունները ունենում են իրենց ազդեցությունը աշխարհաքաղաքական նպատակների իրականացման գործում, իսկ համացանցի և հաղորդակցության նորագույն միջոցների զարծածումը նկատելի հնարավորություն է ընձեռել Վաշինգտոնին: Սա հրատապ է այն պետությունների համար, որոնք խնդիրներ ունեն միջազգային ասպարզում, քանզի պարտությունը տեղեկատվական ոլորտում կարող է հանգեցնել սպակայունացման, խառնակությունների հրահրման, հեղափոխության և այլն:

ԱՄՆ-ի տեղեկատվական քաղաքականության մեջ կարևոր ձեռքբերում էր համացանցի հնարավորությունների և նրա միջոցով լրատվամի-



չոցների ու լրագրության մեջ նորամուծությունների ներդրումը: 1996 թ. նոր տեխնոլոգիաներ մտցվեցին ԱՄՆ-ի լրագրության մեջ: Համացանցում հայտնվեցին ամենօրյա թերթերի էջերը: 1996 թ. նախագահական ընտրություններում ընդգծվեց լրագրության նոր ուղղություն՝ «հայեցակարգային լրագրությունը»: Այն ենթադրում էր քաղաքական, ընտրական գործընթացների լուսաբանման հարցում տեղեկատվականից վերլուծականին անցում: Սակայն մասնագետները գտնում են, որ մնան դեպքում հավանական է դառնում իրականության ոչ օբյեկտիվ, խեղաթյուրված լուսաբանումը:

Պատահական չէ նաև, որ ամերիկյան էլեկտրոնային պարբերականների («Նյու Յորք Թայմս», «Լոս Անջելես Թայմս», «Վաշինգտոն Փոստ» և այլն) էջերում հաճախ հենց վերլուծությունների, մեկնաբանությունների, կարծիքների ենք հանդիպում: Օրինակ՝ «Լոս Անջելես Թայմսը», ներկայացնելով իր վերլուծությունը Իրանի 2009 թ. նախագահական ընտրությունների «կեղծիքների» մասին, փաստեր գրեթե չի բերում, իսկ տեղեկատվությունը ավելի շատ կարծիքի է մնան: Մասնավորապես նշվում է, որ ընտրությունների արդյունքները «պետք է որ կեղծված լինեն»:

ՁԼՄ-ների բնագավառում հետագոտող անգլիացի Ջ. Բրայսը նշում է ԱՄՆ-ում հասարակական կարծիքի վրա ներգործելու որոշ մեխանիզմներ. սկզբում փաստերի և պատմությունների հիման վրա տվյալ տեղեկատվության վերաբերյալ ձևավորվում են զանազան կարծիքներ, և ստեղծվում է այն տպավորությունը, թե այդ իրադարձության շուրջ բոլորը խոսում են: Դրանից հետո ՁԼՄ-ները սկսում են ավելի մանրամասնորեն քննարկել և ներկայացնել այն՝ դրանով իսկ գրավելով հասարակության ուշադրությունը: Այդուհետև զանազան կարծիքներից դուրս են մղվում ավելորդ փաստերը: Վերջնական փուլում տվյալ տեղեկատվությունն արդեն ներկայացվում է շարքային քաղաքացու հետաքրքրության տեսանկյունից որպես համոզմունք: Այս ամբողջ գործընթացը մանրամասն մշակվում և արդյունքում վերածվում է հասարակական կարծիքին նպատակաուղղված ներգործության: Բանն այն է, որ անցյալում ձևավորված պատկերացումները և տրամադրությունները ժամանակի ընթացքում կարող են արագ մոռացվել. հասարակական կարծիքը

աստիճանաբար կարող է ենթարկվել ազդեցությունների, և զանգվածային լրատվամիջոցներով ձևավորված նոր պատկերացումները կարող են ուղղորդվել:

Այսպիսով՝ ԱՄՆ որոշ լրատվամիջոցների խոսքը լսելի է միջազգային հանրությանը: Այն հսկայական ֆինանսական կարողությունները, տեխնիկական միջոցները և լսարանը, որոնցով օժտված են նրանցից շատերը, թույլ է տալիս խոսել նրանց բազմակողմանի հնարավորությունների մասին: Լինելով առաջինը որևէ կարևոր իրադարձության լուսաբանման գործում՝ նման լրատվամիջոցները հաճախ դառնում են սկզբնաղբյուր և տարածում են սեփական տեսակետը՝ անկախ բովանդակությունից:

Միացյալ Նահանգներում մշակվում են սեփական շահերին համապատասխան հայեցակարգեր, իսկ դրանց «իրացումը» տրվում է զանգվածային լրատվամիջոցներին: Նման տեղեկատվությունը հեղինակություն ունեցող ՋԼՄ-ների և հատկապես դրանց էլեկտրոնային տարբերակների միջոցով, ինչպես նաև սոցցանցերով, վայրկյանների ընթացքում տարածվում է աշխարհի տարբեր անկյուններում, մատուցվում է հասարակ ընթերցողին և հաճախ դառնում նրա համար ընդունելի տեղեկություն: Սա վտանգավոր կարող է լինել միջազգային խնդիրներ ունեցող պետությունների համար, քանի որ նման պայմաններում նրանք դառնում են տեղեկատվական գրոհների հավանական թիրախ:

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո որոշակի փոփոխություններ մտցվեցին երկրի տեղեկատվական քաղաքականության մեջ: Ստեղծվեց ներքին անվտանգության նախարարությունը, որը պետք է ապահովեր պետության ներքին անվտանգության ապահովման և ոլորտում հետախուզական հանրության բոլոր անդամների կոորդինացման գործառույթները: Կատարելագործվեց հետախուզության ոլորտը, որի գլխավոր ուղղություններից մեկը դարձավ միասնական տեղեկատվական տարածքի ձևավորումն ամբողջ հետախուզական հանրության համար:

2002 թ. ԱՄՆ-ի հանրային դիվանագիտության խորհրդակցական հանձնաժողովի գեկույցում նշվում է. «Տեղեկատվական դարաշրջանում դիվանագիտական ազդեցությունը և ռազմական հզորությունը նրանց

կողմն է, ովքեր կարող են հավաստի տեղեկատվություն տարածել այն ճանապարհով, որը համապատասխան է իրենց հետաքրքրություններին և արդյունավետորեն հասարակության ճնշման տակ դնել այլ երկրների առաջնորդներին: Այսօրվա հանրային դիվանագիտությունը պահանջում է նոր մտածելակերպ և հավելյալ պաշարներ: Մեր վարչակազմը հիմնել է լավ սկիզբ՝ արտահանելու ամերիկյան սկզբունքները և կարեկցանքը իսլամական երկրներ: Արաբալեզու վերկայքերը, միջինարևելյան ռադիոցանցը, տպագիր հրատարակչությունները, քաղաքացիների և լրագրողների փոխանակումները հիմնվել են ԱՄՆ-ի շահերն առաջ տանելու համար: Սակայն անհրաժեշտ է անել ավելին և ստեղծել արդյունավետ հանրային դիվանագիտության մեքենա՝ շարունակելու երկարաժամկետ հաղորդակցությունը ողջ աշխարհի հետ: Հետևաբար հանձնաժողովը առաջարկում է ամրապնդել հանրային դիվանագիտությունը՝ բարեփոխելով նրա կառուցվածքը և ստեղծելով սեփական պաշարները»:

ԱՄՆ-ի տեղեկատվական քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 2003 թ. ուժի մեջ մտած փաստաթուղթը՝ «Տեղեկատվական գործույթների ճանապարհային քարտեզ» (Information Operations Roadmap<sup>20</sup>): Փաստաթղթում նշվում են կատարելագործման հիմնական ուղղվածությունները՝

- 1.տեխնիկական ոլորտի ձեռքբերումներ,
- 2.տեղեկատվական պատերազմներ վարելու նոր ձևեր,
- 3.տեղեկատվական հակամարտության մեթոդների մշակում:

Փաստաթուղթը ուժի մեջ մտավ 2003 թ. հոկտեմբերին, որը կնքված էր որպես «գաղտնի»: Իսկ 2007 թ. փաստաթղթից հեռացվեց «գաղտնի» կնիքը և հասանելի դարձավ հասարակությանը (որոշ վերապահումներով և որոշ կետերի վերամշակմամբ կամ վերացմամբ):

Փաստաթղթում ընդգծվում է տեղեկատվական ոլորտում «հանրային դիվանագիտության» (public diplomacy), հասարակայնության հետ կապերի (public relations), հոգեբանական գործողությունների (PSYOPS)

---

<sup>20</sup> Department of Defence, USA, [http://nsarchive.gwu.edu/NSAEBB/NSAEBB177/info\\_ops\\_roadmap.pdf](http://nsarchive.gwu.edu/NSAEBB/NSAEBB177/info_ops_roadmap.pdf), 30.10.2003.

կարևորության մասին: Մասնավորապես հասարակայնության հետ կապերի համար նշվում է ռազմական ոլորտում ՋԼՄ-ների ակտիվ մասնակցության, նրանց սերտ համագործակցության և արդյունավետության մասին: Այս համագործացության իրականացման համար պետք է ձևավորել «արդարություն», որպեսզի լսարանին մատուցվի «ճշմարիտ» տեղեկատվություն՝ իրադարձությունների օպերատիվ մեկնաբանումներով, մարդասիրական ծրագրերի ներկայացումներով, օրինակ՝ պատերազմից հետո վերականգնում, վերակառուցում, օգնություն փախստականներին և այլն:

Կարևոր է ընդգծել, որ փաստաթղթում մշակվել են մի շարք սկզբունքային մոտեցումներ, մասնավորապես.

1. «պայքար միջազգային ահաբեկչության դեմ»,
2. «պայքար Իրաքում մասսայական ոչնչացման գեների դեմ»,
3. «պայքար միջուկային գեների չտարածման համար»,
4. «պայքար կոռուպցիայի դեմ»:

Պատմությունը ցույց տվեց, որ այս ծրագրերով Վաշինգտոնը կարողացավ առաջ տանել սեփական շահերը, ամրապնդել դիրքերը Մերձավոր Արևելքում, վերահսկել ֆինանսական հոսքեր և բնական ռեսուրսներ:

Ազգային հետախուզության ռազմավարության 2009 թ. (The National Intelligence Strategy of the United States-2009) փաստաթղթերում առանձնահատուկ նշվում է հաղորդակցության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների դերի մասին: Մեծ ուշադրության են արժանանում կիբեռանվտանգության և կիբեռտարածության պաշտպանվածության խնդիրները: 2009 թ. ԱՄՆ-ի ազգային հետախուզական ռազմավարության մեջ նշվում է. «Մի շարք երկրներ ընդունակ են սպառնալու ԱՄՆ-ի շահերին ավանդական (օրինակ՝ ռազմական և լրտեսական) և նոր տեխնոլոգիաների կիրառման (կիբեռ գործողություններ) ճանապարհներով: Մասնավորապես Իրանը առաջ է քաշում մի շարք սպառնալիքներ ԱՄՆ-ի անվտանգության օբյեկտներին Մերձավոր Արևելքում և այլուր՝ իր միջուկային և հրթիռային ծրագրերով, ահաբեկչությանը աջակցելով, ԱՄՆ-ի և դաշնակիցների հակառակորդներին վնասաբեր օգնություն տրամադրելով»:

Նոր մեդիայի առանձնահատկությունները նոր հեռանկարներ բացեցին ԱՄՆ-ի համար: Շատ ծրագրերի միջոցով, կիրառելով սոցցանցերը և բլոգները («Ֆեյսբուք», «Թվիթթեր»), ԱՄՆ-ը սկսեց տարածել սեփական քարոզչությունը և կանխել հակաամերիկյան տրամադրությունների տարածումը:

Անդրադառնալով տեղեկատվական ազդեցության լայնամասշտաբ կիրառմանը և հեղափոխություններին՝ նշենք, որ Վաշինգտոնի ծրագրերը և հայեցակարգերը այս կամ այն չափով դրսևորվեցին աֆրիկյան մայրցամաքում, մերձավորարևելյան մի շարք երկրներում: Դրանց իրակացումը ուղիղ կապ ունի տեղեկատվական-հոգեբանական գործողությունների հետ, որոնք հմուտ կերպով կիրառվեցին որոշ երկրներում՝ օգտագործելով համացանցի հնարավորությունները: Նմանատիպ գործողությունների շարքին կարելի է դասել այսպես կոչված «Վիկիլիկսը», որի ի հայտ գալով՝ մեղադրանքներ տարածվեցին մի շարք պետությունների, կազմակերպությունների հասցեին, որոշ երկրների հանդեպ սերմանվեցին խառնակություններ, որոնք մեծ հաշվով չէին հակասում Միացյալ Նահանգների շահերին: Սա կարելի է համարել մի տեսակ ծրագրավորված ցանցակենտրոն գործողություն:

### **Չինական փորձը տեղեկատվական պատերազմներում**

Տեղեկատվական պատերազմներ վարելու գործում ամենապատրաստված երկրներից մեկը Չինաստանն է: Տեղեկատվական պատերազմների ռուս հայտնի մասնագետ Ի. Պանարինի կարծիքով՝ Չինաստանը նույնիսկ աշխարհաքաղաքական տեղեկատվական պատերազմներ վարելու համաշխարհային առաջատարն է: Ըստ հեղինակի՝ «տեղեկատվական պատերազմ» եզրույթը կիրառվել 1985 թ. տեղեկատվական պատերազմների չինացի առաջատար տեսաբան Շեն Վեյգոանի կողմից: Չինաստանի ղեկավարությունը գիտակցում է ԱՄՆ-ի հետ տեղեկատվական հակամարտության անխուսափելիությունը, որն էլ համապատասխան ոլորտը զարգացնելու հիմնական խթանն է հանդիսանում:

Հիմնական մոտեցումները հետևյալն են՝

- տեղեկատվական սպառնալիքների կանխարգելման տեսական միջոցների զարգացում,
- տեղեկատվական սպառնալիքների հակազդեցության միջոցների զարգացում,
- տեղեկատվական գործողությունների մարտավարության մրցունակության բարձրացում,
- տեղեկացվածության (արհեստական ինտելեկտի) բարձր մակարդակի ապահովում,
- տնտեսական տեղեկատվական ազդեցիվ դիրքորոշում,
- մշակութային տեղեկատվական ազդեցիվ դիրքորոշում,
- «ուղեղների» տեղեկատվական պատերազմ, որտեղ հիմնական մոտեցումը խաղաղ/փափուկ կանխարգելման մեթոդն է, իսկ հիմնական օբյեկտը՝ հոգեբանությունը:

Չինացիները տեղեկատվական իրենց հայեցակարգը վերցրել են ԽՍՀՄ գլխուժի մարշալ Նիկոլայ Վ. Օզարկովից, ով չի ընդունվել ԽՍՀՄ ղեկավարության կողմից: Չինացիները այդ հայեցակարգը կապեցին Կոնֆուցիայի և Սուն Յզիի հայացքների հետ:

Չինական տեղեկատվական քաղաքականությունը բավականին գաղտնի է: Այն փակ ոլորտ է և դժվար է դրա իրական գործունեության մասին մանրամասներ հայթաթել: Հայտնի է, որ Չինաստանը մեծ ուշադրություն է հատկացնում ՁԼՄ-ների գործունեությանը, միլիարդավոր օրինակով ամսագրեր (2.5 մլրդ 2005 թ. տվյալներով, 20 մլրդ օրինակ թերթ, 1500 ռադիոկայաններ և այլն): Չինական համացանցը զարգանում է աննախադեպ արագությամբ: Չարգացման տեմպերով Չինաստանը զիջում է միայն ԱՄՆ-ին:

21-րդ դարում Չինաստանը հասել է զգալի արդյունքների ԱՄՆ-ի հետ տեղեկատվական պատերազմներում: Չինաստանի բնակչության կեսը գրագետ չէ կամ կիսագրագետ է, սակայն իշխանությունները կարողացել են ստեղծել հասարակությանը տեղեկատվական գրոհներից պաշտպանելու և իր քաղաքականությանը առաջ տանելու միջոցներ, մասնավորապես.

1. Չինաստանի կառավարությունը համոզել է բնակչությանը, որ անկարգություններ հրահրում է ԱՄՆ-ը:

2. Չինաստանը օգտագործում է նաև իր մեծաքանակ սփյուռքը սեփական լոբբին առաջ տանելու համար: Չինական մեծաքանակ սփյուռքը արտերկրի վերաբերյալ մեծաքանակ տեղեկատվություն ստանալու աղբյուր է:

3. Հաջորդ քայլը, որ ձեռնարկել է Չինաստանի ղեկավարությունը, ՉԼՄ-ների մշտադիտարկումն (մոնիթորինգն) ու համացանցի վերահսկողությունն է:

4. Ակտիվ է գործում նաև չինական հետախուզությունը, որը նպատակահարմար մարդկանց «գործուղում» է այս կամ այն երկիր՝ հետախուզական տվյալներ ձեռքբերելու համար:

Չինաստանը իր լոբբիի շնորհիվ կարողացել է կարգավորել իր տնտեսական քաղաքականությունը այնպես, որ ԱՄՆ-ում սպառվող ապրանքների 50 %-ը չինական են: Ինչպես գիտենք, Չինաստանը հայտնի է իր ցածր արժեք ունեցող ապրանքներով:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Ո՞րն է «հայեցակարգային լրագրությունը»:
- Հասարակական կարծիքի վրա ներգործելու՝ Ջ. Բրայսի մեխանիզմը:
- Ի՞նչ է 2003 թ. «Տեղեկատվական գործույթների ճանապարհային քարտեզը»:
- Տեղեկատվական ոլորտի ամփոփագության պահպանման ՉԺՀ մոտեցումները:

## **Թեմա 10.**

### **Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները (2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրինակով)**

Սանձագերծելով քառօրյա ռազմական գործողություններն Արցախում՝ Ադրբեջանը չկարողացավ հասնել հաջողությունների, թեև երկար տարիներ նախապատրաստվել էր ռևանշի և հսկայական գումարներ էր տրամադրել ժամանակակից սպառազինությունների ձեռքբերման համար:

Ինչպես ռազմական գործողություններին զուգընթաց, այնպես էլ դրանից հետո ակտիվ էր ադրբեջանական տեղեկատվական-քարոզչական ոլորտը, որի հիմնական նպատակները հետևյալն էին՝ ցույց տալ, որ նախորդող տասնամյակների պատրաստություններն անտեղին չեն եղել, կանխել երկրի ներսում օրեցօր աճող դժգոհությունները, շեղել հասարակության ուշադրությունը Ալիևների ընտանիքի անվան հետ շնչանառվող օֆշորային թեմաներից, հայերին միջազգային հանրության աչքերում ներկայացնել որպես պատերազմի նախաձեռնող կողմ, թաքցնել պատերազմի արդյունքում գրանցված սեփական անհաջողությունները, կոծկել կորուստները և այլն:

Ապրիլյան քառօրյա պատերազմը վառ օրինակ է ներկայացնելու ադրբեջանական տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները՝ կապված թիրախային լսարանին տրամադրված տեղեկատվությամբ, ինչպես նաև քննելու ադրբեջանական, հայկական և միջազգային որոշ լրատվամիջոցների՝ պատերազմական գործողությունների օրերի լուսաբանումները և գործունեությունը: Ադրբեջանական տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումների վերլուծության համար առավելապես հիմնվել ենք զանգվածային լրատվամիջոցների հրապարակած նյութերի և սոցցանցերում շրջանառվող տեղեկատվության վրա:



Այսպիսով՝ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության սլաքներն ուղղված էին թե՛ ներքին, թե՛ արտաքին, հատկապես հայկական լսարանին: Ըստ այդմ՝ մի քանի հիմնական ուղղություններ կարելի է առանձնացնել՝

**ա. ներքին լսարան,** որի հասցեատերը ադրբեջանական հասարակությունն էր: Այստեղ նպատակ էր հետապնդվում հանրության ուշադրությունը ուղղել մեկ այլ թիրախի, ինչպես նաև արտաքին սպառնալիքի պատրվակով փորձել համախմբել հասարակությանը:

Ամերիկյան հայտնի լեզվաբան, փիլիսոփա, քաղաքական ակտիվիստ Նոամ Չոմսկին, ով կազմել է մեդիա մանիպուլյացիայի 10 հիմնական ռազմավարությունները, առանձնացնում է, այսպես կոչված, «շեղման ռազմավարությունը»՝ նշելով, որ հասարակական վերհսկողության հասնելու համար հիմնական տարրերից մեկը շեղման ռազմավարությունն է, որը նպատակաուղղված է ապակողմնորոշելու հասարակության ուշադրությունը կարևոր խնդիրներից: Վերնախավի ներկայացուցիչների իրական որոշումները այլ ուղղություն են ստանում «հեղեղի» տեխնոլոգիայի կիրառմամբ, այն է՝ շարունակական շեղումներով և ոչ կարևոր տեղեկատվության տրամադրմամբ<sup>21</sup>:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ռազմական գործողություններ սկսելով՝ ալիևյան վարչակարգը ցանկություն ուներ շեղելու հասարակության ուշադրությունը սոցիալական անբարենպաստ վիճակից: Ինչպես հայտնի է լրատվամիջոցներից, Ադրբեջանի ներքաղաքական կյանքը բավականին լարված է, իսկ այդ լարվածության սրման դեպքում երկրում անհնազանդությունների ալիքը կարող է վերահսկողությունից դուրս գալ: Նաև արտաքին սպառնալիքի (ռազմական գործողությունների) առկայությունը տեսականորեն հնարավոր էր դարձնում հավանական համախմբումը՝ ընդդեմ հակառակորդի:

Ադրբեջանական քարոզչամեքենան միայն կեղծ տեղեկատվական հոսքերով (ապատեղեկատվությամբ) կարող էր սեփական ժողովրդին

---

<sup>21</sup> **Chomsky N.**, The International Coalition, Top 10 Media Manipulation Strategies, [http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation\\_08.html](http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation_08.html).

կարճաժամկետ շեղել ներքին լարվածությունից, ուստի հենց ապատեղակատվության կիրառմամբ հասարակական կարծիքի ձևավորումը դարձավ տեղեկատվական պատերազմ մղելու հիմնական միջոցը: Առավել ակնհայտ օրինակներից է, երբ աղբբեջանական լրատվամիջոցները շրջանառության մեջ դրին այն փաստը, թե իբրև հետախուզությունը որսացել է հայկական մի կարևոր փաստաթուղթ՝ Արցախի պաշտպանության նախարարի նամակն ուղղված ՀՀ գործընկերոջը: Իհարկե, այն անմիջապես հերքեց հայկական կողմը: Փաստաթղթում նշվում էր, թե հայկական խաղաղ բնակչության մոտ խուճապ է տիրում, և դասալքության դեպքեր են արձանագրվում: Փաստաթուղթը հրապարակվել էր բազմաթիվ սխալներով՝ կետադրական, ուղղագրական, քերականական, ինչը ցույց էր տալիս հակառակողի ակնհայտ ապատեղեկատվությունը և նաև՝ ապաշնորհի աշխատանքը, թեև հաշվի առնելով ներքին լարանի՝ հայերենի իմացության ցածր մակարդակը՝ սպառման համար այն կարող էր կարճաժամկետ արդյունավետ լինել:

Աղբբեջանական լրատվամիջոցների կողմից հերթական ապատեղեկատվությունից ամենացայտուն օրինակն է Ջրականի (Ջաբրայիլի) և Վարանդայի (Ֆիզուլի) «գրավումը»<sup>22</sup>: Ըստ աղբբեջանական «News.az» լրատվամիջոցի՝ աղբբեջանցի զինվորները «հասել են» Ջրականի և Վարանդայի շրջանների վարչական սահմաններին, «լուսանկարվել են», այնինչ այս ապատեղեկատվությունը ևս ընդամենը ժամերի դրական արդյունք կարող էր ապահովել երկրի ներսում:

Նման կերպով աղբբեջանական հասարակությանը գոտեպնդելու քայլերի դիմեցին որոշ աղբբեջանական կայքեր: «azernews.az» գրում է, որ «հայերի մոտ խուճապ է, ավելի քան 3000 հոգի լքել են գրավյալ Լեռնային Ղարաբաղի շրջանը»: «Այն բանից հետո, երբ շփման գծում Աղբբեջանը հուժկու պատասխան տվեց Հայաստանի զինված ուժերի սադրանքներին, խուճապ է տարածվել այն մարդկանց շարքերում, որոնք բնակություն են հաստատել գրավյալ տարածքներում»<sup>23</sup>: Կայքը,

<sup>22</sup> <http://news.az/articles/karabakh/106502>, Azerbaijani soldiers at the approaches to Jabrail and Fizuli, Mon., 11 April, 2016.

<sup>23</sup> **Gadimova N.**, Armenians in panic, over 3,000 left occupied Nagorno-Karabakh region, <http://www.azernews.az/aggression/94786.html>, 6 April, 2016.

հղում տալով պաշտպանության նախարարության տեղեկատվությանը, հավելում է նաև, որ աղբբեջանական բանակը ոչնչացրել է մոտ 370 հակառակորդի զինվորներ ռազմական գործողություններից ի վեր: Այս առումով կարելի է փաստել, որ, ի տարբերություն աղբբեջանական կողմի կեղծ տվյալների, հայկական կողմը բավականին թափանցիկ և անվանական ներկայացրել է կորուստների հստակ քանակը:

Ի հեճուկս աղբբեջանական իշխանությունների գործադրած ջանքերի՝ սոցցանցերում ակտիվ շրջանառվեց աղբբեջանցի ամերիկաբնակ վտարանդի գործիչ, կառավարության նախկին աշխատակից Ռամիս Յունիսի տված հարցազրույցը քառօրյա ռազմական գործողությունների մասին: Այստեղ նա բացահայտում է աղբբեջանական տեղեկատվական հոսքերի անճշտությունը: Ռամիս Յունիսը հայտնում է, որ աղբբեջանական լրավամիջոցների կողմից այնպիսի թյուր կարծիք է տարածվել, կարծես թե աղբբեջանցիները գրավել են Արցախը, սակայն այս ամենը հասարակության ուշադրությունը այլ ուղղությամբ թեքելու նպատակ է հետապնդում<sup>24</sup>: Այսպիսով՝ ծագումով աղբբեջանցի գործիչն արձանագրում է մեծածավալ կեղծ տեղեկատվության ամկայությունը:

Փաստորեն՝ ներքին լսարանում աղբբեջանական իշխանությունների հիմնական գործելաոճը ապատեղեկատվություն տարածելն է, որը սովորաբար երկարաժամկետ ներգործության չի ունենում և կարող է ընդամենը կարճաժամկետ դրական հասարակական կարծիքի հենք լինել: Դա նպատակաուղղված է հասարակության վրա վերահսկողության հասնելու ուշադրության շեղման միջոցով:

**բ. Արտաքին լսարան.** այստեղ տեղեկատվական գործողությունների թիրախը միջազգային հանրությունն է: Ինչ վերաբերում է թյուրքալեզու հատվածին (հիմնականում Թուրքիայի, Իրանի թյուրքալոս ժողովուրդներ և այլն), Աղբբեջանը, ինչ խոսք, ունի բնական դաշնակիցներ: Վերջինիս ազդեցության լրատվամիջոցների յուրաքանչյուր քայլ թյուրքալեզու լսարանում կարող է ընկալելի և ընդունելի լինել: Այս առումով

---

<sup>24</sup> Eurasia Daily, Азербайджанский политолог-эмигрант: На карабахском фронте нет детей наших олигархов. Подробнее <https://eadaily.com/ru/news/2016/04/18/azerbaydzhanskiy-politolog-emigrant-nakarabahskom-fronte-net-detey-azerbaydzhanskih-oligarhov>, 18 апреля, 2016.

Աղբբեջանը ունի առավելություն, իսկ հայկական հակազդեցության հնարավորությունները սահմանափակ են: Թեև անհրաժեշտ է փաստել, որ Իրանի թյուրքախոս բնակչության շարքերում հակահայկական տրամադրությունները ակտիվ ընթացք չունեցան՝ սփյուռքի հայերի և իրավիճակից բանիմաց մարդկանց հակազդեցության շնորհիվ: Սակայն խնդիրն այլ էր արևմտյան և ռուսական հատվածում: Հաշվի առնելով անսահման տեղեկատվական աղբյուրների առկայությունը՝ այստեղ հիմնականում անդրադարձ ենք կատարել սկզբունքային որոշ դրվագների և մեջբերել ենք հիշարժան որոշ նյութեր, ելույթներ, մեջբերումներ և կարծիքներ:

Նախ ռազմական գործողությունների առաջին ժամերից աղբբեջանական մամուլը ակտիվություն չէր դրսևորում և ոչինչ չէր հրապարակում կատարվող իրադարձությունների մասին, այնինչ հայկական մամուլն արդեն ողողված էր իրադարձությունների լուսաբանմամբ: Սա դրական արդյունք ապահովեց հայկական կողմի համար: Միջազգային ճանաչում ունեցող մի շարք լրատվամիջոցների («Մի-Էն-Էն», «Բի-Բի-Մի», «Նյու Յորք Թայմս», «Վաշինգթոն Փոստ») ներկայացուցիչներ եղան Արցախում և տեղից լուսաբանեցին իրադարձությունները, և աղբբեջանական կողմի այս թերացումը միջազգային տարբեր լրատվամիջոցների ու լրագրողների համար հնարավորություն ստեղծեց հղում տալու հենց հայկական աղբյուրներին: Տասնյակ լրագրողներ աշխարհի ճանաչված լրատվամիջոցներից սեփական նյութերը տեղում պատրաստելու համար ժամանեցին Ստեփանակերտ, իսկ Աղբբեջանը չհամագործակցեց միջազգային լրատվամիջոցների հետ: Հատկանշական է վրացական «Ռուսթավ-2» հեռուստարձևերության՝ Արցախում աշխատած լրագրող Դավիթ Կակուլիայի համոզմունքը. «Տեղեկատվական պատերազմում հաղթեց Երևանը: Այս փաստը հաստատում էին նաև տեղում աշխատող միջազգային լրագրողները: Հաղթանակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայկական կողմից, ընդհուպ մինչև շփման գիծ, մամուլի համար սահմանափակումներ չկային: Աղբբեջա-

նում մի շարք բյուրոկրատական գործընթացներով պետք էր անցնել և ապա հավատարմագրման համար որոշ ժամանակ սպասել»<sup>25</sup> :

Քառօրյա պատերազմի օրերին Ադրբեջանը գերծ չմնաց անախորժ իրավիճակներից՝ կապված լրագրողների գործունեության և նրանց ազատությունների ոտնահարման հետ: Խոսքը «Լայֆնյուզի» լրագրողների մասին էր, որոնք վտարվեցին Ադրբեջանից, քանի որ փորձել էին օբյեկտիվորեն ներկայացնել սահմանին և շփման գծում առկա լարված իրավիճակը: Համանուն լրատվամիջոցը հայտնում է, որ Ադրբեջանի իշխանությունները փորձել են ստիպել «Լայֆնյուզի» լրագրողներին հրապարակել իրենց համար շահավետ տեղեկատվություն (մասնավորապես պնդել, որ հայկական կողմն է առաջինը կրակ բացել, լուսաբանել իրադարձությունները «այնպես, ինչպես իրենց է անհրաժեշտ»<sup>26</sup> և այլն), որից լրագրողները հրաժարվել էին: Որպես հետևանք՝ լրագրողներին վտարել էին երկրից: Ադրբեջանի ԱԳՆ-ը, պատշաճ կերպով չմեկնաբանելով լրագրողներին Ադրբեջանից վտարելու պատճառները, փորձեց այդ խնդիրը կապել լրագրողների՝ հավատարմագրում չունենալու հանգամանքի հետ:

Ի հեճուկս Բաքվի իշխանությունների նման դիրքորոշման՝ հայկական կողմի հստակ քայլերի շնորհիվ արտասահմանից ժամանած լրագրողները պատշաճ կերպով տեղեկացվեցին տիրող իրավիճակի վերաբերյալ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ օտարերկրյա լրագրողներին հստակ ներկայացվեց, որ ռազմական գործողությունները ոչ թե Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի, այլ և Ադրբեջանի և Արցախի միջև են: Սա տեղեկատվական դաշտում որոշակի ձեռքբերում էր, քանի որ ադրբեջանական կողմի հետ որպես հավասար կողմ ներկայացվում էր հենց Արցախի Հանրապետությունը:

---

<sup>25</sup> Սիմոնյան Ա., Վրաստանից լրագրողները քննարկել են Վարաբաղյան հակամարտությունը, <http://www.aliq.ge/%D5%BE%D6%80%D5%A1%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6/D5%B0%D5%A5%D5%BC%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D6%84%D5%B6/0/>, 19.04.2016.

<sup>26</sup> МВД Азербайджана просило журналистов исказить данные о ситуации в НКР, 05.04.2016, <https://life.ru/t/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/195000>.

Արևմտյան հայտնի լրատվամիջոցների մշտադիտարկումը վկայում է, որ հրապարակվող նյութերը օբյեկտիվ չեն, և դրանցում հստակորեն չի մատնանշվում պատերազմի սանձազերծող կողմը: Սա սկզբունքային խնդիր է մեզ համար, քանի որ հայկական կողմը դիտվում է որպես «պատերազմ սանձազերծող» հավասար կողմ, և բացակայում է անվանական մոտեցումը:

«Նյու Յորք Թայմսը» գրում է չորսօրյա բախումների մասին: Հոդվածագիրը մեջբերում է հայ դիրքապահի խոսքերը<sup>27</sup>. «Եթե կարիքը լինի, Ղարաբաղի բանակը պատրաստ է լուծել խնդիրները ուժի կիրառմամբ»: Մեկ այլ դիրքապահ նշում է, որ թեև համեմատական դադար է, սակայն «ցանկացած զինադադար ժամանակավոր է... մենք պատրաստ կլինենք»: Հոդվածում նշվում է, որ լրագրողները իրենց աչքով տեսան և լուսաբանեցին ռազմական գործողությունների հետևանքները, ինչպես նաև արձանագրեցին «Սմերչ» համազարկային հրթիռային համակարգի հասցրած վնասների մասին, որի մասին, ի դեպ, պաշտոնական Բաքուն հայտարարել էր, թե չի կիրառել: Սա վկայում է այն մասին, որ Ադրբեջանը ապատեղեկատվություն է տարածում ոչ միայն ներքին լսարանում, այլև արտաքին լսարանում:

«Բի-Բի-Սին» ևս մեջբերում է հայ զինվորների հարցազրույցից: Այստեղ նշվում են ադրբեջանական կողմի նախահարձակ կրակոցների մասին, որոնց հայ զինվորները տվել են համարժեք պատասխան: «Տարբերություն չկա, որ Լեռնային Ղարաբաղը ճանաչված հանրապետություն չէ, մենք կռվում ենք մեր հողի համար»<sup>28</sup>, – հայ դիրքապահի խոսքերից մեջբերում է լրատվամիջոցը: Պետք է փաստել նաև, որ «Բի-Բի-Սին» տարբեր նյութերում հանդիպում ենք որոշ պիտակավորումների: Հայկական ուժերին վերագրվում է «էթնիկ հայ-անջատողական» (ethnic Armenian separatist), «անջատողական ուժեր» (separatist forces), ինչպես նաև «գրավյալ տարածքներ» (occupied territories) և այլն: Այսպիսի պի-

---

<sup>27</sup> **Kramer E. Andrew**, Armenia and Azerbaijan Halt Fighting on Border, April 5, 2016, <http://www.nytimes.com/2016/04/06/world/europe/armenia-and-azerbaijan-halt-fighting-on-border.html>.

<sup>28</sup> Nagorno-Karabakh conflict: A soldier's view from the frontline, <http://www.bbc.com/news/world-europe-36019192>, April 11, 2016.

տակավորումները, ինչ խոսք, բացասական են անդրադառնում հայկական երկու հանրապետությունների միջազգային իմիջի վրա: Անհրաժեշտ է մեծ ջանքեր գործադրել միջազգային հանրությանը ներկայացնելու, լուսաբանելու արցախյան զարգացումների իրական պատկերը:

«Մի-Էն-Էնը» մեջբերում է Արցախի նախագահի խոսնակ Դավիթ Բաբայանի հետ հարցազրույցն այն մասին, որ Ադրբեջանը ահաբեկչական գործունեություն է ծավալել խախտելով միջազգային իրավունքը<sup>29</sup>:

«Վաշինգթոն Փոստի» հեղինակ Դեյվիդ Իգնատիոսն հրապարակեց «Ղարաբաղ. վերսկսված հակամարտություն Կովկասում» սյունակը<sup>30</sup>: Այստեղ սյունակագիրը մեջբերում է ԼԳՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանի հետ առաջնագծում ունեցած զրույցը. «Եթե պատերազմը վերսկսվի, մենք ոչ միայն արժանի հակահարված կտանք, այլև առաջ կշարժվենք»: «Դեպի օդանավակայան տանող ճանապարհին կարելի է տեսնել տարեց կնոջ և տղամարդու քարե հուշարձանը: Երևում են միայն նրանց գլուխները, իսկ մարմինները՝ թաղված են հողում: Հուշարձանի թաքնված ուղերձն է՝ «Մենք այստեղից չենք գնալու: Առջևում երկար, անզիջում հակամարտություն է», – եզրափակում է սյունակագիրը:

Այսպիսով Ադրբեջանի ապակառուցողական մոտեցումները դրսևորեցին նաև տեղեկատվական ոլորտում, և տեղեկատվական փակ համակարգը բերեց նրան, որ հայկական կողմի տեղեկատվական քաղաքականության դերն ավելի մեծացավ: Արևմտյան լրատվամիջոցները, չնայած որոշ ոչ հայանպաստ սկզբունքային եզրերի կիրառմանը, փորձեցին բազմակողմանի ներկայացնել տեղեկատվությունը: Այստեղ հարկ է նշել, որ Ադրբեջանը չունեցավ առավելություններ տեղեկատվական պատերազմում: Կարելի է դրական համարել այն, որ արտասահմանյան լրագրողները, այնուամենայնիվ, ներկայացնում են նաև արցա-

---

<sup>29</sup> **Elliott C. McLaughlin**, CNN, Deep-seated animosity paves way for Armenia, Azerbaijan violence, <http://edition.cnn.com/2016/04/03/asia/armenia-azerbaijan-nagorno-karabakh-explainer/index.html>.

<sup>30</sup> **Ignatius D.**, Karabakh: A renewed conflict in the Caucasus [https://www.washingtonpost.com/opinions/a-renewed-conflict-in-the-caucasus/2016/04/26/e6c2c344-0bec-11e6-a6b6-2e6de3695b0e\\_story.html](https://www.washingtonpost.com/opinions/a-renewed-conflict-in-the-caucasus/2016/04/26/e6c2c344-0bec-11e6-a6b6-2e6de3695b0e_story.html), April 26, տե՛ս <http://www.mediamax.am/am/news/karabakh/18048/#sthash.jSnvJCPc.dpuf>.

խյան տեսակետը: Հավելենք նաև, որ Ադրբեջանը մեծ ջանքեր է գործադրում միջազգային հանրության մոտ իրեն «գոհի կարգավիճակում» ներկայացնելու համար: «Լայֆնյուզի» ռուս թղթակցի հետ կապված միջադեպը դրա վառ ապացույցն է:

**գ. Հայկական լսարան:** Հայ հասարակության համախմբվածության և խունապի բացակայության շնորհիվ ադրբեջանական տեղեկատվական գործողությունները հայության շրջանակներում արդյունքի չհասան: Հայ մասնագետները փաստում են, որ լրատվական դաշտում հայկական կողմը բավականին արհեստավարժ գտնվեց. հայկական որևէ կայք, որևէ լրատվամիջոց ադրբեջանական ապատեղեկատվության գոհ չգնաց՝ լուրեր վերցնելով և տարածելով: Իսկ ադրբեջանական որոշ տեղեկատվական-հոգեբանական քայլեր բավականին պարզունակ էին: Քարոզչական դաշտում հայտնվեցին հայկական անուններով բազմաթիվ կեղծ օգտատերեր, որոնք, տեղեկատվություն կորզելու նպատակով հայատառ հարցեր էին ուղղում հայ օգտատերերին, թե ինչպիսին է դրությունը Արցախում, ինչ նորություն կա Արցախից և այլն: Բնականաբար կեղծիքը բացահայտ էր և չէր կարող որևէ ազդեցություն կամ հետևանքներ ունենալ:

Տեղեկատվական անվտանգության մասնագետ Ս. Մարտիրոսյանը նշում է, որ խունապ առաջացնելու նպատակով ադրբեջանցի կեղծ օգտատերերը, հիմնվելով իբրև ճակատում գտնվող իրենց ծանոթների պատմածների վրա, լուրեր էին տարածում, թե նրանք իրենց աչքերով տեսել են հետևանքները. «ամեն ինչ կորած է»<sup>31</sup>: Սոցցանցերում, ըստ որոշ տվյալների, ադրբեջանական կողմից կեղծ էջերով օգտատերերի և իրական մարդկանց մի ամբողջ բանակ է մասնակցել տեղեկատվական գործողություններին. «Razm.info» կայքի ռազմական նորությունների համակարգող Կարեն Վրթանեսյանը նշում է, որ «Ֆեյսբուքում» արգելափակվել է մոտ 2000 ադրբեջանցի օգտատերեր<sup>32</sup>: Նույնիսկ ադրբեջա-

<sup>31</sup> **Мартirosян С.**, Армяно-азербайджанское противостояние в медиапространстве, [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=14593](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=14593), 08.04.2016.

<sup>32</sup> В ходе боевых действий соцсетях действовала целая армия азербайджанских фейков, [http://www.yerkramas.org/article/102545/ekspert-v-xode-boevyx-dejstvij-socsetyax-dejstvovala-celaya-armiya-azerbajdzhanskix-fejkov?\\_utl\\_t=fb](http://www.yerkramas.org/article/102545/ekspert-v-xode-boevyx-dejstvij-socsetyax-dejstvovala-celaya-armiya-azerbajdzhanskix-fejkov?_utl_t=fb) 06.04.2016.



նական լրատվամիջոցների կողմից շրջանառության մեջ դրված որոշ տեղեկատվական հոսքեր հնարավոր չէ հասկանալ. արդյո՞ք դրանք չիմացության արդյունք են, թե պարզապես նպատակային ապատեղեկատվություն: Հեռուստահաղորդավարուհի Նազենի Հովհաննիսյանին՝ որպես վարձու դիպուկահար ներկայացնելը բավականին պարզունակ քայլ էր, և հայ օգտատերերի մոտ այն ծիծաղելի հակազդեցություն ունեցավ:

Հայկական կողմի տեղեկատվական գործողություններն ավելի համակարգված և խորքային եղան: Բազմիցս տարբեր լրատվամիջոցներով լուսաբանվեց, որ ադրբեջանական զինվորների գործողությունները նման են Իսլամական պետության ահաբեկիչների ձեռագրին: Այս քայլով հակառակորդը սկսեց ասոցացվել ահաբեկիչների հետ, իսկ տեղեկատվական պատերազմում մեծ կշիռ ունի հակառակորդին երկարաժամկետ բացասական կերպարի վերագրումը: Եթե համեմատենք ադրբեջանական քարոզչական մեթոդների հետ, ապա դրանք հիմնականում կարճաժամկետ լսարանի վրա ազդեցություն թողնելու համար են, իսկ հակառակորդին ահաբեկիչ-պետություն իմիջի վերագրումը երկար ժամանակ կարող է պիտակ դառնալ տվյալ պետության վարկանիշին: Այսպես՝ կանադական «the rebel» հարթակում բլոգեր Ուիլլիամ Հադրիանը, անդրադառնալով ադրբեջանական վայրագություններին, նշում է «Իսլամական պետության նման նրանք կայրեն հնադարյան քրիստոնեական եկեղեցիները, որպեսզի հերքեն հայերի պատմական ներկայությունն այնտեղ»<sup>33</sup>: Միաժամանակ «Ալիս-բոնապետ» բառակապակցությունը սկսեց ավելի շատ շրջանառվել տեղեկացված միջազգային լսարանի կողմից:

Հայկական կողմի համար ձեռքբերում էր այն, որ շահարկվեցին Ադրբեջանի տարածքում ապրող կովկասյան և իրանական ծագում ունեցող տեղաբնիկների հիմնախնդիրները. սոցցանցային լրահոսից հնարավոր եղավ պարզել, որ հակառակորդ կողմի գոհերի թվում բավակա-

---

<sup>33</sup> **Hadrian W.**, Armenia and Azerbaijan: The war you aren't hearing about, [http://www.the-rebel.media/armenia\\_and\\_azerbaijan\\_the\\_war\\_you\\_aren\\_t\\_hearing\\_about](http://www.the-rebel.media/armenia_and_azerbaijan_the_war_you_aren_t_hearing_about), April 07, 2016.

նին մեծ տոկոս են կազմում տեղաբնիկ ժողովուրդներից կոմկասյան պարսիկները՝ թաթերը, իրանական ծագում ունեցող թալիշները, ինչպես նաև լեզգիները: Այս առումով հիշատակման արժանի է թաթական «Շիրվանի ազատագրության ճակատ» քաղաքական կազմակերպության այն հայտարարությունը, որ սեփական ժողովրդի զավակները չպետք է ենթարկվեն Բաքվի բռնապետական ռեժիմին, փոխարենը պետք է թողնեն արցախյան դիրքերը և վերադառնան իրենց բնակավայրեր:

Ամփոփելով հայկական լսարանում Ադրբեջանի տեղեկատվական գործողությունների արդյունքները՝ փաստենք, որ այն ազդեցիկ ներգործություն չունեցավ հասարակական տրամադրությունների վրա՝ համախմբվածության և միասնականության շնորհիվ: Միաժամանակ հայկական կողմի համարժեք քայլերը առավել խորքային և արժանահավատ եղան, ինչի մասին փաստում են ոչ միայն հայ, այլև օտարերկրացի մասնագետները:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության 3 հիմնական շեշտադրումները:
- Ներքին լսարանում մանիպուլյացիայի ինչպիսի՞ ռազմավարություն էին նախընտրել Ադրբեջանի իշխանությունները:
- Արտաքին լսարանում քարոզչական ոլորտի ինչպիսի՞ թերացումներ ունեցավ Ադրբեջանը, և որո՞նք էին հայկական կողմի առավելությունները:
- Հայկական լսարանի վրա ներգործության ինչպիսի՞ քաղաքականություն էր վարում հակառակորդը:
- Քարոզչական ինչպիսի՞ քայլեր ձեռնարկեց Ադրբեջանը «ֆեյսբուքյան ճակատում»:

## **Լրացուցիչ առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար**

### **Ներկայացնել՝**

- Հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմների հիմնական շրջափուլերը:
  - Հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտության մեջ հայկական կողմի նախընտրած մարտավարության սկզբունքները:
  - Ադրբեջանի կողմից իրականացվող տեղեկատվական պատերազմներն ի՞նչ հիմնական նպատակներ են հետապնդում:
  - Որո՞նք են Ադրբեջանի և Թուրքիայի կողմից սանձազերծված տեղեկատվական պատերազմների մարտավարության հիմնական տարբերությունները:
  - Հայ-ադրբեջանական կիրճապատերազմները:

## **Թեմա 11.**

### **Իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմները 21-րդ դարում**

Իսլամական հեղափոխության տարիներից Իրանի և ԱՄՆ-ի միջև ստեղծված հակասությունները սուր բնույթ ստացան հատկապես 21-րդ դարի սկզբին: 2001 թ. սեպտեմբերի 11-ի հայտնի իրադարձություններից հետո տեղեկատվական բուռն գրոհների ենթարկվեցին իսլամադավան մի շարք երկրներ, այդ թվում՝ Իրանը, որը մեղադրվեց ահաբեկչական գործունեություն ծավալելու և միջազգային ահաբեկչությանը սատարելու մեջ: Հետաքրքրական է, որ արևմտյան տերությունները չկարողացան հաստատել Իրանի մասնակցությունը կամ աջակցությունը միջազգային ահաբեկչությանը: Այնուամենայնիվ, նման մեղադրանքների առկայությունն արդեն դարձավ տեղեկատվական պատերազմների խորացման և Թեհրանի դեմ ճնշումներ գործադրելու պատճառ: Իսլամական Հանրապետությունը ոչ միայն ժխտեց իր հասցեին ուղղված մեղադրանքները, այլև ինքը մեղադրեց ԱՄՆ-ի որոշ ուժերին ահաբեկչական վարքագիծ դրսևորելու մեջ:

2001-2015 թթ. ժամանակաշրջանում ԻԻՀ-ԱՄՆ տեղեկատվական հակամարտության թեման վերածվել էր միջազգային հանրության ուշադրության կենտրոնում գտնվող խնդրի: Հեղինակություն ունեցող լրատվական գործակալությունները, հեռուստաընկերությունները, էլեկտրոնային մամուլը ողողված էին ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից Իրանին հասցեագրված մեղադրանքների, նախազգուշացումների կամ պատժամիջոցների կիրառման մասին քննարկումներով, ինչպես նաև ԻԻՀ ղեկավարության կողմից ԱՄՆ-ի, նրա համախոհների հասցեին հնչող սպառնալիքների մասին տեղեկատվությամբ:

Իհարկե, 2015 թ. ի վեր կարծես թե արևմտյան տերությունների և Իրանի միջև հարաբերությունները սկսեցին բարելավվել, սակայն կող-

մերի միջև «քննադատական» հարաբերությունները դեռևս շարունակեցին զգացնել տալ:

Համաձայն «Էյ-Բի-Սի Նյուզի» (ABC NEWS) տեղեկությունների՝ դեռևս ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ. Բուշ Կրտսերի նախագահության տարիներին հաստատվել էր մի ծրագիր, որը ենթադրում էր անհանդուրժողական արագացված արշավ Իրանի Իսլամական Հանրապետության դեմ<sup>34</sup>: Վաշինգտոնի նպատակն էր Իրանի վարչակազմի փոփոխումը և ամերիկամետ իշխանության հաստատումը նախկին իրանական թագավորական վտարանդիներով: Իրան-ԱՄՆ հարաբերություններին մասին «Թայմս» ամսագրին տված հարցազրույցում Թեհրանի համալսարանի քաղաքագետ Ս. Ջիբաքալանը նշում է. «ԱՄՆ-ը փորձում է խեղաթյուրման ենթարկել Իրանին և օգտագործել ընդդիմադիրների քննադատությունները երկրի ներսում՝ աջակցելով նրանց: Միացյալ Նահանգները փորձում է «թավշյա» հեղափոխություն անել Իրանում, որը նա իրականացրեց Ուկրաինայում և հետխորհրդային որոշ երկրներում»<sup>35</sup>: Հիրավի, ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցների պարբերական ուսումնասիրումը ցույց է տալիս, որ Վաշինգտոնը քայլեր է ձեռնարկում («փափուկ» ուժի կիրառմամբ, մարդկանց մեջ անվստահության, վախի մթնոլորտ ստեղծելով) երկրի ներքին անցուղարձերին ցանկալի ընթացք տալու ուղղությամբ:

Տեղեկատվական հակամարտության ոլորտում տանուլ չտալու համար Իրանի իշխանությունները քայլեր են ձեռնարկում նոր ռադիո և հեռուստասալիքներ ստեղծելու ուղղությամբ, որոնք կհեռարձակվեն անգլերեն և արաբերեն լեզուներով: Միաժամանակ ջանում են օգտագործել իրանական սիյուռքի հնարավորությունները Վաշինգտոնի քայլերը տեղեկատվական դաշտում խափանելու համար: Իրանը կիրառում է հետևյալ սկզբունքը. «ԻԻՀ ՋԼՄ-ներում թույլատրված է խոսքի ազատությունը, գաղափարների և մտքերի տարածումը այնքանով, որքանով պահպանված են իսլամական նորմերը և երկրի շահերը»: Ուստի, ԻԻՀ

---

<sup>34</sup> St'u **Margolis Er.**, Seeing Through All the Propaganda About Iran // Eric Margolis Archives, <http://www.lewrockwell.com>, 23.06.2009.

<sup>35</sup> **Daraghi B.**, If Obama Gambit Works, Tehran's Hard-Liners Would Suffer // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 07.04.2009.

տարածքում ՁԼՄ-ների խիստ գրաքննություն է գործում, որի միջոցով իրանցիների համար արևմտյան տեղեկատվական որոշ հոսքեր անհասանելի են դառնում: Հատկապես ուշադրության կենտրոնում են ԱՄՆ-ի այնպիսի լրատվամիջոցներ, ինչպիսիք են «Սի-Էն-Էնը», «Նյու Յորք Թայմսը», «Վաշինգտոն Փոստը» և այլն:

ԱՄՆ-ի նախագահ Բ. Օբամայի ղեկավարության սկզբից պարզ դարձավ, որ նա շարունակելու է Ջ. Բուշի նախաձեռնած մարտավարությունը: Նախագահին Նոբելյան մրցանակ շնորհվեց ինը ամիս ղեկավարելուց հետո: Նա գնահատվեց «մարդկանց միջև համագործակցությունը խթանելու և միջազգային դիվանագիտությունը ուժեղացնելու հատուկ ջանքերի համար»,– գրում է «Լոս Անջելես Թայմսը»: Նշվում էր, որ նախագահը աշխարհին տվել է «հույս՝ ապագայի հանդեպ»: Մեծ ուշադրության արժանացան միջուկային զենքի չտարածման խնդիրներում Օբամայի ջանքերը: Ի պատասխան դրան՝ նախագահը նշեց. «Այս ամենն ինձ համար լոկ նվեր չէ, այլ գործի անցնելու կոչ»: Հատկանշական է, որ նախագահը խոսում է խաղաղության, համերաշխության և համագործակցության մասին՝ միևնույն ժամանակ 30.000 հազար զինյալներ ուղարկելով Աֆղանստան: Այս հողվածը և հետագայում ծավալված իրադարձությունները վերլուծելով՝ կարող ենք ենթադրել, որ լրատվամիջոցները ներկայացնում են մի բան, սակայն գործնականում արվում է մեկ այլ բան:

Ընդհանուր առմամբ կարող ենք առանձնացնել իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմների մի քանի կարևոր շրջան.

- մինչեղավորիսական շրջան (մինչև 1978 թ.), երբ կողմերը թշնամական չէին տրամադրված միմյանց հանդեպ: Կողմերի միջև առկա էին համագործակցության բազում եզրեր՝ սկսած Երկրորդ համաշխարհային պատերազմից:
- 1978-1979 թթ. հեղափոխությունից մինչև 2001 թ., երբ թե՛ ամերիկյան, թե՛ իրանական լրատվամիջոցները, որոշակի զգոնություն պահպանելով, քննադատում էին միմյանց,
- 2001 թ.-ից հետո ընկած ժամանակահատված, երբ սրվեցին հակասությունները: Այս ժամանակահատվածը հատկապես աչքի է

ընկնում տեղեկատվական պատերազմների ակտիվ դրսևորմամբ: Կարող ենք առանձնացնել 21-րդ դարի տեղեկատվական պատերազմների մի կարևոր ենթափուլ, երբ ուշադրության կենտրոնում հայտնվեցին էլեկտրոնային լրատվամիջոցները և նոր մեդիան (2009-2015 թթ.):

- 2015 թ., երբ սկսվեց քննարկվել Իրանի դեմ պատժամիջոցների չեղարկման թեման, և կողմերի միջև սկսեցին ձևավորվել երկխոսություն և համագործակցության եզրեր:

Հաշվի առնելով 2001-2015 թթ. ընկած ժամանակահատվածում տեղեկատվական պատերազմների ակտիվությունը՝ կանդիդատնանք հիմնականում նշված շրջանին:

Միացյալ Նահանգների խոշոր լրատվամիջոցները, այդ թվում՝ «Նյու Յորք Թայմսը», «Լոս Անջելես Թայմսը», «Վաշինգտոն Փոստը», «Սի-Էն-Էնը» և այլն, ներգրավված են Իրանի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ լուսաբանման գործողություններում: Իրանական կողմը տեղին չի համարում իր հասցեին ուղղված հատորագրությունները և միաժամանակ հանդես է գալիս ԱՄՆ-ի և նրա համախոհների հասցեին ուղղված քննադատություններով ու մեղադրանքներով: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել հակամարտության մի քանի ուղղություններ, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում թե՛ ամերիկյան, թե՛ իրանական էլեկտրոնային լրատվամիջոցներում:

*1. Իրանի արտաքին քաղաքականության որոշ հիմնահանգիտների լուսաբանումը ԱՄՆ-ի էլեկտրոնային ՉԼՄ-ներում*

Դեռևս 2006 թ. ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում ակտիվորեն քննարկվում էր Իրանի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու տեսակետը. «Դիվանագիտությունը ոչինչ չի անում կասեցնելու Իրանի միջուկային սպառնալիքը. ուժի ցուցադրումը միակ լուծումն է: Մենք պետք է ռմբահարենք Իրանը»<sup>36</sup>, – գրում է ամերիկյան Էնթերփրայզ ինստիտուտի (American Enterprise Institute) գիտնական Ջ. Մուրավչիկը: Հաշվի առնելով, որ Ռուսաստանը կողմնակից չէ Իրանի դեմ խիստ պատժամիջոցների կիրառմանը, իսկ ԻԻՀ նախագահը հայ-

---

<sup>36</sup> Muravchik J., Bomb Iran// Los Angeles Times, www.latimes.com, 19.11.2006.

տարարում է իսլամական հեղափոխության՝ այլ երկրներ արտահանելու մասին, հեղինակը գրում է. «Մնում է միայն հարվածել Իրանին»<sup>37</sup>: «Լուս Անջելես Թայմսին» տված հարցազրույցում իսրայելցի ռազմական մի ներկայացուցիչ նշում է, որ Իսրայելը կհարձակվի Իրանի վրա և մի քանի օրում կվերացնի իրանական Նաֆանգի ատոմային կայանը, կոչնչացնի Իրանի 10 միջուկային կենտրոններ<sup>38</sup>:

Նշենք, որ ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցները հաճախ են մնան հայտարարություններ տարածում, սակայն հետագայում պարզ է դառնում, որ այդ ամենը վախի մթնոլորտ ստեղծելու համար է:

Այսպիսով՝ տեղեկատվական պատերազմներում ամերիկյան լրատվամիջոցների կողմից այսօր կիրառվող կարևոր միջոցներից մեկը Իրանում վախի մթնոլորտի ստեղծումն է: Դա Իրանի դեմ պատերազմի հավանականության քննարկումն է, որոնց միջոցով փորձ է արվում ցույց տալու, որ ռազմական ուժի կիրառումը տեղի կունենա մոտ ապագայում: Դրա վառ ապացույցը եղավ հետևյալը. 2011թ. աշնանը Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին Իրանի վերաբերյալ իր հերթական հայտարարությունում վերջինիս մեղադրեց ատոմային ռազմական ծրագրի ունենալու մեջ, այնուհետև, առանց որևէ երկիր մատնացույց անելու, հայտնեց Իրանի նկատմամբ հնարավոր նախազգուշական հարձակման մասին: Ի պատասխան՝ հետևեց Իրանի արտգործնախարարության արձագանքը. Արևմտյան Եվրոպայի վարչության պետ Հասան Թազիբը վերահաստատեց Իրանի միջուկային ծրագրի խաղաղ բնույթը՝ ավելացնելով, որ իրականությանը չհամապատասխանող հայտարարությունները կարող են տարածաշրջանում անկայունության պատճառ դառնալ<sup>39</sup>: Սա իրանա-ամերիկյան տեղեկատվական հակամարտության դասական օրինակ է, երբ «նախահարձակ» ամերիկյան լրատվամիջոցների տեղեկատվությանը հետևում է իրանական աղբյուրների «պաշտպանվողական» լրատվությունը՝ ժամանակ առ ժամանակ «հակահարձակում» գործելով:

<sup>37</sup> Muravchik J., Bomb Iran// Los Angeles Times, www.latimes.com, 19.11.2006.

<sup>38</sup> افزایش جنگ, 46, 1388 خرداد (2009 June), www.jangafzar.ir, No. 54.

<sup>39</sup> St'u http://www.entekhab.ir/fa/news/36907/, ۱۱ ۱۳۹۰ شهریور /սեպտեմբերի 2/, واکنش تهران به اظهارات سازکوزی درباره احتمال حمله به ایران:



Թեհրանը բազմիցս բարձրաձայնել է իր դիրքորոշման մասին. այն է՝ իր դեմ ռազմական ուժի կիրառման դեպքում կոչնչացվեն տարածաշրջանի բոլոր ամերիկյան ռազմակայանները և հարվածի կենթարկվեն նրա դաշնակիցները: Ի պատասխան ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմատենչ հայտարարությունների՝ ԻԻՀ բանակի հրամանատարներից Ջաֆարին նշում է. «Մեր հեռահար հրթիռները պատրաստ են ոչնչացնել Իսրայելի միջուկային կենտրոնները, և արդեն իսկ որոշված են հարձակման նպատակակետերը»: Նա ավելացրել է, որ Իրանն ունի 2000 կմ շառավղով հարվածող հեռահար հրթիռներ, որոնցով կարող է ոչնչացնել Իսրայելը<sup>40</sup>:

Այսպիսով՝ այն մթնոլորտը, որը ձևավորում են ամերիկյան լրատվամիջոցները, հակադեցուքյան է հանդիպում իրանական լրատվամիջոցների կողմից:

2007 թ. խստացվեցին ԻԻՀ դեմ տեղեկատվական գրոհները: Դրանց պատճառ դարձավ այն, որ ամերիկյան ՁԼՄ-ները հաղորդում էին, թե Իրանն անմիջական օգնություն է ցուցաբերում Իրաքում գործող ահաբեկիչներին: Նման քայլով կարծես Իրանին էին վերագրվում ԱՄՆ-ի՝ Իրաքում կրած անհաջողությունները, և ձևավորվում էր Իրանի կերպարը՝ որպես «ԱՄՆ-ի թշնամի»: Ինչպես նշում է Գ. Հարությունյանը, «Բեն Լադենը և Ալ-Կաիդան կորցրել են «թշնամու կերպարի» իրենց տեղեկատվական գրավչությունը: Իրաքում «թշնամին» այլևս անձնավորված չէ, ինչը տեղեկատվական հարթությունում թերացում է: Նման համատեքստում «իրաքյան թշնամու կերպարի» ձևավորումը տեղեկատվական-հոգեբանական տեսանկյունից հիմնավորված է և շահեկան»<sup>41</sup>:

2007 թ. ԻԻՀ նախագահի այցը Միացյալ Նահանգներ մեծ արձագանք գտավ ամերիկյան հասարակության շարքերում և, ինչպես վերլուծաբաններն են գտնում, նրան տվեց այն, ինչ ցանկանում էր՝ լեգիտիմություն: Նրա ելույթը Կոլումբիայի համալսարանում դրական արձագանք ունեցավ: «Աշխարհի վտանգավոր մարդկանցից մեկը՝ Իրանի նախա-

<sup>40</sup> جنگ افزار (2009 May), www.jangafzar.ir, No. 53, اردیبهشت 46, 1388 صفحه.

<sup>41</sup> Հարությունյան Գ., Իրան-ԱՄՆ հնարավոր զարգացումներ, www.noravank.am, 27.02.2007:

գահ Մահմուդ Ահմադինեժադը, լքեց Նյու Յորքը հաղթանակով<sup>42</sup>», – գրում է «Լոս Անջելես Թայմսը»: Անհրաժեշտ է նշել, որ ամերիկյան էլեկտրոնային լրատվամիջոցներում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ ԻԻՀ նախագահին վերագրվում է վտանգավոր լինելու կերպարը, ինչն էլ իր հերթին ենթադրում է զգուշանալ և հեռու մնալ նրանից:

Սպիտակ տան ներկայացուցիչները բազմիցս են այցելություններ կատարել Իրանին աջակցող պետություններ, մասնավորապես Չինաստան և Ռուսաստան՝ փորձելով վերջիններիս ետ կանգնեցնել Թեհրանին սատարելուց: Օրինակ՝ Պեկին կատարված այցելությունների ընթացքում փորձ է արվում համոզել չինացի պաշտոնյաներին քվեարկելու Իրանի դեմ պատժամիջոցներ կիրառելու օգտին: Ամերիկյան պաշտոնյաները, ըստ «Նյու Յորք Թայմսի», նշում են հետևյալ թեզը. «Եթե Իրանը շարունակի միջուկային զենք ստեղծելուն միտված գործունեությունը, Չինաստանի համար ավելի դժվար կլինի դիվանագիտական քայլեր ձեռնարկել Իրանում»<sup>43</sup>: Սակայն Պեկինը հաճախ թույլ չի տալիս Իրանի դեմ խիստ պատժամիջոցներ ընդունել, քանի որ Թեհրանի հետ բազմամիլիարդանոց պայմանագրեր է ստորագրել: Պեկինը համամիտ չէ ԱՄՆ-ի այն պատկերացումներին, որոնց համաձայն՝ Իրանը հույժ վտանգ է ներկայացնում: Փարիզում Ասիական կենտրոնի նախագահ, չինացի գիտնական Ֆրանսիս Գոդեմենթը նշում է. «Իրանի վերելքը մեզ համար վատ լուր չէ»<sup>44</sup>:

2010 թ. ԱՄՆ-ի պետքարտուղար Բլինթենի՝ Պարսից ծոցի երկրներ այցի ընթացքում Իրանի հասցեին հնչեցին մի շարք հայտարարություններ: Դրանցից մեկում նշվում էր. «Եթե Իրանը ձեռք բերի միջուկային զենք, կստեղծվի բավականին վտանգավոր իրավիճակ՝ հավանականորեն ձևավորելով միջուկային սպառազինությունների մրցավազք»:

ՌԳ նախագահի խոսնակը նշեց, որ Մոսկվան չի փոխել իր դիրքորոշումը և հավատում է, որ Իրանն ավելի ակտիվորեն կհամագործակցի

---

<sup>42</sup> **Rutten T.**, Ahmadinejad Walks Away With a Win // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 29.09.2007.

<sup>43</sup> **Wins M.**, China's Ties With Iran Complicate Diplomacy // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 29.09.2009.

<sup>44</sup> Նույն տեղում:

գերտերությունների հետ իր միջուկային ծրագրի հարցում: «Միջազգային հանրությունը պետք է հավաստիանա, որ այդ ծրագիրը հետապնդում է խաղաղ նպատակ»<sup>45</sup>:

Այսպիսով՝ ամերիկյան աղբյուրների փոխանցմամբ հայտնի է դառնում, որ Պեկինը և Մոսկվան համաձայն չեն ամերիկյան պաշտոնյաների տեսակետներին:

«Նյու Յորք Թայմսը», «Լոս Անջելես Թայմսը» ներկայացնում են, որ Օբամայի վարչակազմը Պարսից ծոցի իր համախոհների օգնությամբ ձգտում է պահպանել ճնշումն Իրանի նկատմամբ: Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի ընթացքում պետքարտուղար Քլինթոնը Իրանի հարևաններին կոչ արեց ուշադրության կենտրոնում պահել պատժամիջոցների սաստկացման խնդիրը: Լրագրողների հետ հարցազրույցում պետքարտուղարը նշեց. «Մենք չենք ցանկանում, որ որևէ մեկը մոլորեցվի մյուսի հետախուզության վերլուծությունների արդյունքում: Սա մեզ համար իրական մտահոգություն է: Մեր համախոհ գործընկերներից սկսնալու ենք, որքան հնարավոր է, զգոն լինել և անել առավելագույնը՝ նպաստելու պատժամիջոցների իրականացմանը»<sup>46</sup>: Այս հայտարարությունից հետո տարածաշրջանային մի քանի երկրներ Իրանի հետ խզեցին առևտրային որոշ կապեր:

Վաշինգտոնը տեղեկատվական պատերազմներում պիտակավորում է Թեհրանին՝ որպես տարածաշրջանային խաղաղության խոչընդոտ: ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյան, խոսելով Մերձավոր Արևելքում անցուղարձերի մասին, նշում է. «Այժմ Մերձավոր Արևելքում հիմնական խնդիրը Իսրայելը կամ իսրայելցիները չեն, այսուհետ դա Իրանն է: Կարծում են՝ արաբների խնդիրները լուծելու կարիք կա և այդ խնդիրները կապված են Իրանի հետ»<sup>47</sup>: Հոդվածի հեղինակը հավելում է. «Քանի դեռ չկա խաղաղություն, Իրանի ազդեցությունը արաբական

---

<sup>45</sup> **Landler M.**, Cowell A., Clinton Issues Another Warning to Iran // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 16.02.2010.

<sup>46</sup> **Landler M.**, Clinton Urges States to Maintain Iran Sanctions // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 09.01.2011.

<sup>47</sup> **Wright R.**, Iran: The Uninvited Wildcard in Mideast Talks // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 27.11.2007.

աշխարհում կշարունակի աճել»<sup>48</sup>: Անհրաժեշտ է նշել, որ արաբական երկրների մեծ մասը, ինչպես նաև Ռուսաստանը, Չինաստանը և եվրոպական որոշ երկրներ, համակարծիք չեն նշված տեսակետին: Եվրոպայի և ԱՄՆ-ի միջև Իրանի հետ հարաբերություններում կան տարբերություններ:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ ամերիկյան լրատվամիջոցները մեծ ջանքեր են գործադրում Իրանին որպես վտանգավոր պետություն ներկայացնելու համար, չնայած Չինաստանը, Ռուսաստանը և այլ երկրներ համաձայն չեն այդ տեսակետին: Այնուամենայնիվ, բարձրաստիճան պաշտոնյաների, դաշնակից երկրների կողմից հնչող հակաիրանական հայտարարությունները խորացնում են Թեհրանի նկատմամբ բացասական տրամադրությունները՝ խոչընդոտելով նրա միջազգային ինտեգրմանը: Իսկ այնպիսի էլեկտրոնային լրատվական աղբյուրներ, ինչպիսիք են «Նյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի» կայքերը, մեծապես նպաստում են ԱՄՆ-ի որդեգրած տեղեկատվական պատերազմի իրականացմանը:

Ի պատասխան ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների բազմաթիվ մեղադրանքների՝ Իրանի իշխանությունները համարժեք քայլեր են ձեռնարկում: Միացյալ ազգերի Գլխավոր ասամբլեայում ԻԻՀ նախագահը, խոսելով սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների մասին, մեղադրեց ԱՄՆ-ի «որոշ տարրերի», որոնք կազմակերպել են այդ հարձակումները, որպեսզի «առաջ տանեն իրենց նպատակները, զարգացնեն տնտեսությունը և փրկեն սիոնիստական վարչակարգը»: «Ամերիկացիների մեծ մասը, ինչպես նաև այլ ազգեր և քաղաքական գործիչներ, համաձայն են այս տեսակետին», – մեջբերում է «Նյու Յորք Թայմսը»<sup>49</sup>: Սա աննախադեպ էլույթ էր ԻԻՀ նախագահի կողմից, որից հետո ներկա գտնվող գործիչների մի մասը լքեց դահլիճը:

2011թ. փետրվարին իրանական լրատվամիջոցներում հայտարարություն տարածվեց, ըստ որի՝ երկու իրանական ռազմանավեր անցել

---

<sup>48</sup> **Wright R.**, Iran: The Uninvited Wildcard in Mideast Talks // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 27.11.2007.

<sup>49</sup> **MacFarquhar N.**, US Walks Out As Iran Leader Speaks // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 23.09.2010.

են Սուեզի ջրանցքը, մտել են Միջերկրական ծով և հասել Սիրիա: Սա Իրանի համար կարելի է համարել վերջին տարիների կարևոր ձեռքբերում, քանի որ Եգիպտոսի իշխանությունները մինչ այդ բոլոր չէին տալիս իրականացնել մնացած քայլ: Իսրայելի լրատվամիջոցները այս ամենը որակեցին որպես Իրանի նոր «ոտնահետք» տարածաշրջանում և հայտնեցին իր անհանգստությունը: 2010 թ. Եգիպտոսի հայտնի իրադարձություններից հետո տեղի իշխանությունները ընդհանուր լեզու գտան Իրանի հետ: Սա ցույց է տալիս, որ Իրան-Եգիպտոս լարված հարաբերությունները թուլանալու միտում ունեն: «1979 թ. ի վեր սա առաջին դեպքն էր, որ իրանական նավերը կարողացան անցնել Սուեզի ջրանցքը»,– հայտարարել է իրանական «Իռնա» լրատվական գործակալությունը<sup>50</sup>:

Իսլամական Հանրապետության այս քայլը ցույց է տալիս, որ Իրանը փորձում է նվազեցնել տարածաշրջանում եղած հակասությունները, լեզու գտնել հակամարտող երկրների հետ, որը բխում է Թեհրանի շահերից և խոչընդոտում է ԱՄՆ-ի՝ Իրանի մեկուսացմանը: Ի դեպ, խոսելով մերձավորարևելյան տարածաշրջանում խաղաղության մասին, փաստենք, որ վերջին 2 հարյուրամյակում Իրանը նախահարձակ չի եղել որևէ պետության վրա: Սա վկայությունն է այն բանի, որ Իրանն «ապակայունացնող ուժ» չէ տարածաշրջանային հակամարտություններում, ինչպես նշում են ԱՄՆ-ի լրատվամիջոցները: Քաղաքական մեկնաբան Ռ. Հովհաննիսյանն այս կապակցությամբ նշում է. «Տարածաշրջանում հենց ԱՄՆ-ն է «չարիքի առանցքը», որը ապակայունացման գործընթացում իր ուրույն դերակատարությունն ունի»<sup>51</sup>:

ԱՄՆ-ի լրագրողների հետ հանդիպման ժամանակ պատասխանելով լրագրողների հարցերին՝ Ահմադինեժադը նշեց, որ տեղեկատվական-հոգեբանական հակամարտության տեսքով լարվածություն ստեղծելը չի կարող լուծել հիմնահարցերը: «Մենք միշտ պատրաստ ենք երկխոսության»: «Մեր միջուկային ծրագիրը խաղաղ է»,– նշում է նախա-

---

<sup>50</sup> **Kershner Is.**, Israel Silent As Iranian Shpiss Transit Suez Channel // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 22.02.2011.

<sup>51</sup> Հեղինակի անձնական արխիվ, քաղաքական մեկնաբան Ռ. Հովհաննիսյանի հետ հարցազրույցի նյութեր, 10.02.2010:

գահը: Ահմադինեժադը մեղադրեց միջազգային տեսուչներին ճնշում գործադրելու և քննադատության համար՝ նշելով, որ նրանք կարող են տեղեկանալ յուրաքանչյուր քայլի մասին հենց իրենց վեբկայքերից: «Այն, ինչ անում ենք, օրինական է»<sup>52</sup>: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը Իրան-ԱՄՆ հարաբերությունների ապագան ԱՄՆ-ի վարքագծի հետ է շաղկապել՝ ընդգծելով, որ ամերիկյան իշխանությունները պետք է վերանայեն իրենց վարքագիծը և վերաբերմունքը, որպեսզի լուծվեն բոլոր խնդիրները<sup>53</sup>:

Ի պատասխան Իրանին ահաբեկչական պետություն անվանելուն՝ ԻԻՀ հոգևոր առաջնորդը տվեց իր պատասխանը: Իրանցի գիտնականների վրա հարձակումներ կազմակերպելու մեջ ԻԻՀ հոգևոր առաջնորդը մեղադրեց արևմտյան ուժերին՝ նշելով որ ահաբեկչությունը Վաշինգտոնի մարտավարությունն է: Այաթոլլահն ընդգծեց, որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները կեղծարարներ են, գործի են դնում ահաբեկչական մարտավարություն, որին զոհ են գնում խաղաղ քաղաքացիներ, մինչդեռ իրենք են դատապարտում ուրիշներին՝ որպես ահաբեկիչներ<sup>54</sup>: «Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան և արևմտյան որոշ կառավարություններ, որոնք աչքի են ընկնում ահաբեկչական վարքագծով, իրենց հռետորությանը ավելացրել են ահաբեկչության դեմ պայքարի հիմնահարցը», – մեջբերում է «Ֆարս Նյուզ» կիսապաշտոնական գործակալությունը Այաթոլլահ Խամենեյի խոսքերից<sup>55</sup>:

Իրանի դեմ տեղեկատվական գրոհներ սկսվեցին, երբ ԱՄՆ-ում Սաուդյան Արաբիայի դեսպանի նկատմամբ մահավորձ իրականացվեց: Իրանի պատասխանը հետևյալն էր. ԱՄՆ-ը ոչինչ չի խնայել Իրանի նկատմամբ դավադրություններ իրականացնելու համար, սակայն

---

<sup>52</sup> **MacFarquhar N.**, Iran's Leader Warns US As He Rebutts Criticism // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 21.09.2010.

<sup>53</sup> قطع ارتباط ايران و , مشرق نيوز ۳۱, ۱۳۹۰ شهریور , <http://www.mashreghnews.ir/fa/news/68083> , امریکا به ضرر دو طرف است.

<sup>54</sup> **Stu Mostaghi R.**, Sandels Al., Iran Slames US at Conference On Fighting Terrorism // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 26.06.2011.

<sup>55</sup> Նույն տեղում:

մինչ օրս հաջողություններ չի գրանցել<sup>56</sup>: Այս հարցը շաբաթներ շարունակ տարբեր լրատվամիջոցների քննարկման առարկան էր, ինչն էլ ավելացրեց Իրանի շուրջ եղած լարվածությունը, սակայն այդպես էլ ոչ մի իրեղեն ապացույց չգտնվեց այն հաստատելու համար:

Այսպիսով՝ արտաքին հարաբերություններում ԱՄՆ-ի լրատվամիջոցները որդեգրել են տեղեկատվական գրոհների այնպիսի քայլեր, որոնք ուղղված են Իրանի դիրքերի թուլացմանը, միջազգային կերպարի վատաբանմանը: Իրանական լրատվամիջոցները ոչ միայն դիմակայում են տեղեկատվական գրոհներին, այլև հանդես են գալիս Վաշինգտոնի դեմ սեփական նախաձեռնողական քայլերով:

*2. Իրանի ներքաղաքական խնդիրների ներկայացումը ամերիկյան էլեկտրոնային լրատվամիջոցներում*

«Նյու Յորք Թայմսը», «Վաշինգտոն Փոստը», «Լոս Անջելես Թայմսը» ակտիվորեն ներգրավված են Իրանի ներքին կյանքի անցուղարձեղի լուսաբանման գործում: Վերջին տարիներին ուշադրության կենտրոնում են հայտնվել հատկապես իշխանություն-ընդդիմություն, նախագահ-հոգևոր առաջնորդ հակամարտությունների, ինչպես նաև ներքին կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ հրապարակումները: Թեև Իրանն անընդունելի է համարում ԱՄՆ-ի, ինչպես նաև արևմտյան շատ լրատվամիջոցների գործունեությունը, որոնք մատուցվում են իրանցիներին, հատկապես երիտասարդներին՝ խաթարելով Իրանի ներքին կյանքը:

Իսլամական հեղափոխությունից ի վեր ԱՄՆ-ը քայլեր է ձեռնարկում կենտրոնական իշխանություններից առանձնացնելու իրանցի քրդերին, Ատրապատականի թյուրքախոս բնակչությանը, բելուջներին, ինչպես նաև թուլացնելու ոչ իսլամադավան համայնքները: Այս նպատակի իրագործման համար զանգվածային լրատվամիջոցները հիմնականում արբանյակային հեռարձակումների, հոր մեդիայի միջոցով փոքրամասնություններին ներարկում են անկախաձայն, ինքնուրույնություն ձեռք բերելու տրամադրություններ: Իրանի քրդերի օրինակը խոսքերիս

<sup>56</sup> Stéu خبرگزاری دانشجویان ایران, 1390/08/04, <http://isna.ir/isna/NewsView.aspx?ID=News-1877581>, آمریکا در راستای آسیب رساندن به ایران دائماً سرگرم توطئه‌ریزی است

վառ ապացույցն է: Քրդերը հիմնականում սունի ուղությունն են դավանում, սպրում են նաև թուրքիայում, Իրաքում, Սիրիայում: ԱՄՆ-ի և նրա դաշնակից Իսրայելի համար մեծ ցանկություն կլինեք բոլոր քրդերին միասին տեսնել: Այս նպատակին է ծառայում տեղեկատվական ակտիվ հոսքերի առկայությունը քրդերի շրջանում: Կան 16 հեռուստաալիքներ, որոնց հեռարձակումը հովանավորում է Արևմուտքը: Պաշտոնապես Իրանում դրանց հեռարձակումը չի թույլատրվում, օրինակ՝ «Քորդսաթ», «Քորդեսթան Թի-Վի», «Ռոզ», «Ռոզ Հալաթ», «Թիշկ Թի-Վի»: Սրանք հիմնականում քարոզում են կենտրոնական իշխանություններից առանձնանալու, քրդական լեզուն, մշակույթը տարածելու, միասնական Քուրդիստանի ստեղծման գաղափարները: Օրինակ՝ նման հաղորդում է «Միզեզերդ է սիասին», որը ցուցադրվում է «Ռոզ Հալաթ» և «Թիշկ Թի-Վիով»: Այս հաղորդումը քարոզում է քրդական լեզվի, մշակույթի տարածումն ու քրդերի միավորումը: Նման հեռարձակումների միջոցով ստեղծվում է հասարակական կարծիք: Արդյունքում սրվում են կողմերի միջև հարաբերությունները:

Ներկա ժամանակներում ևս քրդական հարցը բազմիցս դարձել է տարաձայնությունների պատճառ. Թեհրանը մեղադրում է ԱՄՆ-ին, Մեծ Բրիտանիային և Իսրայելին Իրանի սահմանների մոտ լարվածություն հրահրելու մեջ, իսկ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Իսրայելը Իրանին մեղադրում են սահմանների մոտ հարձակումներ կազմակերպելու, քրդերին սպանելու մեջ<sup>57</sup>:

«Նյու Յորք Թայմսում» շատ են հանդիպում Իրանի ներքին հակասությունների վերաբերյալ նյութեր: 2009 թ. նախագահական ընտրություններից հետո սուր հակամարտություն սկսվեց ներկայիս նախագահի, նախկին նախագահ Հ. Ռաֆսանջանիի, ընդդիմադիր առաջնորդների և մյուսների միջև:

2009 թ. ամռանը սկսված զանգվածային ցույցերին վերջ տալու համար հայտարարությամբ հանդես եկավ Այաթոլլահ Խամենեին: Հոգևոր առաջնորդը, երկրի ներքաղաքական լարվածության հետ կապված,

---

<sup>57</sup> St'u Associated Press, Iranian Revolutionary Guard Forces Kill 30 Kurdish Rebels in Clashes Near Iraqi Border // Washington Post, <http://www.washingtonpost.com>, 11.06.2010:



նշեց, որ չի ընդունում ընդդիմության գոծունեությունը և անհրաժեշտ է համարում շարունակել իշխանությունների ընտրած ուղին: «Վարչակարգը հանդուրժողական կլինի այնքան ժամանակ, քանի դեռ չի խաթարվել անդորրը հանրության շրջանում, և չեն կատարվել այնպիսի անօրինականություններ, ինչպիսիք են ստի և բամբասանքի տարածումը<sup>58</sup>»:

Ընդդիմադիր առաջնորդներից Մ. Քարուբին «Նյու Յորք Թայմսին» տված հարցազրույցում նշում է, որ եթե կառավարությունն իր ժողովրդին չի թույլատրում ցույցեր անել, ապա դա հակասում է այն փաստին, որ նրանք ողջունում են ապստամբությունները Եգիպտոսում<sup>59</sup>:

Կապված ցուցարարների ակտիվացման հետ՝ 2010 թ. աշնանը արգելափակվեցին 2 բարձրաստիճան հոգևորականների վերկայքեր, քանի որ վերջիններս աջակցում էին ընդդիմադիր հայացքների տարածմանը: Կառավարության կողմնակիցները բռնագրավեցին ընդդիմադիրների կայքէջերը՝ դրանցում տեղադրելով պաշտոնական լրատվություն: «Սա կլիբեռապատերազմի մի տեսակ է, որն իրականացվում է «կանաչ շարժման» դեմ»,– նշում է Հարավային Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Մ. Սահիմին<sup>60</sup>:

Անհրաժեշտ է ավելացնել, որ կարևոր իրադարձությունների վերաբերյալ «Նյու Յորք Թայմսը» հաճախ է ԱՄՆ-ում բնակվող ծագումով իրանցի հայտնի մարդկանց կարծիքներ մեջբերում: Սովորաբար նման դեպքերում հարցազրույց տվողը բացասական տեսակետ է հայտնում այս կամ այն իրադարձության վերաբերյալ, իսկ այն, որ տվյալ մարդը ծագումով իրանցի է, ազդեցիկ է դարձնում այն տպավորությունը, թե իրանցիները որքան դժգոհ են իրենց կառավարությունից:

2010 թ. դեկտեմբերին Իրանում գնաճ գրանցվեց. բարձրացան բենզինի, նավթի, գազի գները: Փոխարենը երկրի կառավարությունը պատ-

---

<sup>58</sup> Տե՛ս **Erdbrink Th.**, Iran’s Ayatollah Khamenei Warns Opposition Goups Against Continued Refience // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 12.09.2009:

<sup>59</sup> **Yong W.**, Iran Presses Opposition to Refrain From Rally // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 10.02.2010.

<sup>60</sup> **Yong W.**, In Sign of Discord, Iran Blocks Web Sites of Some Clerics // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 04.10.2010.

րաստակամություն հայտնեց ամսական որոշակի գումար փոխհատուցել: «Նյու Յորք Թայմսը», ինչպես նաև այլ հայտնի լրատվամիջոցներ, նշված փոփոխությունների վերաբերյալ Իրանի շարքային քաղաքացիներից հարցազրույցներ վերցրին և հրապարակեցին դրանք: Թեհրանցի մի տաքսու վարորդ նշում է. «Թանկացումներից առաջ ես վճարում էի մեկ ու կես դոլար 1 օրվա վառելիքի դիմաց և վաստակում էի մոտ 28 դոլար, որից 4-5 դոլարը հատկացնում էի սննդին: Այժմ, երբ բենզինի համար վճարում եմ 10 դոլար, ստիպված եմ սնվել յոգուրտով և վարունգով»<sup>61</sup>:

Մասնագիտությամբ ծրագրավորող Ամինը, որը համալսարանի ուսանող է, հայտնում է. «Թանկացումներից ի վեր ես տաքսու վարորդ եմ աշխատում դասերից հետո»: Ամինը մտահոգություն է հայտնում երկրի տնտեսության վերաբերյալ, թե կառավարությունը որտեղ է օգտագործում խնայված գումարը. «Արդյո՞ք նրանք այդ գումարը իրենց գրպանն են դնում, և արդյո՞ք նրանք պատրաստվում են յուրաքանչյուր ամիս 25 մլն ԱՄՆ դոլար օգնություն հատկացնել Լիբանանին»<sup>62</sup>:

Ամերիկյան ՋԼՄ-ները կիրառում են մեկ այլ հմարք ևս. լրագրողները պատրանք են ստեղծում, իբրև իրանցի ժողովուրդը խոր հիասթափություն է ապրում, և չկա ապագայի նկատմամբ հավատ: ՋԼՄ-ներում ոչ միայն չեն լուսաբանվում Իրանի ձեռքբերումները և զարգացումները, այլև չափազանցված են ներկայացվում թերացումները:

2011 թ. փետրվարին Թեհրանում զանգվածային ցույցերից հետո ձեռքակալվեցին ընդդիմադիր 2 առաջնորդները՝ Մեհդի Բարութին և Սիր Հոսսեին Մուսավին: Լայն քննարկման առարկա էր, թե նրանք արդյոք ձեռքակալվել են ցույցերի համար, թե ենթարկվել են տնային կալանքի: Իրանական ընդդիմադիր «Քալեմե» (Kaleme) վեբկայքը, որը պատկանում է Մուսավիի աջակիցներին, նշում է, որ նրանք գտնվում են Թեհրանի բանտերից մեկում:

---

<sup>61</sup> **Yong W.**, Iran Lets Gas Prices Soar, But Drivers Seem Unfazed // New York Times, www.nytimes.com, 20.12.2010.

<sup>62</sup> Նույն տեղում:

2011 թ. ապրիլից ամերիկյան էլեկտրոնային մամուլում սկսվեցին լայնորեն քննարկվել Իրանի նախագահի և հոգևոր առաջնորդի ներքին հակասությունների մասին տեղեկությունները: «Լոս Անջելես Թայմսը» նշում է, որ Ահմադինեժադի և Ալի Խամենեյի միջև վեճը թեժանում է, և դրանք թուլացնում են Իրանին՝ լուծելու միջազգային խնդիրները<sup>63</sup>: «Եվրանյուզ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հերքեց իր և հոգևոր առաջնորդի միջև հակասությունների առկայությունը՝ նշելով, որ գերագույն առաջնորդի դիրքն Իրանում լիարժեքորեն հստակ է, և ոչ մի հակասություն գոյություն չունի<sup>64</sup>:

Միացյալ Նահանգների լրատվամիջոցները տարիներ շարունակ բացասական վերաբերմունք են հայտնել Իսլամական հեղափոխական գվարդիայի նկատմամբ, որը ներգրավված է երկրի ռազմական, տնտեսական, քաղաքական գործունեության մեջ: «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդում է Միացյալ Նահանգների պետքարտուղար Հիլարի Բլինթոնի հայտարարությունն այն մասին, որ Իսլամական հեղափոխական գվարդիան սկսում է ավելի մեծ դեր խաղալ երկրի ղեկավար դիրքերում և, որ Իրանը կարող է դառնալ ռազմական դիկտատուրա: Իսլամական հեղափոխական գվարդիան դառնում է «ավելի ու ավելի ներգրավված երկրի տնտեսության մեջ»<sup>65</sup>:

Իրանում հաճախ են լրագրողներ ձերբակալվում: ԱՄՆ-ի ՋԼՄ-ներն ուշադրության կենտրոնում են պահում մնան իրադարձությունները: Իրանի անվտանգության աշխատակիցները ձերբակալել էին իրանական անկախ թերթերից մեկի երեք լրագրողների և տնօրենին: Վերջիններս «Շարղ» (Shargh) թերթում անդրադաձել էին ուսանողական ցույցերին՝ հաշվի չառնելով կառավարության զգուշացումները՝ դադարեցնել

---

<sup>63</sup> Տե՛ս **Daragahi B.**, Mosatghim R., Iran's Supreme Leader and President Wrestle the Power // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 22.05.2011:

<sup>64</sup> Տե՛ս BBC Persian, 13,1390 مرداد , (2011, 08), <http://www.bbc.co.uk/persian/iran/2011/08/>, احمدی نژاد اختلاف با آیت الله خامنه‌ای را تکذیب کرد:

<sup>65</sup> Clinton Concerned Over Trend Toward Military Rule in Iran // Voice of America News, [www.voanews.com/english/news](http://www.voanews.com/english/news), 26, 10, 2011.

դրանք: Ի վերջո նրանց գործունեությունը հայտարարվեց «քարոզչություն վարչակարգի դեմ»<sup>66</sup>, և նրանք ենթարկվեցին ազատագրկման:

Իրանա-ամերիկյան լրագրող Ռոքսանա Սաբերին, ով նյութեր էր պատրաստում «Բի-Բի-Սիի Հանրային ռադիոյի» (National Public Radio) համար, դատապարտվեց ազատագրկման լրտեսական գործունեություն ծավալելու մեղադրանքով: «Լոս Անջելես Թայմսի» գնահատմամբ՝ «Սամի քայլ է Իրանի կողմից, որպեսզի խանգարի Օբամայի վարչակազմի ջանքերին՝ բարելավվելու Իրանի հետ հարաբերությունները»<sup>67</sup>: Նշված տողերը, սակայն, չեն համապատասխանում այն գործնական քայլերին, որոնք իրականացնում է Սպիտակ տունը: Դեռևս տարիներ առաջ ԻԻՀ հոգևոր առաջնորդ իմամ Խոմենյին, հետագայում ԻԻՀ տարբեր նախագահներ, ինչպես նաև գործող նախագահը պաշտոնապես հայտարարել են հակառակ տեսակետը:

ԱՄՆ-ը հիմնվում է այն սկզբունքի վրա, որ պետք է լինի խոսքի և մամուլի ազատություն, սակայն շատ ժամանակ այդ «ազատությունները» կիրառվում են որպես «զենք» հակառակորդի դեմ: Այդ իսկ պատճառով Իրանը սահմանափակում է որոշ ազատություններ՝ քաջ գիտակցելով, որ հակառակ դեպքում Վաշինգտոնը կօգտագործի պատեհ առիթը հակակառավարական տրամադրություններ ստեղծելու համար: Այս ամենից հետո հնչում են մեղադրանքներ, որ Իրանում խախտվում են մարդու իրավունքները, խոսքի ազատությունը և այլն: Կրոնապետական վարչակարգի տեղեկատվական կողմնորոշվածությունը հանգեցրել է նրան, որ Իրանը, ըստ «Freedom House»-ի 2011 թ. տվյալների, աշխարհի տարբեր երկրների «ՉԼՄ-ների ազատության վարկանիշային աղյուսակում» 196 երկրների մեջ զբաղեցնում է 188-րդ տեղը<sup>68</sup>:

Այսպիսով՝ ամերիկյան լրատվամիջոցները հիմնականում լուսաբանում են Իրանի ներքաղաքական կյանքի բացասական երևույթները և գրեթե չեն քննարկում դրական իրադարձությունները:

---

<sup>66</sup> **Yong W.**, Iran Security Officials Arrest Four at Newspaper // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 09.12.2010.

<sup>67</sup> **Mosatghim R.**, Fleishman J., Iran Sentences Roxana Saberi to 8 Years: Washington Reacts // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 19.04.2009.

<sup>68</sup> Ст. 6 Рейтинга свободы СМИ в странах мира 2011 года // <http://gtmarket.ru>, 04.05.2011:

### *3. ԱՄՆ-ի լրատվամիջոցների լուսաբանումները Իրանի հասարակական կյանքի անցուղարձերի վերաբերյալ*

ԱՄՆ-ի, արևմտյան տերությունների նախաձեռնությամբ ու հովանավորությամբ արբանյակային բազմաթիվ հեռուստաալիքներ են հեռարձակվում Իրանում: Դրանք երբեմն քարոզում են արևմտյան բարքեր՝ հակառակ ԻԻՀ պետական ալիքների, որոնք հեռարձակում են իսլամական դրույթներին համապատասխան հաղորդումներ և ծառայում են պետական շահերին ու քաղաքականությանը: Օրինակ՝ Իրանի պետական ալիքներով արգելված է ցուցադրել տեսահոլովակ, որտեղ կանայք առանց գլխաշորերի են (ԻԻՀ բոլոր հեռուստաընկերությունները հետևում են այս պահանջին, հակառակ դեպքում արգելվում է նրանց գործունեությունը): Սակայն չնայած այս ամենին՝ օտարերկրյա պարսկալեզու (հիմնականում Արևմուտքի կողմից հովանավորվող՝ Farsi 1, BBC Persian, ITN, Jaam e jam, Iran-FMTV, PDF Channel և այլն) հեռարձակումներում նման տեսահոլովակները բազմաթիվ են, և դրանք լայն արձագանք են գտնում հասարակության և հատկապես երիտասարդության շրջանում: Այս ամենը խարխլում է հասարակության մեջ միասնական մտածելակերպի ձևավորումը, ծառայում է Իրանի համար օտար գաղափարախոսության տարածմանը:

Իրանում հասարակության տարբեր շերտեր հաճախ խնդիրներ են ունենում իսլամական վարչակարգի հետ: «Լոս Անջելես Թայմսին» տված հարցազրույցում հայազգի երգիչ Անդի Մադադյանը հայտնում է իր մտահոգությունները: Անդին նշում է, որ Իրանում իր երգերն արգելված են, սակայն շատ իրանցիներ սիրում են դրանք: «Կարծում եմ Իրանում երիտասարդությունը ցանկանում է հայտնել իր կարծիքը և ունենալ ազատություն, որն է համացանցը, թատրոնը, երաժշտությունը»<sup>69</sup>: Հակաիրանական տրամադրություններ ստեղծելու համար այս ամենը կարևոր խաղաթուղք է կրոնապետական Իրանի դեմ. գրողներ, հրապարակախոսներ, երգիչներ և մշակութային կյանքի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ հակաիսլամական գործունեության համար հաճախ

---

<sup>69</sup> **Johnson R.**, Iranian Expatriate Artist's Projects Give Voice to Countrymen // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 11.07.2009.

խնդիրներ են ունենում իշխանությունների հետ: Նրանցից շատերը ապաստան են գտնում հենց արևմտյան երկրներում:

«Վաշինգտոն Փոստը» իր հոդվածներից մեկում լուսաբանում է ամերիկացի ֆիլմարտադրողի այցը Իրան, որտեղ վերջինիս մոտ մեծ հետաքրքրություն է առաջացնում իրանցի երիտասարդների առօրյա կյանքը: Նկարահանված ֆիլմը, որը հիմնված է ֆիլմարտադրողի տպավորությունների վրա, պատմում է Իրանում համասեռամուլների սիրավեպի և կրոնապետական իշխանությունների մասին: Ֆիլմը, որը կոչվում է «Իրադրություն» (Circumstance), բարձրագույն դպրոցի 2 դասընկերուհիների մասին է, որոնք սիրահարվում են և սկսում են «բացահայտել» թեհրանի «ստորգետնյա» երիտասարդական կյանքը, օգտագործում են դեղահաբեր, զբաղվում են գրաֆիտի նկարչությամբ<sup>70</sup>: Այստեղ քննադատվում է կրոնապետական վարչակարգը, հոգևորականների կողմից երիտասարդների ազատությունների սահմանափակումը: Ըստ հեղինակի՝ երիտասարդները նման իրավիճակներում հայտնվում են իշխանությունների կողմից պարտադրված աշխարհայացքի հետևանքով:

«Լոս Անջելես Թայմսի» մեկ այլ հոդվածում հեղինակ Վենդի Սմիթը անդրադառնում է իսլամական աշխարհի հասարակական կյանքի որոշ գործոնների. «Երիտասարդ իսլամականները չեն հավատում իրենց կրոնի պահանջումներին՝ ապրել օրենքներով, ինչը բնորոշ է 7-րդ դարի հասարակությանը, թեև նրանց մեջ կան իրական հավատացյալներ: Նրանք ուզում են «ապրել ժամանակակից կյանքով» և իրենց կառավարությունից պահանջում են ժողովրդավարական պատասխանատվություն»<sup>71</sup>:

Իհարկե, «Լոս Անջելես Թայմսի» այս երկու հոդվածներում արժարժված թեմաները մի փոքրիկ մասնիկն են ԻԻՀ իշխանությունների հանդեպ տրամադրությունների, որոնք չեն բացահայտում ողջ իրակաությունը, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ ԻԻՀ իշխանությունները հեղափոխության տարիներից ի վեր ջանում են զարգացնել

---

<sup>70</sup> St'u **Jenkis M.**, 'Circumstance' Explores Repression and Lesbian Romance in Iran // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 08.09.2010:

<sup>71</sup> **Smith W.**, Book Review: Range and Rebellion Across the Islamic World // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 17.07.2011.

գիտությունը, բարձր տեխնոլոգիաները և այլն, իսկ «ժամանակակից կյանքով ապրելը» չի նշանակում արևմտյան ժողովրդավարության արժեքների որդեգրում:

Ամերիկյան ՁԼՄ-ներում մեծ տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների ոտնահարման մասին լուսաբանումները: Թեհրանի իշխանությունների հասցեին ուղղված դժգոհությունները շատանում են, քանի որ մարդկանց պատժելու համար նրանք օգտագործում են հանրային կախաղաններ: Մարկ Դը Վալլասը իր հոդվածում հայտնում է սեփական կարծիքը Իրանում կիրառվող պատժի միջոցների մասին: Ըստ հեղինակի՝ Իրանում վարչակարգի փոփոխություն տեղի չունեցավ, քանի որ կարևոր իրադարձությունները, մասնավորապես 2009 թ. նախագահական ընտրությունները ուղեկցվեցին մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումներով: Ըստ «Միացյալ ազգերի կազմակերպության» 2011 թ. 1-ին կիսամյակի տվյալների՝ 140 մարդ է կախաղան հանվել: «Այս ամենը մտահոգիչ է, քանի որ իշխանությունները սեփական ժողովրդի նկատմամբ իրականացնում են բացահայտ ահաբեկչություն»<sup>72</sup>:

Տարիներ շարունակ տարբեր երկրների կառավարություններ, հասարակական կազմակերպություններ, մարդու իրավունքների պաշտպանության խմբեր աշխարհով մեկ ուշադրություն են հրավիրում քարկոծման և կախաղան հանելու երևույթների վրա: Քարկոծման միջազգային օրվա (11 հուլիս) կապակցությամբ մարդու իրավունքների պաշտպան ակտիվիստները կոչ են անում վերջ տալ քարկոծմանը Իրանում: Այս առիթով միջազգային կոմիտեն նշում է. «Հուլիսի 11-ին աշխարհի 100 քաղաքներում եկեք դրոշ բարձրացնենք ընդդեմ մեր ժամանակների մարդկության բարբարոսության»<sup>73</sup>:

Իրանի հասարակական կյանքի կարևոր հիմնախնդիրներից մեկը վերաբերում է կանանց գլխաշորին: Շատերն այն կարծիքին են, թե սա սեռային խտրականության դրսևորման ձև է, և կանայք պետք է ունենան նույն իրավունքները, ինչ տղամարդիկ: Ի պատասխան «Բի-Բի-Սիի»

---

<sup>72</sup> Wallace M. D., Iran's Execution Bridge // Los Angeles Times, www.latimes.com, 04.07.2011.

<sup>73</sup> Flock El., Internatioanl Day Against Stoning on July 11 // Washington Post, www.washingtonpost.com, 28.06.2011.

հաղորդման, թե կանայք ցածր դիրք ունեն Իրանի հասարակության մեջ, ճնշված են, կարելի է փաստել, որ դա որոշ չափով է համապատասխանում իրականությանը: Կանայք գերակա դիրք ունեն ընտանիքում, իսկ համալսարաններում կազմում են ուսանողների կեսից ավելին: Պետական կառույցներում ևս շատ կանայք ունեն բարձր պաշտոններ:

Այսպիսով՝ իրանցիների հասարակական կյանքում որոշիչ են իսլամական դրույթները, իսկ ամերիկյան լրատվամիջոցները հիմնվում են արևմտյան ժողովրդավարության սկզբունքների վրա, ըստ այդմ՝ լուսաբանում են Իրանի հասարակական անցողիկությունն ու մատուցում միջազգային հանրությանը: Խնդիրն այն է, որ Իրանի հասարակական կյանքը համակողմանի ներկայացնելու համար ԱՄՆ-ի հայտնի («Նյու Յորք Թայմս», «Լոս Անջելես Թայմս», «Վաշինգտոն Փոստ» և այլն) լրագրողները պետք է հաշվի առնեն նաև տվյալ հասարակության առանձնահատկությունները և որդեգրած սկզբունքները, հակառակ դեպքում սեփական աշխարհայացքով հրապարակվող տեղեկատվությունը կարող է լինել ոչ օբյեկտիվ:

Սա մի տեսակ «մշակութային պատերազմ է», որն Իրանում բացասական հետևանքներ է ունենում: Իհարկե, գլոբալիզացիայի պայմաններում դժվար է մեկուսացած լինել համաշխարհային զարգացումներից, սակայն, մեր կարծիքով, ցանկացած պետություն մեծ հաշվով պետք է ինքը տնօրինի հասարակության վրա անմիջական ազդեցություն ունեցող տեղեկատվական հոսքերը, իսկ արտաքին միջամտության դեպքում սահմանափակումների, գրաքննության իրականացումը տրամաբանական հետևանք է:

*4. Հաղորդակցության ոլորտի հիմնախնդիրները ԱՄՆ-ի լրատվամիջոցներում.*

Վերջին մի քանի տարում հեռահաղորդակցության ոլորտը տարբեր պետությունների կառավարությունների ուշադրության կենտրոնում է գտնվում: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Իրանը, Չինաստանը, կառավարության կողմից սահմանափակվում է ազատ մտաքը համացանց՝ ելնելով սեփական երկրի անվտանգության շահերից: Այս ամենին դեմ է ԱՄՆ-ը. վերջինս գտնում է, որ համացանցը պետք է ազատ լինի բոլորի համար:



2010 թ. ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Բլինթոնը խոսեց համացանցի ազատության մասին: «Մենք կողմ ենք համացանցի ազատությանը, որտեղ բոլորը գիտելիքների և գաղափարների հավասար հասանելիություն ունեն: Եվ մենք գիտակցում ենք, որ աշխարհի տեղեկատվական ենթակառուցվածքները կդառնան այնպիսին, ինչպիսին մենք և մյուսները նախատեսել ենք»<sup>74</sup>: «Առանց խոչընդոտների կիրեռտարածությունը, որտեղ մարդիկ կարող են ազատ արտահայտվել առանց վախի, գրաքննության և ազատագրկման ենթարկվելու, աշխարհը կդարձնի ավելի անվտանգ ԱՄՆ-ի համար, ժողովրդավարության տարածման համար»<sup>75</sup>: Սակայն, հայտնի է, որ Իրանի համար «առանց խոչընդոտների կիրեռտարածությունը» կարող է վնաս հասցնել երկրի անվտանգությանը:

Վերջին տարիներին Թեհրանը արգելափակում է վեբկայքերը, ներառյալ Գուգլի (google) որոշ ծառայություններ, «Սի-Էն-Էնը» և «Բի-Բի-Սին»: «Նրանք փորձում են համացանցի միջոցով պարտության մատնել Իսլամական Հանրապետությանը»,– նշում է ԻԻՀ հոգևոր առաջնորդը: Այդ իսկ պատճառով Իրանի կառավարությունը քայլեր է ձեռնարկում համացանցի վերահսկողության միջոցով հասարակությանը օտար տեղեկատվությունից զերծ պահելու համար:

Ըստ «Վաշինգտոն Փոստի»՝ իրանցի ակտիվիստներից Բանաֆշեն նշում է, որ երբ ցանկացավ ներբեռնել իր համակարգչում «Google Chrome» բրաուզերը, Գուգլի էջը տեղեկացրեց, որ հնարավոր չէ իրականացնել այդ քայլը, քանի որ նա «ապրում է արգելափակված երկրում» (Error 404, You live in a forbidden country)<sup>76</sup>: Իրանցի երիտասարդների համար այս երևույթը դժգոհությունների հիմնական պատճառներից է, քանի որ վերջիններս որոշ հարցերում զգում են անազատ և սահմանափակված: Շատ երիտասարդների կարծիքով՝ մեղավոր է հենց երկրի վարչակարգը:

---

<sup>74</sup> State Department Is taking Right Steps to faster Internet Freedom // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 21.07.2010.

<sup>75</sup> Նույն տեղում:

<sup>76</sup> **Erdbrink Th.**, Serjoie K. A., Iran Blocking foreign, Domestic Web-sites to Curb Anti-Government Activists // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 10.03.2010.

Հատկանշական է, որ Իրանի դեմ ընդունված պատժամիջոցների շարքում կարևոր տեղ գտան տեղեկատվական տեխնոլոգիաները և անվտանգության համակարգերը: Իրանի իշխանությունների համար անհասանելի դարձան կիբեռանվտանգության տեխնոլոգիաները, որով կառավարությունը պաշտպանական քայլեր էր ձեռնարկում: Իրանի ընդդիմությունը ողջունեց այդ քայլը և միաժամանակ կառավարության արգելափակումները շրջանցելու համար աջակցություն խնդրեց ԱՄՆ-ից:

Իրանի կառավարությունը ակտիվ քայլեր է ձեռնարկում արևմտյան տեղեկատվական հոսքերի մուտքը վերահսկելու ուղղությամբ: Դրա համար տրամադրում է ֆինանսական մեծ միջոցներ: ԻԻՀ պաշտպանության նախարարը 2009 թ. գարնանը ցուցադրեց էլեկտրոնային մի շարք ծրագրեր, որոնց մեջ կարևոր էին հակահաքերական ծրագրերի դեմ բարձր տեխնոլոգիական նվաճումները: Այս քայլերը ենթադրում էին ավելի արդյունավետ դարձնել տեղեկատվության հավաքումը և մշակումը, արբանյակների օգտագործումը, ռադիոալիքների խափանումը<sup>77</sup>:

Այսպիսով՝ թե՛ իրանական, թե՛ ամերիկյան իշխանությունները կարևորում են տեղեկատվական ոլորտի դերն ու նշանակությունը: Կարծում ենք՝ եթե Իրանը չկարողանա ակտիվ քայլեր ձեռնարկել տվյալ ոլորտում, չիրականացնի գրաքննություն և չսահմանափակի համացանցի ազատությունները, ապա երկիրը չի կարող դիմակայել ԱՄՆ-ի նախաձեռնած տեղեկատվական պատերազմներին:

##### *5. Տեղեկատվական պատերազմները Իրանի միջուկային խնդիրների շուրջ*

ԱՄՆ-ի լրատվամիջոցներում հաճախ են հանդիպում Իրանի միջուկային ծրագրերի հետ կապված թեմաները: Հիմնական խնդիրը հետևյալն է. Իրանը պաշտոնապես նշում է, որ իր միջուկային ծրագրերը ունեն խաղաղ բնույթ և ուղղված են երկրի էներգետիկ պահանջների բավարարմանը: Իսկ ԱՄՆ-ը պնդում է, որ «խաղաղ» կարգախոսի ներքո Թեհրանը ցանկանում է ստեղծել միջուկային զենք և միջազգային հանրությանը ներկայացնում է «Իրանից սպառվող վտանգի» մասին: Այս

<sup>77</sup> جنگ افزار، No. 55، (2009 July)، www.jangafzar.ir، تیر 1388، صفحه 48

առնչությամբ հատկանշական է մեջբերել 2007 թ. նոյեմբերին Չորջ Բուշ Կրտսերի հայտարարությունն այն մասին, որ եթե Իրանը տիրապետի անհրաժեշտ գիտելիքի միջուկային զենք ստեղծելու համար, ապա կա այն ռիսկը, որ կսկսվի Երրորդ համաշխարհային պատերազմը<sup>78</sup>: Պարզ է, որ Վաշինգտոնը ամեն գնով պայքարում է Թեհրանի միջուկային ձեռքբերումների դեմ, թեև գոյություն չունի որևէ հստակ հիմնավորում, որ Իրանը կստեղծի միջուկային զենք: Իսլամական Հանրապետությանը՝ որպես «համայն մարդկության սպառնալիք» բեմադրությունը Իրանի դեմ տեղեկատվական պատերազմների ամենացայտուն դրսևորումներից է:

Չորս տասնամյակների աշխատանքներից հետո՝ 2010 թ. օգոստոսին, Իրանում բացվեց իր առաջին ատոմակայանը: ԱՄՆ-ին անհանգստացրեց ռուս մասնագետների օգնությամբ ստեղծված ատոմակայանի գործարկումը: Իրանական «Փրեսս Թի Վիի» (Press TV) հաղորդմամբ՝ ԱՄՆ-ի, Իսրայելի, Մեծ Բրիտանիայի գործակալները ամեն կերպ խոչընդոտում են այդ ծրագրերի զարգացմանը: Դրանց վառ ապացույցը վերջին տարիներին իրանցի միջուկային մասնագետների վրա ահաբեկչական հարձակումներն են, որոնց արդյունքում մեկ գիտնական մահացավ, իսկ մյուսը վիրավորվեց: Իրանի հետախուզության նախարարը Վաշինգտոնին և նրա դաշնակիցներին մեղադրեց ահաբեկչությունը կազմակերպելու մեջ՝ նշելով, որ նման քայլը օգտակար էր միայն նրանց<sup>79</sup>: Պարզ է, որ Իրանի իշխանությունները ևս պատեհ առիթը բաց չեն թողնում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հասցեին մեղադրանքներ կերկայացնելու, ՉԼՄ-ների միջոցով հայտարարություններ անելու համար, սակայն այս հայտարարություններում բացակայում են իրեղեն ապացույցները:

ԱՄՆ-ի պետքարտուղար Հ. Բլինթոնը, մերձավորարևելյան տարածաշրջան այցի ժամանակ խոսելով Իրանի միջուկային հնարավորությունների մասին, նշում է. «Իրանը ունեցել է տեխնիկական խնդիրներ,

---

<sup>78</sup> Տե՛ս **Beinart P.**, Is It Really World War 3? // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 09.12.2007:

<sup>79</sup> Տե՛ս **Robert F. Worth**, Iran: Arrests in Attacks on Nuclear Scientists // New York Times, [Worth, www.nytimes.com](http://www.nytimes.com), 02.12.2010:

որոնք դանդաղեցրել են միջուկային զենքի ստեղծման գործընթացը: Նրանց ծրագիրը մեր լավագույն հաշվարկով դանդաղել է»: Պետքարտուղարը հավելեց, որ եթե Իրանը ձեռք բերի միջուկային զենք, արդյո՞ք մյուս երկրներն էլ ստիպված չեն լինի դա անել<sup>80</sup>: Իսրայելի հետախուզական մարմինների ներկայացուցիչը հայտնում է. «Կիրառվող պատժամիջոցները Իրանին թույլ չեն տա մինչև 2015 թվականը տիրապետել միջուկային զենքի»<sup>81</sup>:

Միջուկային ծրագրերի քննարկումների հենքին ԱՄՆ-ի ՉԼՄ-ների կողմից կրոնապետական վարչակարգը ներկայացվում է որպես «անհաջող քայլեր անող», «անկարող», «անարդյունավետ»<sup>82</sup>, որը չի կարողանում հասնել իր նպատակին՝ չնայած տասնամյակների ջանքերին: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ խոչընդոտները ստեղծում է հենց Վաշինգտոնը: Նախագահ Օբաման նշում է. «Պատժամիջոցներն ավելի են բարդացնում Իրանի կառավարության հնարավորությունները՝ գնելու գտված բենզին, սպրանքներ, ծառայություններ և նյութեր՝ արդիականացնելու համար Իրանի նավթը և բնական գազը»: «Եթե ցանկանում եք զբաղվել գործարարությամբ մեզ հետ, նախ և առաջ պետք է հաստատեք, որ արգելված գործարարություն չեք անում Իրանի հետ»<sup>83</sup>: Այս հայտարարությունը վկայում է, որ Միացյալ Նահանգների իշխանությունները ոչ միայն ուղղակիորեն խոչընդոտում են Իրանի կառավարությանը, այլև խանգարում են այլ երկրների և կազմակերպությունների գործարքներ ունենալ Թեհրանի հետ:

Իր հերթին Իրանը պատասխան քայլեր է ձեռնարկում: Մասնավորապես, երբ ԻԻՀ իշխանությունները Ռուսաստանի, Չինաստանի և մի քանի Եվրոպական միության երկրների ներկայացուցիչների հրավիրեցին՝ այցելելու իրանական միջուկային կառույցներ, անտեսվեց ԱՄՆ-ը և չհրավիրվեց: Այսկերպ Իրանը փորձեց ցույց տալ իր քայլերի թափան-

---

<sup>80</sup> Տե՛ս **Lander M.**, US Says Sanctions Hurt Iran Nuclear Program // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 10.01.2011:

<sup>81</sup> **Lander M.**, Clinton Urges Gulf States to Maintain Iran Sanctions // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 09.01.2011.

<sup>82</sup> Տե՛ս **Cohen R.**, Iran Without Nukes // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 13.06.2011:

<sup>83</sup> Ahmadinejad: U.S. sanctions attempt to hinder Iran's progress// CNN Wire Staff, <http://edition.cnn.com/2010/WORLD/meast/07/03/iran.sanctions>, 04.06. 2010.

ցիկությունը և պնդել այն սկզբունքը, որ կարող է իր որդեգրած քաղաքականությունն իրականացնել առանց Միացյալ Նահանգների անմիջական ներկայության: Միացյալ Նահանգների պետքարտուղարության խոսնակ Ֆիլիպ Ջ. Բրովլին այս առիթով հայտարարեց. «Սա մի խելացի քայլ էր, սակայն այն չի կարող փոխարինել ԱԷՄԳ-ի (Ատոմային Էներգիայի միջազգային գործակալություն) առաջ Իրանի ստանձնած պարտականություններին»<sup>84</sup>: 2011 թ. հունվարին իրանական պետական հեռուստատեսությամբ հայտնեցին, որ իրանական առաջին ատոմակայանը սկսում է իր գործունեությունը: ԱԷՄԳ-ի ղեկավարը նշեց, որ գոյություն ունեն բազմաթիվ պետություններ, որոնք շահագրգռված են ինտենսիվորեն համագործակցել Թեհրանի հետ այս շրջանակներում և ընդլայնել հարաբերությունները<sup>85</sup>:

Դեռևս 2008 թվականի գարնանը ՄԱԿ-ի միջուկային հարցերով պաշտոնյաները նշեցին, որ իրենց տեսչները չեն գտել ոչ մի ակնհայտ փաստ, որ Թեհրանը փորձեր է անում իր միջուկային ձեռքբերումները օգտագործել ռազմական ոլորտում: ԱԷՄԳ-ի գեկույցի համաձայն՝ «Իրանի խաղաղ միջուկային ծրագիրը ունեցել է նվաճումներ»<sup>86</sup>:

Միջազգային իրավունքում միջուկային զենքի չտարածման պայմանագրերում սկզբունքորեն չի արգելվում ուրանի հարստացումը: Իրանից բացի՝ այլ պետություններ ևս հարստացնում են ուրան և չեն համարվում «խաղաղության սպառնալիք»: Նման հիմնավորումը Իրանը ներկայացնում է ԱԷՄԳ-ին: ԱԷՄԳ-ը տեսուչները գտնում են, որ Իրանում չի բացահայտվել միջուկային զենքի ստեղծման որևէ փորձ:

Այսպիսով՝ Ամերիկյան լրատվամիջոցներում բավականին տարածված է փաստերի աղավաղման և հոգեբանական պատերազմի մեթոդների կիրառումը: Դա իրականության մասնակի լուսաբանումն է և դրա հիմնական դրույթների շրջանցումը: Իրանի միջուկային գործունեու-

---

<sup>84</sup> **Lander M.**, Iran Invites Some Nations, Not US, For Nuclear Tour // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 04.01.2011.

<sup>85</sup> Տե՛ս UN Nuclear Agency Chief Wants to Publish New Intelligence on Iran on Alleged Program// Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 12.09.2011:

<sup>86</sup> **Moore M.**, Iran Withholds Key Nuclear Documents // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 27.05.2008.

թյան հետ կապված՝ այս ՁԼՄ-ները չափազանցում են ծրագրի վտանգավոր բնույթը, սակայն չեն լուսաբանում այդ գործունեության կարևոր մասերը, օրինակ՝ դրա խաղաղ բնույթը, ինչի մասին հայտարարել է ԱԷՄԳ-ը: Ամերիկյան լրատվամիջոցները անտեսում են այս կարևոր փաստը, փոխարենը կարևորում են սեփական նախասիրությամբ երկրորդական իրադարձությունների լուսաբանումը: Սա խորամանկ տեղեկատվական հնարք է: Այն թույլ է տալիս ներկայացնել իրադարձությունները սեփական հայեցողությամբ:

*6. Տեղեկատվական պատերազմները ռազմական ոլորտի հիմնախնդիրների շուրջ*

Ինչպես հայտնի է, Թեհրանը տիրապետում է հեռահար հրթիռների և հսկայական ռազմական տեխնիկայի, ինչն էլ անհանգստության պատճառ է Վաշինգտոնի, նրա դաշնակիցների համար: Հաճախ կողմերի հաղորդած տեղեկությունները ռազմական հնարավորությունների մասին հակասում են միմյանց: ԱՄՆ-ի իշխանությունները իրանական ռազմական ներուժը որակում են որպես վտանգ և սպառնալիք իրենց շահերին, իսկ Իրանի ղեկավարությունը այդ ձեռքբերումները դիտում է որպես սեփական անվտանգության պահպանման գրավական և ինքնապաշտպանության միջոց:

2011 թ. Իրանը հայտարարեց իր նոր ձեռքբերումների մասին, որոնց շնորհիվ իրանական հրթիռները հակառակորդի համար դարձել են ավելի անխոցելի: «Ամերիկյան մեր գործը հեշտացրել է՝ տեղակայելով իր գորակայանները և ճամբարները հարևան երկրներում»,– հայտնում է Իրանի հեղափոխական գվարդիայի օդուժի ղեկավարը: «Մենք այս հրթիռների միջոցով կարող ենք ոչնչացնել տարածաշրջանի բոլոր ամերիկյան կայանները»<sup>87</sup>:

Իրանի և Իսրայելի միջև տեղեկատվական պատերազմներ են ընթանում իրանական հեռահար հրթիռների շուրջ: Իսրայելը տեղեկություններ է տարածում, որ այդ տեխնոլոգիաները Իրանը ձեռք է բերել Հյուսիսային Կորեայից, սակայն իրանական կողմը պնդում է դրանց

---

<sup>87</sup> **Erdbrink Th.**, Iran test fires missiles, shows secret silos // Washington Post, www.washingtonpost.com, 28.06.2011.

տեղական արտադրության մասին<sup>88</sup>: Իսրայելի նման հայտարարությունը, ըստ երևույթին, ուղղված է Իրանի «անհաջող լինելու» թեզի հիմնավորմանը, ըստ որի Թեհրանը սեփական միջոցներով չի կարող մեծ նվաճումների հասնել:

Մյուս խնդիրը, որն արժանանում է ԱՄՆ-ի լրատվամիջոցների կողմից լուսաբանման, Թեհրանի՝ տիեզերք արբանյակ ուղարկելու ջանքերն են: 2010 թ. Իրանի հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ռեզա Թաղիփուրը Ռուսաստան իր այցի ժամանակ հայտնեց, որ շուտով Իրանը տիեզերք կարճակի արբանյակ, որը կծառայի հեռահաղորդակցության ոլորտի զարգացմանը<sup>89</sup>: 2011 թ. այդ ծրագիրը իրականություն դարձավ: Արևմտյան մասնագետները մտավախություն են հայտնում, որ դա կարող է օգտագործվել ռազմական հետախուզության համար, ինչպես նաև նպաստել հրթիռային կարողությունների զարգացմանը՝ խաղաղ ծրագրերի քողի տակ<sup>90</sup>: Օբյեկտիվության համար նշենք, որ Վաշինգտոնը վաղուց արդեն ունի նման տեխնոլոգիաներ, որոնց միջոցով հետախուզություն է իրականացնում: Դրա վառ ապացույցն է 2011 թ. դեկտեմբերին իրանցիների կողմից բռնագրավված անօդաչու թռչող սարքը, որը պատկանում էր ԱՄՆ-ին:

Իրանի պետական լրատվամիջոցները հայտնում են, որ Իրանի հեղափոխական գվարդիան անց է կացնում հրթիռային փորձարկումներ, որոնք ուղղված են ծովային թիրախների ոչնչացմանը: Նման փորձարկումները միտված են հզորացնելու Իրանի ռազմական հայեցակարգը: Իրանի ծովային ուժերի փոխնախարարը հանդես եկավ հայտարարությամբ, որ ստեղծվում է ռազմանավ, որը կարող է ապահովել Պարսից ծոցի անվտանգությունը: Փոխնախարարը ավելացրել է. «Իրանը հնա-

---

<sup>88</sup> Տե՛ս **William J. Broad**, Iran Unveils Missile Silos as it Begins War Games // New York Times, 27.06.2011:

<sup>89</sup> Տե՛ս Islamic Republic of Iran Broadcasting, Իրանը նոր արբանյակ է տիեզերք ուղարկում, [http://armenian.irib.ir/index.php?option=com\\_content&task=view&id=11751 &Itemid=13](http://armenian.irib.ir/index.php?option=com_content&task=view&id=11751&Itemid=13), 26-04-2010:

<sup>90</sup> Տե՛ս **Broad W. J.**, After Delay, Iranians Launch a Settlite // New York Times, [www.nytimes.com](http://www.nytimes.com), 15.06.2011:

րավորություն ունի ստեղծելու նաև սուգանավ: Երեք սուգանավ արդեն փորձարկվել է»<sup>91</sup>:

Այսպիսով՝ ԱՄՆ-ն Իրանի ռազմական ներուժը ներկայացնում է որպես տարածաշրջանի երկրների անվտանգության սպառնալիք: Այս հիմնավորմամբ Իրանի հարևան երկրներում ստեղծվում են հակահրթիռային համակարգեր: Սակայն Իրանի ռազմական հնարավորությունները չափազանցված են բնութագրվում: ԱՄՆ-ի ռազմական ծախսերի հետ համեմատած՝ իրանականը հարյուրապատիկ անգամ ավելի քիչ է: Միաժամանակ հայտնի ՋԼՄ-ների կողմից շրջանառվող Իրանի «վտանգավորությունը» մեղմացնելու հիմնավոր ապացույց է այն, որ վերջին երկու հարյուրամյակում Իրանը չի ներխուժել ոչ մի երկիր, ինչը չենք կարող ասել ԱՄՆ-ի մասին: Հատկանշական է «Յուրություն» տեղադրված տեսանյութը, որտեղ ԱՄՆ-ի քաղաքացիները իրենց նախագահին կոչ են անում կանխարգելել Իրանի միջուկային զենքի ստեղծումը: Տեսանյութում նշվում է հետևյալը. «Եթե Բ. Օբաման թույլ տա, որ Իրանը տիրապետի միջուկային զենքին, ապա դրա հետևանքով շատ մարդիկ կտառապեն: Պարոն նախագահ, կանխարգելե՛ք Իրանին հիմա»<sup>92</sup>: Այս կայքի գործունեությունը կարող ենք որակել ծայրահեղացված, քանի որ Բ. Օբաման չէ, որ կարող է որոշել Իրանի միջուկային հիմնախնդիրները: Դրանով զբաղվում են համապատասխան միջազգային կազմակերպությունները: Միաժամանակ այս հայտարարությունն աչքի է ընկնում խիստ հակաիրանական տրամադրությամբ: Մեզ հայտնի գրականության մեջ չի հանդիպել նման հայտարարություն, որը համապատասխանաբար կվերաբերվեր միջուկային զենքին տիրապետող մյուս երկրներին:

Ամփոփելով Իրան-ԱՄՆ տեղեկատվական պատերազմների թեման՝ փաստենք, որ մի քանի ոլորտներ (Իրանի ներքաղաքական, արտաքին քաղաքական, հասարակական, ռազմական և այլն) ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են: Հատկանշական է, որ քիչ են այնպիսի թեմաների վերաբերյալ հրապարակումները,

91 جنگ افزار, 60, No. (2009 december), [www.jangafzar.ir](http://www.jangafzar.ir), آذر 46, صفحه 1388

92 <http://www.stopirannow.com>



ինչպիսիք են Իրանի մշակութային, գիտական, կրթական ոլորտները: Ստացվում է, որ նշված լրատվամիջոցներն Իրանի հասարակական-քաղաքական անցուդարձերի մասին կարևոր խոսք ունեն ստելու, իսկ մշակութային ոլորտում քննադատվում է ոչ թե այս կամ այն հիմնախնդիրը, այլ իշխանությունների՝ այդ հարցերում ունեցած սխալ դիրքորոշումը:

Համացանցի և էլեկտրոնային լրատվամիջոցների հնարավորությունների կիրառմամբ՝ ԱՄՆ-ի վարած տեղեկատվական պատերազմը համակարգված բնույթ ունի. այն նպատակ է հետապնդում իրանցիների մեջ վախի, թերարժեքության զգացում սերմանելու, իշխանությունների հանդեպ անվստահություն ձևավորելու, իսկ միջազգային հանրության շարքերում՝ Իրանի հանդեպ բացասական մթնոլորտ ստեղծելու համար: Իրանի դեմ ռազմական գործողություններ նախաձեռնելու պարագայում այսպիսի մթնոլորտը օգտակար կլինի, միջազգային հանրությունը այդքան խիստ չի քննադատի ԱՄՆ-ին, քանի որ այդ ամենը կբացատրվի որպես «ԱՄՆ-ի բարի կամքի դրսևորում», որը պայքարում է «չար իշխանությունների դեմ»: Սա է այն կարևոր առաքելություններից մեկը, որը կատարում են ԱՄՆ-ի մի շարք լրատվամիջոցներ:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցներում («Նյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի» կայքէջեր, Սի-Էն-Էն և այլն) տեղ գտած նյութերը, որոնք հիմնականում վերլուծություններ, կարծիքներ և մեկնաբանություններ են, ունեն համակարգված բնույթ, գործում են միևնույն սկզբունքների շրջանակներում, լուսաբանում են գերազանցապես Իրանի շուրջ ծավալվող բացասական երևույթները և հրապարակվում են մի քանի լրագրողների կողմից: Հազվադեպ են հանդիպում նյութեր, որոնք ներկայացնում են Իրանի, նրա իշխանությունների հետ կապված ձեռքբերումները, դրական երևույթները: Նշված լրատվամիջոցներում կիրառվող մեթոդներից են ամբողջության մեջ մասնավոր դեպքերի կարևորումը, իրականության մասնակի լուսաբանումը, իրադարձությունների հիմնական դրույթների շրջանցումը և այլն: Այս մեթոդների կիրառումը հնարավոր է դարձնում ըստ սեփական հայեցողության ներկայացնել տեղեկատվությունը: Ամերիկյան էլեկտրոնային աղբյուրներում կարելի է հանդիպել նաև ծայրահեղ դիր-

քորոշումների: «Stopirannow.com» կայքը և դրանում տեղ գտած հայտարարությունները խոսքերիս վառ ապացույցն են:

Իր հերթին Թեհրանը փորձում է հասարակությանը հեռու պահել Արևմուտքից եկած տեղեկատվական հոսքերից, ինչպես նաև հակահարված տալ իրեն ուղղված մեղադրանքներին ու քննադատություններին: ԻԻՀ իշխանությունների կողմից կիրառվող հայտնի մեթոդներից են խիստ գրաքննությունը, համացանցի և բջջային կապի թուլացումը, կայքէջերի արգելափակումը և այլն:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- Իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմների մի քանի կարևոր շրջափուլ:

- Որո՞նք են իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմների հիմնական ուղղությունները:

- Միացյալ Նահանգների լրատվամիջոցների՝ Իրանի արտաքին քաղաքականության որոշ հիմնախնդիրների լուսաբանումը:

- Իրանի ներքաղաքական և հասարակական կյանքի խնդիրների ներկայացումը ամերիկյան էլեկտրոնային լրատվամիջոցներում:

- Տեղեկատվական պատերազմները Իրանի միջուկային խնդիրների շուրջ:

- Տեղեկատվական պատերազմները ԻԻՀ ռազմական ոլորտի հիմնախնդիրների շուրջ:

## **Թեմա 12.**

### **Հակաիրանական քարոզչությունը և Իրանի միջազգային վարկանիշը**

Հակաիրանական քարոզչությունը նպատակաուղղված է միջազգային ասպարեզում, ինչպես նաև իրանցիների շարքերում Իրանի կրոնապետական իշխանությունների հանդեպ բացասական մթնոլորտի ձևավորմանը: Ակտիվ քննարկվում են պետական կառույցների, միջուկային ծրագրերի, ազգային փոքրամասնությունների հետ կապված թեմաները<sup>93</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ լրատվության ոլորտում ամերիկյան լրագրողները, վերլուծաբանները կիրառում են արևմտյան չափորոշիչներ, հիմնականում հանդես են գալիս սեփական պետական քաղաքականության շահերի քարոզչության տեսանկյունից: Նման պայմաններում մատուցվող լրահոսը հաճախ լսարանին կարող է չներկայացնել իրական պատկերը և ծառայել Վաշինգտոնի նախաձեռնած քարոզչության իրականացմանը: Տեղեկատվության մատուցման գործում միաժամանակ գերակշռում են վերլուծությունները և կարծիքները, և քիչ են փաստերը: Դրա վառ օրինակը 2009 թ. նախագահական ընտրությունների մասին լուսաբանումներն էին. վերլուծությունների և մեկնաբանությունների տեսքով ամենուր խոսվում էր «խարդախությունների և կեղծիքների» մասին, սակայն չէին ներկայացվում հիմնավոր ապացույցներ:

Կրոնապետական կարգերի նկատմամբ ամերիկյան լրատվամիջոցները բազմիցս արտահայտել են իրենց կարծիքը, և, ինչպես Թեհրանի ղեկավարներն են նշում, Արևմուտքը նպատակ ունի Իրանում հաստատելու աշխարհիկ կարգեր: «Լոս Անջելես Թայմսը» «Իսլամական Հանրապետության վերջի սկիզբը» հոդվածում անդրադառնում է վերջին

---

<sup>93</sup> Ուսումնասիրության հիմք են ծառայել 2001-2011 թթ. ամերիկյան հայտնի լրատվամիջոցների նյութերը:

տարիներին Իրանում կատարվող իրադարձություններին: Հոդվածի հեղինակը կարծիք է հայտնում, որ «եկել է Իսլամական Հանրապետության վերջը»: Մակայն նա գտնում է, որ միայն ցույցերը բավարար չեն հեղափոխություն իրականացնելու համար: ԻԻՀ հոգևոր առաջնորդը չի կարող պաշտոնանկ արվել, քանի որ շիական իսլամի սկզբունքներով «նա հաշվետու է Աստծո առաջ» և «նրան պաշտպանում է Հեղափոխական գվարդիան: Մա ավելի հզոր ուժ է, քան երկրի բանակը և ծառայում է միայն հոգևոր առաջնորդին»: Հեղինակը գրում է, որ կրոնապետական կարգերը անկում կապրեն, եթե Հեղափոխական գվարդիան փոխի իր կողմնորոշումը<sup>94</sup>:

Հաշվի առնելով Հեղափոխական գվարդիայի մեծ դերը երկրի քաղաքական, տնտեսական կյանքում՝ արևմտամետ լրատվամիջոցները բազմիցս պիտակավորել են այն որպես «ահաբեկչական» կառույց: Հետաքրքրական է այն փաստը, որ հենց ԱՄՆ-ի լրատվամիջոցներում այս կառույցը չի նշվում որպես այդպիսին, սակայն ԱՄՆ-ի լրատվամիջոցները դեմ չեն լուսաբանել այդ պիտակավորումը Իսրայելի անունից: Այսպես՝ «Լոս Անջելես Թայմսը» գրում է. «Իսրայելական լոբբիի կողմից Հեղափոխական գվարդիան ահաբեկչական կառույց անվանելը մի փորձ է, որը կմոտեցնի Իրանի հետ պատերազմին»<sup>95</sup>: Փաստորեն, Միացյալ Նահանգների լրատվամիջոցներն օգտագործում են «ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու» մարտավարությունը:

Իրանցի ակտիվիստ Մազիար Բահարին 4 ամիս բանտում անցկացնելուց հետո Իրանի իշխանությունների, Հեղափոխական գվարդիայի և ԱՄՆ-ի մասին գրում է հետևյալը. «Արևմուտքը դեռևս ունի Իրանի կարիքը և կշարունակի բանակցել նրա հետ: Հեղափոխական գվարդիայի մասին նշում է, որ նրանք ուզում են նվաճել կառավարությունը և Իրանում ավելացնել իրենց գործարարությունը: Անհրաժեշտ է բանակցել Իրանի հետ, համաձայնության գալ և չթույլատրել ձեռք բերել միջուկային զենք, թեև ունենալով միջուկային զենք՝ Իրանը չի հարձակվի այլ

<sup>94</sup> Տե՛ս **Duss M.**, The Beginning of the End For the Islamic Republic // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 19.06.2009:

<sup>95</sup> Letters to The Editor: Another War On Horizon? // Los Angeles Times, [www.latimes.com](http://www.latimes.com), 25.10.2007.

պետությունների վրա: Պարզապես Հեղափոխական գվարդիան կամ-րապնդի իր դիրքերը»<sup>96</sup>:

ԱՄՆ-ի ՁԼՄ-ներում հաճախակի քննարկվում են Իրանի ազգային փոքրամասնությունների, միջէթնիկական հիմնախնդիրները: Քարոզչու-թյուն է տարվում իրանցի քողերի, Ատրպատականի թյուրքախոս բնակ-չության, և բելուջների շրջանում, որի նպատակը կենտրոնական իշխա-նություններից նրանց բաժանումն է: Հաշվի առնելով, որ նրանց որոշ մասը դավանում է իսլամի սուննի ուղղությունը, ԱՄՆ-ը կիրառում է սուն-նի-շիա հակամարտության սկզբունքը՝ տարածայնություններ հրահրե-լով նրանց միջև:

ԱՄՆ-ի իշխանությունները քայլեր են ձեռնարկում ընդհանուր եզրեր գտնելու Իրանում ազգային (կրոնական) փոքրամասնությունների հետ՝ աջակցելով նրանց կա՛ն ներգաղթել ԱՄՆ, կա՛ն դեմ դուրս գալ գործող կարգերին՝ հասնելով ինքնիշխանության: Սակայն Իրանում ազգային փոքրամասնությունների առաջնորդները նշում են, որ իրանական կա-ռավարությունը վատ վերաբերմունք չի դրսևորում փոքրամասնություն-ների նկատմամբ: «Իրանից գրադաշտականների, քրիստոնյաների, հուդդայականների արտագաղթը կապված է սոցիալ-տնտեսական հիմ-նահարցի, գործազրկության հետ, որը վերաբերում է նաև իրանցիներին»,– նշում է ասորի քրիստոնյաների առաջնորդ և Իրանի խորհրդա-րանի անդամ Յոնաթան Բեթկոլիանը: Խոսելով ԱՄՆ-ի մասին՝ նա նշում է. «Նրանք մեր բոլոր անդամներին տալիս են «կանաչ թղթերից» (Green Card): Նրանց միակ նպատակն այն գաղափարի քարոզչությունն է, թե Իրանը վատ է վերաբերվում իր փոքրամասնություններին»<sup>97</sup>:

Նման ծրագրերը համակարգվում են հատուկ կազմակերպություն-ների կողմից, որոնց նպատակն է աջակցել ոչ իսլամադավան փոքրա-մասնություններին հեռանալ Իրանից: Այս խնդրին առնչվում են նաև հայերը: Նման համայնքների թուլացումը և Իրանից տեղափոխումը շա-հավետ է ԱՄՆ-ի համար: Վերջինս օգտագործում է «փախստականնե-

---

<sup>96</sup> Bahari M., Why the US Should Still Talk With Iran? // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 26.11.2009.

<sup>97</sup> Erdbrink Th., Brulliard, K., US Zeal for Iran's Non-Muslims faulted // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 01.03.2008.

րի» տեղեկությունները երկրի վերաբերյալ, թուլացնում է համայնքները և ներկայացնում երկիրը վատ իմիջով<sup>98</sup>:

ԱՄՆ-ի՝ իրանական ազգային փոքրամասնություններին որպես կառավարությունից դժգոհ խավ ներկայացնելու ջանքերը հաճախ չեն համապատասխանում իրականությանը: Իրանում գործում է հրեական համայնք, որն Իրանի խորհրդարանում ունի ներկայացուցիչ, ինտեգրված է Իրանի հասարակական-քաղաքական կյանքին, ապրում է առանց խոչընդոտների և չի ենթարկվում հետապնդումների:

Հակաիրանական քարոզչության մեջ ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցները կիրառում է նաև հետևյալ մարտավարությունը. սկզբում որոշ արևմտյան լրատվամիջոցներ ասեկոսեներ են տարածում, պաշտոնյաների շուրթերով հայտարարություններով են հանդես գալիս ինչ-որ կարևոր խնդրի շուրջ: Հետո ԱՄՆ-ի լրատվամիջոցներն անդրադառնում են այդ տեղեկատվությանը՝ ժխտելով կամ առաջ քաշելով սեփական տեսակետը: Այդպիսով՝ տվյալ թեման մտնում է սկզբնական շրջանառության մեջ: Այնուհետև դաշնակիցներից մեկը կրկին քննարկման է դնում այդ հարցը, հետո մյուսներն են անդրադառնում, և այդ թեման ավելի արդյունավետորեն է սկսում շրջանառվել: Վերջնական արդյունքում բոլորը սկսում են մասնակցել և հասնել նախատեսված եզրահանգմանը: Օրինակ՝ 2010թ. վերջին ամիսներին Իսրայելում ԱՄՆ-ի դեսպանը հայտարարում էր, որ աշխարհն ունի 6-18 ամիս, որպեսզի Իրանին ետ կանգնեցնի միջուկային զենք ստեղծելու մտքից: Այս հայտարարությունից հետո Բ. Օբաման ասաց, որ անընդունելի է այդ հարցի լուծման ռազմական ճանապարհը: Ամիսներ անց ԱՄՆ-ի դաշնակից Բահրեյնի թագավորի շուրթերով հայտարարվեց, որ Իրանի միջուկային ծրագիրը պետք է կասեցվի հիմա, քանի որ հետագայում ավելի դժվար կլինի նրան կանգնեցնել: Այս հայտարարությանը հետևեց Սաուդյան Արաբիայի թագավորի հայտարարությունը. «Պետք է կտրել օձի գլուխը, քանի դեռ ժամանակ կա»: Հետո արևմտամետ այլ ուժեր հանդես եկան: Վերջնական արդյունքում Իրանին կանխելու համար կիրառվեցին ավելի ծանր պատժամիջոցներ: Նման դիվանագիտական-տեղեկատվական

---

<sup>98</sup> Տե՛ս նույն տեղում:

քաղաքականությունը արդյունավետ քայլ է՝ ներկայացնելու՝ իբրև թե ամբողջ աշխարհը ոտքի է կանգնել Իրանի միջուկային ծրագիրը տապալելու համար: Այս և նմանատիպ մարտավարական քայլերն ուղղված են միջազգային հանրության աչքերում Իրանի վարկանիշի ցածրացմանը և նրա միջազգային ինտեգրման խոչընդոտմանը:

Պատժամիջոցների կիրառումը մեծ խնդիրների առաջ է կանգնեցնում Իրանին և հանգեցնում է նրա մեկուսացմանը: Այս մասին նշում են ԱՄՆ-ի նախագահը և փոխնախագահը: Բ. Օբաման հայտարարեց, որ «ԻԻՀ-ն ավելի մեկուսացած է» մեր նոր վարչակազմի օրոք: Ամիսներ անց փոխնախագահ Ջ. Բայդենը նշեց. «Այն բանից ի վեր, երբ մեր վարչակազմը եկել է իշխանության, ես կառանձնացնեմ, որ Իրանը դարձել է ավելի մեկուսացած ներքին և արտաքին բնագավառներում, ունի ավելի քիչ բարեկամներ աշխարհում»<sup>99</sup>: Սակայն ԻԻՀ իշխանությունները գտնում են, որ այդ պատժամիջոցներից հետո էլ Իրանը շարունակում է իր որդեգրած ուղին, բազմաթիվ հանդիպումներ է անցկացնում տարբեր երկրներում, որոնք չեն համընկնում ԱՄՆ-ի դեկավարների տեսակետներին:

2011 թ. արաբական աշխարհի անցուղարձերի համատեքստում իրանական թեմաները շարունակեցին մնալ արդիական: «Եվրանյուզ» հեռուստատեսությունը անդրադարձավ արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, այնուհետև՝ Իրանին: «Արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Յուրեղի հիմնական մասնակիցները երիտասարդներն են: Նրանք ցանկանում են բարելավվել իրենց կյանքը: ԱՄՆ-ը կշարունակի հետևել ժողովրդավարական շարժումներին և այդ հարցում կաջակցի իր դաշնակիցներին: Պարսից ծոցի երկրներում, ի տարբերություն մյուս երկրների, իրավիճակը ավելի հանգիստ է, քանի որ Պարսից ծոցի երկրներում մարդկանց նյութական ապահովվածությունն ավելի բարձր է: Այստեղ ակտիվ են շիաները, իսկ սուննիները մնում են ստվերում: Շիաների ակտիվությունը բացատրվում է իրադարձություններին

---

<sup>99</sup> **Krauthammer Ch.**, The Myth of Iran's "Isolation" // Washington Post, [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), 11.06.2010.

Իրանի միջամտությամբ»<sup>100</sup>: Փաստորեն, նույնիսկ այլ երկրների մասին տեղեկություններ հաղորդելիս իրանական թեմաները շարունակում են շրջանառվել:

Հակաիրանական քարոզչության թեմաներից ակտիվ քննարկվում են նաև իրանական հասարակության մեջ կնոջ ճնշված լինելու գաղափարը, ագրեսիվ իսլամի հետևորդների, անհնազանդ երիտասարդների թեմաները: Տեղեկատվական հոսքերի մեծ մասը ներկայացվում է բացասական երանգով՝ ահաբեկչական գործողություններ, սպանություններ, բռնություններ: Վատ լուրերը գերակշռում են այս տարածաշրջանից ստացվող լրահոսում: Հատկանշական է, որ հակամարտությունների, լարվածության, անկայունության բացասական հենքի վրա լուսաբանվում են նաև դրական կողմեր, այն է՝ արևելյան մշակույթի, բնության գրավչությունը: «Նյու Յորք Թայմսը», անդրադառնալով Իրանի հասարակական-քաղաքական կյանքին, գովազդում է Իրանի մշակույթը, իրանական ճոխ կյանքը (նկար 1), ընդ որում՝ այդ գովազդը դրվում է 1-ին էջի տեսանելի վայրում (նկար 1):

13.02.2011

Middle East - International News - Ira...

The screenshot shows the New York Times website interface. At the top, there are navigation links: HOME PAGE, TODAY'S PAPER, VIDEO, MOST POPULAR, and TIMES TOPICS. On the right, there are links for Welcome, Log Out, Help, and TimesPeople. The main header features 'The New York Times' logo, the date 'Sunday, February 13, 2011', and the section title 'Middle East'. Below the header is a secondary navigation menu with categories like WORLD, U.S., N.Y./REGION, BUSINESS, TECHNOLOGY, SCIENCE, HEALTH, SPORTS, OPINION, ARTS, STYLE, TRAVEL, JOBS, REAL ESTATE, and AUTOS. A sub-menu for 'MIDDLE EAST' includes AFRICA, AMERICAS, ASIA PACIFIC, EUROPE, and MIDDLE EAST. A large advertisement banner for Persia is displayed, with the text 'Explore PERSIA in its most beautiful season' and 'Cultural Escorted tour to IRAN'. Below the banner, there are several news snippets. One is titled 'Military Offers Assurances to Egypt and Neighbors' by KAREEM FAHM, with a sub-headline 'As a new era dawned in Egypt, its leaders sought to project control and assuage fears about military rule.' Another snippet is 'More From Opinion' with the title 'What Will the Egyptian Military Do?' and a sub-headline 'With Mubarak's departure, will the...'. On the right side, there is a 'TIMES TOPICS: FIND NEWS BY COUNTRY' section with a dropdown menu and a 'Go to a Country Page' button. Below that is a 'TIMES TOPICS IN THE NEWS' section with a list of subjects including 'People: Mahmoud Ahmadinejad', 'Ehud Olmert', and 'Subjects: Iraq Elections', 'Status of Forces Agreement (pdf)'. At the bottom left, there is a small icon for 'Photographs' and a link to 'Interactive: 18 Days at the Center of Egypt's Revolution'.

<sup>100</sup> Euronews TV, Արմնյուզի թողարկում, News, 19.02.2011:



Ս. Երիցյանը գրում է, որ որևէ ժամրի նյութ, տեղադրվելով կոնկրետ որևէ էջում կամ էջի որևէ հատվածում, նոր իմաստ և բովանդակություն է ստանում: Նյութը, գտնելով իր տեղը, ամբողջականության մեջ ձեռք է բերում իր ազդեցությունը՝ որպես հասարակական կարծիքի վրա ազդեցության լծակ<sup>101</sup>: Ստացվում է, որ Միացյալ Նահանգներում անուշադրության չեն մատնում Իրանի հարուստ բնությունը և մշակույթը՝ նյութը տեղադրելով աչքի ընկնող հատվածում, սակայն չեն հանդուրժում Իրանի իշխանությունը:

Այսպիսով Իրանի հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանումը կարող է լիովին չհամապատասխանել իրականությանը, սակայն ամերիկյան լրատվամիջոցների կողմից նման տեղեկատվությունը կարող է պարբերաբար քննարկվել, տարածվել և շրջանառության մեջ դրվել՝ ստեղծելով համապատասխան կարծրատիպեր և առասպելներ: Փաստենք, որ ԱՄՆ-ի կողմից ձեռնարկած հակաիրանական քարոզչությունը ստանում է լայն արձագանք: «Pew Research Center»-ի 2006-2011 թթ. կատարած հարցումների արդյունքները ցույց են տալիս տարբեր երկրների ունեցած դրական կարծիքը Իրանի մասին<sup>102</sup> (աղյուսակ 1):

(աղյուսակ 1)

	Երկիրը	2006 թ. քանի % -ն է դրական արտահայտվել	2011 թ. քանի % -ն է դրական արտահայտվել
1.	Ինդոնեզիա	77 %	58%
2.	Պակիստան	72 %	71%
3.	Եգիպտոս	59 %	22%
4.	Թուրքիա	53 %	24%
5.	Հորդանան	49 %	23%
6.	Ռուսաստան	43 %	42%
7.	Մեծ Բրիտանիա	34 %	23%
8.	Հնդկաստան	31 %	17%

<sup>101</sup> Տե՛ս **Երիցյան Ս.**, Հեռուստատեսություն: Գործառույթները, զարգացման միտումները և հեռանկարները // Եր., «Մանկավարժ», 2005, էջ 173:

<sup>102</sup> Տե՛ս Opinion of Iran // Pew Research Center, Pew Global Attitude Project, <http://pewglobal.org/database/?indicator=25>:

9.	Չինաստան	26 %	29%
10.	ԱՄՆ	25 %	19%
11.	Ճապոնիա	23 %	20%
12.	Ֆրանսիա	22 %	21%
13.	Իսպանիա	22 %	11%
14.	Գերմանիա	12 %	9%

Մեկ այլ հարցում նպատակ ունի պարզելու, թե որոնք են այն երկրները կամ հակամարտությունները, որոնք սպառնում են աշխարհի խաղաղությանը<sup>103</sup> (աղյուսակ 2):

(աղյուսակ 2)

Աշխարհի խաղաղությանը սպառնացող երկրներ				
Մարդկանց կարծիքը երկրների մասին՝ արտահայտված %-ով	Իրանը	ԱՄՆ-ը Իրաքում	Հյւ. Կորեան	Իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը
Երկրներ	%	%	%	%
ԱՄՆ	46	31	34	43
Մ. Բրիտանիա	34	41	19	45
Ֆրանսիա	31	36	16	35
Գերմանիա	51	40	23	51
Իսպանիա	38	56	21	52
Ռուսաստան	20	45	10	41
Ինդոնեզիա	7	31	4	33
Եգիպտոս	14	56	14	68
Հորդանան	19	58	18	67
Թուրքիա	19	60	6	42
Պակիստան	4	28	8	22
Նիգերիա	15	25	11	27
Ճապոնիա	29	29	46	40
Հնդկաստան	8	15	6	13
Չինաստան	22	31	11	27

<sup>103</sup> St'ev No Global Warming Alarm in the U.S., China, America's Image Slips, But Allies Share U.S. Concerns Over Iran, Hamas // Pew Research Center, Pew global attitude project, <http://pewglobal.org>, 13.06.2006:

Ամերիկացիների քարոզչական գործունեությանը հակազդելու նպատակով Իրանի կառավարությունը նպատակահարմար է գտնում ուժեղացնել համագործակցությունը տարբեր երկրների, միջազգային կառույցների, Իրանի և տարածաշրջանային առաջատար տեղեկատվական կազմակերպությունների հետ, ինչպես նաև ստեղծել «ուղեղային կենտրոններ», Իրանի տարածքում խստացնել վերահսկողությունը արտասահմանյան լրահոսի, համացանցի նկատմամբ: Կառավարությունը նաև խորհուրդ է տալիս անուշադրության մատնել Իրանի հանդեպ Վաշինգտոնի քարոզչությունը՝ որակելով այն որպես կեղծիք: Իհարկե, նման քայլերն ունենում են որոշակի արդյունքներ, սակայն դրանք ի վիճակի չեն պայքարելու վերազգային ՉԼՄ-ների և տեղեկատվական հոսքերի դեմ, հատկապես՝ հակառակը համոզելու միջազգային հանրությանը: Ուստի հակաիրանական քարոզչության նման պայմաններում Իրանի իմիջի շուրջ կարծրատիպերի և առասպելների ձևավորումը ապագայում կարող է ավելի ամրապնդվել:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առանձնահատկությունները Միացյալ Նահանգների լրատվամիջոցներում՝ կարող ենք որոշ կարևոր շեշտադրումներ առանձնացնել.

- ԱՄՆ-ի ՉԼՄ-ներում (հիմնականում «Նյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի», «Սի-Էն-Էնի» կայքէջեր) մեծ ուշադրության են արժանանում Իրանի վերաբերյալ թեմաները, որոնք հիմնականում լուսաբանում են հասարակական-քաղաքական կյանքի խնդիրները և դժգոհությունները՝ չլուսաբանելով դրական երևույթները: Մասնավորապես իրենց նյութերում նշված լրատվամիջոցները կարող են հիմնվել ընդդիմադիր, պաշտոնանկ արված կամ վտարված ներկայացուցիչների տեղեկությունների վրա՝ շեշտելով բացասական խնդիրները: Սա մի փորձ է միջազգային հանրությանը ցույց տալու իրանցիների դժգոհությունները իշխանություններից: Նման հենքի վրա նշվում է, որ իրանցիները օգնության կարիք ունեն:

- Լայն քննարկման առարկա են Իրանում բանտարկյալների, մահապատժի ենթարկվածների, սպանվածների թեմաները: Վերջիններիս

հետ կապված՝ ներկայացվում են հուզմունք, վախ, լարվածություն առաջացնող տեսարաններ:

- ԱՄՆ-ի հայտնի ՉԼՄ-ները հաճախ հիմնվում են հետախուզական տվյալների, վերլուծությունների, կարծիքների վրա, որոնք, որպես կանոն, չեն մատնանշում կամ հազվադեպ են մատնանշում իրենց աղբյուրները կամ հեղինակները, հետևաբար նման տեղեկությունների հավաստիությունը կարող է վիճարկելի լինել:

- Մարտավարության առումով ԱՄՆ-ի էլեկտրոնային ՉԼՄ-ներում կարող ենք հանդիպել այնպիսի միջոցների կիրառման, ինչպիսիք են ուրիշի անունից հակառակորդին վատաբանելը (Իսրայելի անունից Հեղափոխական գվարդիային ահաբեկչական կառույց անվանել), դաշնակից երկրների հեղինակավոր դեմքերի, ՉԼՄ-ների միջոցով մեծ աղմուկ բարձրացնելը և այլն:

- ԱՄՆ-ի լրատվամիջոցները կիրառում են արևմտյան չափորոշիչներ, ինչը չի կարող օբյեկտիվորեն պատկերել իրականությունը, հետևաբար ներկայացված տեղեկատվությունը կարող է լինել աղճատված:

- Միացյալ Նահանգների համար կարևոր է արևմտյան արժեքների ներմուծումը իրանական հասարակության մեջ: Այդ արժեքների գովազդումը և մատուցումը իրականացնում են ԱՄՆ-ի հայտնի ՉԼՄ-ները:

- Հաճախ անդրադարձ է կատարվում իրանցի երիտասարդության թեմաներին: Հաշվի առնելով, որ Իրանում երիտասարդներն ունեն որոշ դժգոհություններ, բնակչության մեծ մասը 35-ից ցածր տարիք ունի և համեմատաբար ավելի ակտիվ է, ԱՄՆ-ի լրատվամիջոցները կարևորում են երիտասարդների շրջանում հակակառավարական տրամադրությունների ձևավորումը: Լայն քննարկման առարկա է կանանց և տղամարդկանց ոչ իրավահավասար լինելու խնդիրը:

- Իրանին վերաբերող կարևոր խնդիրներից մեկը կապված է ժողովրդավարության տարածման հետ: Օրինակ՝ ամերիկյան շատ հեղինակներ գտնում են, որ համացանցային հաղորդակցությունն աշխարհում պետք է լինի ազատ, ինչը կնպաստի ժողովրդավարության տարածմանը, սակայն հարցն այն է, որ նման սկզբունքները ոչ բոլորի համար են ընդունելի: ԱՄՆ-ի համար այս սկզբունքներն ընդունելի են, և

նրանք, հիմնվելով սրա վրա, լուսաբանում են իրադարձությունները և մատուցում միջազգային լսարանին:

- ԱՄՆ-ի ՋԼՄ-ների կողմից Իրանը որպես «չարիքի առանցք», «ահաբեկչական պետություն», «ԱՄՆ-ի թիվ 1 թշնամի» ներկայացնելը նպատակ ունի աղավաղելու Իրանի միջազգային վարկանիշը, նրա հանդեպ սերմանելու անվստահություն և խոչընդոտելու նրա միջազգային ինտեգրմանը:

- Հաճախակի լուսաբանելով ազգային (կրոնական) փոքրամասնությունների, իշխանություն-ընդդիմություն տարածայնությունների և այլ խնդիրներ՝ վերոնշյալ լրատվամիջոցները միշտ փորձում են «կենդանի» պահել լարվածության մթնոլորտը:

- Իրանի իշխանություններին վատաբանելու հետ մեկտեղ վառ գույներով են պատկերվում իրանական մշակույթը, ճոխ կյանքը:

- Հաշվի առնելով նախկին փորձը, երբ արևմտյան վերլուծությունները «հիմնավորեցին» իրաքյան քիմիական «սպառնալիքները», և հետագայում պարզ դարձան Վաշինգտոնի նկրտումները՝ կարող ենք փաստել, որ ներկայումս իրանական միջուկային «սպառնալիքների» թմբկահարումը լրատվամիջոցներով միջազգային լսարանում հետապնդում է կոնկրետ նպատակներ, այն է՝ կրոնապետական վարչակարգի քայքայում և իրանական նավթի ու գազի պաշարների նկատմամբ վերահսկողության հաստատում:

## **Առաջադրանքներ**

### **Ներկայացնել՝**

- ԱՄՆ-ի ՋԼՄ-ներում Իրանի ազգային փոքրամասնությունների, միջէթնիկական հիմնախնդիրների լուսաբանումը:

- Իրանական հասարակության մեջ կնոջ ճնշված լինելու գաղափարի արծարծումը:

- ԱՄՆ-ի՝ հակաիրանական քարոզչության արձագանքը ըստ «Pew Research Center»-ի 2006-2011թթ. հարցումների:

- Ամերիկյան քարոզչական գործունեությանը հակազդելու Իրանի ձեռնարկած քայլերը:

### Թեմա 13.

#### Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների համեմատական վերլուծությունը

21-րդ դարի սկիզբը աչքի ընկավ մի շարք հակամարտություններով, որոնցից են ռազմական գործողություններն Իրաքում, Լիբիայում, Սիրիայում:

Նշված իրադարձությունները մի շարք հարցերում ունեն ընդհանրություններ՝ քիմիական զենք, միջազգային ահաբեկչություն, ժողովրդավարական հիմնախնդիրներ, տարաբնույթ ներքին հակասություններ (հիմնականում միջկրոնական, միջցեղային) և այլն<sup>104</sup>: Իրադարձությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղեկատվական գործողությունները նախապես մտածված և միևնույն նպատակին են միտված: Ռուս հեղինակներ Վ. Վ. Յիգանովը և Ս. Ն. Բուխարինը գտնում են, որ տեղեկատվական պատերազմների մեխանիզմները կանխատեսելու, պլանավորելու, պաշարներ առանձնացնելու և դրանց իրականացումը խթանելու կանոնների և գործընթացների՝ որոշակի նպատակներ հետապնդող ամբողջություն են: Դրանք հետազոտելու և մշակելու համար օգտագործվում են մոդելներ, որոնցով ձևավորում են տեղեկատվական պատերազմներ վարելու հիմնական կանոնները: Ընդհանուր և սկզբունքորեն համընկնող մեխանիզմները կիրառվում են տարբեր համակցությամբ, տարբեր ոլորտներում: Գործնականում կիրառվող մոդելների քանակը այդքան էլ մեծ չէ: Ավելին՝ դրանք բոլորը միևնույն բազային մոդելի ձևավոխումներն են<sup>105</sup>:

---

<sup>104</sup> Stéu McCluskey M., The United States' 'outdated' terror list, Aljazeera, 26 January, 2014, <http://www.aljazeera.com/indepth/features/2014/01/united-states-outdated-terror-list-0141267333982434.html>:

<sup>105</sup> Stéu Цыганов В., Бухарин С., Информационные войны в бизнесе и политике, Теория и методология, М., Академический проект, 2007. с. 13:

Թեմայում նպատակ ունենք ներկայացնելու իրաքյան, լիբիական և սիրիական բախումների վերաբերյալ ազդեցիկ ՋԼՄ-ի<sup>106</sup> հիմնական շեշտադրումները՝ կապված միջազգային հասարակական կարծիքի ձևավորմամբ, ինչպես նաև ցույց տալ այդ իրադարձությունների լուսաբանման ընդհանրությունները:

Շամանակակից յուրաքանչյուր պատերազմ նախ և առաջ սկսվում է մեղիա դաշտից: Այստեղ ձևավորվում է հասարակական կարծիք, այնուհետև ռազմական միջամտության անհրաժեշտության հարցում միջազգային հանրությանը համոզելու ակտիվ քայլեր են ձեռնարկվում: Այս տեխնոլոգիան կիրառվեց Իրաքում, Լիբիայում և Սիրիայում: Մինչև բուն ռազմական գործողություններին անցնելը նշված երկրներում «պարարտ հող» նախապատրաստվեց՝ հրահրելով տարածայնություններ և բախումներ. որոշ օտարերկրյա ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ քաղաքացիական հասարակություն կառուցելու կոչեր հնչեցրին՝ պատճառաբանելով, որ իշխանությունները խախտում են մարդկանց իրավունքները, բացակայում է հանդուրժողականությունը<sup>107</sup>: Հետո բողոքի ալիք բարձրացավ: Տվյալ գործին լծված լրագրողները (որոնց թվում, ըստ շրջանառվող տեղեկությունների, լրտեսներ կային<sup>108</sup>), վերլուծաբանները սկսեցին շրջանառության մեջ դնել քաղաքացիական հասարակություն «կառուցելու» հրամայականը. սկզբում՝ տեղային և փոքր մասշտաբներով, ապա ընդլայնվելով՝ երևան եկան քաղաքացիական պատերազմին բնորոշ տարրեր: Հենց այս՝ գրեթե նույն ձեռագրով և քայլերով սկսվեցին զարգացումները:

---

<sup>106</sup> Ուսումնասիրությունները կատարվել են «Բի-Բի-Սի», «Սի-Էն-Էն», «Նյու Յորք Թայմս», ինչպես նաև «Ալ-Չաֆիրա» և այլ հայտնի լրատվամիջոցների հրապարակած նյութերի հիման վրա:

<sup>107</sup> Տե՛ս World Report, Human Rights Watch 2010, <http://www.hrw.org/sites/default/files/reports/wr2010.pdf>, pp 536-541, 555-561, World Report, Human Rights Watch 2011, <http://www.hrw.org/sites/default/files/reports/wr2011.pdf>, pp. 562-568, 584-591:

<sup>108</sup> Տե՛ս **Цыганок А.**, Информационная война в Ливии: фальшивки НАТО, Лаборатория перспективных разработок, <http://www.ci2b.info/3-texnologii-iv/4-informacionnye-vojny/informacionnaya-vojna-protiv-livii/>:

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, օգտագործելով ասիական լայնամասշտաբ գործողությունների մասին տեղեկատվությունը, միջազգային հանրությանը ներկայացվեց հետևյալը:

• **Իրաքի** առաջնորդ Սադդամ Հուսեյնը բռնապետ է, նա ժողովրդավար չէ, ուստի պետք է հեռանա: Նրա անվան հետ են կապված բազմաթիվ սպանություններ<sup>109</sup>: Մինչ այդ ԱՄՆ պետքարտուղարության պլանավորման բաժնի ղեկավար Ռիչարդ Հասասը առաջ էր քաշում «ժողովրդավարության հաստատում մուսուլմանական երկրներում» գաղափարը, իսկ պետքարտուղար Քոլին Փաուելը խոսում էր Սերձավոր Արևելքի ժողովրդավարացման մասին<sup>110</sup>: Իրաքյան, լիբիական, սիրիական փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվական գրոհների առաջնային քիրախ են դառնում երկրների առաջնորդները, «ջրի երես են դուրս գալիս» նրանց «սև» գործերը: Այս ամենի նպատակը, իհարկե, նախ և առաջ նրանց հեղինակության նսեմացումն ու ոչնչացումն է:

• Իրաքի ներսում տարածայնություններ կային իշխանությունների և իրաքյան քրդերի միջև: Վեջիններիս ներուժը ևս օգտագործվեց երկրում սպակայունացում ստեղծելու համար:

• Իրաք ներխուժելու համար հիմք դարձավ քիմիական զենքի առկայության մասին լուրերի տարածումը:

• Արդեն ռազմական գործողությունների ծավալումից հետո շրջանառվում է Սադդամին լքել են իր կողմնակիցները, նա մնացել է նեղ շրջապատով<sup>111</sup>, իսկ Բաղդադի բնակչությունը ողջունել է ամերիկյան տանկերի մուտքը մայրաքաղաք<sup>112</sup>:

• Իշխանամետ ուժերը սկսեցին պայթեցնել նավթահորեր՝ ասելով, որ այս պատերազմը «սև ոսկու» համար է, իսկ հակակառավարական

---

<sup>109</sup> St'u Transcript of Bush news conference on Iraq, CNN International, 07 March, 2003, <http://edition.cnn.com/2003/US/03/06/bush.speech.transcript/index.html>:

<sup>110</sup> St'u **Уткин А.**, Правда об Ираке, или Битва в Месопотамии, М.: ЗАО, Олма Медиа групп, 2007, с. 94:

<sup>111</sup> St'u **Tariq A.**, Iraq War 10 Years Later: Where Are They Now?, NBC news, [http://worldnews.nbcnews.com/\\_news/2013/03/19/17374192-iraq-war-10-years-later-where-are-they-now-tariq-aziz?lite](http://worldnews.nbcnews.com/_news/2013/03/19/17374192-iraq-war-10-years-later-where-are-they-now-tariq-aziz?lite):

<sup>112</sup> St'u **Wood P.**, Reporters' Log: War in Iraq, BBC news, 9 April, 2003, <http://news.bbc.co.uk/2/hi/2932021.stm>:



ուժերը շտապեցին հանդես գալ նավթահորերի պաշտպանության մասին հայտարարություններով, և պատահական չէ, որ «Սի-էն-էն»-ի խմբագրությունը պատերազմի սանձազերծումից 10 տարի անց գրում է. «Իրաքյան պատերազմը պատերազմ էր նավթի համար, և այն պատերազմ էր ավարով՝ շատ նավթով»<sup>113</sup>:

Այսպիսով՝ արևմտյան ազդեցիկ մի շարք լրատվամիջոցներ Իրաքի ներսում վախի, հուսալքության մթնոլորտ առաջացնելու, ինչպես նաև միջազգային հանրության շրջանակներում իրենց քայլերը հիմնավորելու ակտիվ քարոզչություն իրականացրին: Նման քարոզչությունը գուգակցվեց նաև ապատեղեկատվությամբ. Բաղդադի ղեկավարության դեմ ակտիվ գործողությունների ավարտը նշանավորվեց Սադդամ Հուսեյնի մահապատժով: Պատերազմից տարիներ անց պարզ դարձավ, որ Իրաքում քիմիական զենք գոյություն չի ունեցել, իսկ պատերազմը սկսելու հիմնավորումը հենց դա էր:

**Լիբիայի** դեմ պատերազմի սկզբում և ընթացքում լրատվամիջոցները շրջանառության մեջ դրեցին իրաքյան իրադարձությունների ժամանակ կիրառված և սկզբունքորեն նմանատիպ տեղեկատվական հնարքներ: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

- Լիբիայում ժողովրդավարական արժեքները ոտնահարվում են<sup>114</sup>, հասարակության հանդեպ երկրի ղեկավարությունը իրագործել է տարատեսակ բռնություններ: Լիբիայի ղեկավար Մուամար Քադաֆին և նրա ընտանիքը պետական միջոցներից յուրացրել են խոշոր գումարներ և պետք է պատասխան տան հանրության առջև: Բազմաթիվ հայտանի անձինք, այդ թվում՝ փաստաբաններ, բժիշկներ, ինժեներներ, պրոֆեսորներ պահանջում են երկրի ղեկավարի հրաժարականը<sup>115</sup>:

- Լիբիական ընդդիմությունը ներկայացվում է որպես այլընտրանքային բևեռ, որի միջոցով հնարավոր է փոփոխություններ իրականաց-

---

<sup>113</sup> Տե՛ս **Juhász A.**, Why the war in Iraq was fought for Big Oil, CNN, International Edition, 15 April, 2013 <http://edition.cnn.com/2013/03/19/opinion/iraq-war-oil-juhasz/>:

<sup>114</sup> Տե՛ս **Jawad R.**, Deaths at Libya anti-militia protest in Tripoli, BBC news, 15 November, 2013, <http://www.bbc.co.uk/news/world-africa-2495993>:

<sup>115</sup> Տե՛ս **Benghazi the nerve centre as Libya protest turns to revolution, Lawyers, doctors and engineers attempt to take the city's destiny into their hands, The Guardian, 24 February, 2011, <http://www.theguardian.com/world/2011/feb/24/libya-benghazi-muammar-gaddafi>:**

նել<sup>116</sup>: Երկրի տարածքում բնակվող տարբեր ուժերի՝ իշխանական շրջանակների հետ սրված հարաբերությունները վերածվում են բախում-նների<sup>117</sup>:

- Երկրում ստեղծված խառնաշփոթի պայմաններում հայտնի լրատվամիջոցները շրջանառում են՝ իբր Քադդաֆին մնացել է միայնակ՝ փոքրաքանակ կողմնակիցներով, նույնիսկ փախուստի է դիմել Վենեսուելա, իսկ նրա որդին արդեն լքել է երկրի սահմանները<sup>118</sup>:

- «Ալ-Ջազիրա» հեռուստարկերությունը շտապեց հայտնել Լիբիայում օդուժ կիրառելու մասին, թեև այդ տեղեկատվության մեջ բացակայում էին փաստերը: Հատկանշական է, որ ցուցադրվեցին ընդամենը ականատեսների հետ հարցազրույցներ «կառավարության դաժանությունների» մասին<sup>119</sup>: Սա տեղեկատվական պատերազմների ժամանակ կիրառվող հայտնի մեթոդ է, երբ «ցանկալի» փաստերի բացակայության պայմաններում գործի են դրվում այդ բացը այս կամ այն կերպ լրացնելու ձևերը, այն է՝ «ականատեսների» վկայություններ, վերլուծաբանների մեկնաբանություններ և այլն:

- Սեփական իշխանությունը պահելու նպատակով կարող է քիմիական զենք կիրառել, ուստի անհրաժեշտ է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկել դա կանխելու համար:

- Երկրում կան կարևոր նշանակություն ունեցող նավթամուղներ, նավթահորեր, որոնք պետք է պաշտպանել հարձակումներից: Քադդաֆին սպառնացել է պայթեցնել նավթահորերը, հետևաբար անհրաժեշտ է փրկել լիբիական նավթը: Ի դեպ, մնան սցենար կիրառվեց նաև իրաք-

---

<sup>116</sup> St'u **Shadid A., Fahim K.** Opposition in Libya Struggles to Form a United Front, New York Times, 8 March, 2011, [http://www.nytimes.com/2011/03/09/world/africa/09rebels.html?\\_r=0](http://www.nytimes.com/2011/03/09/world/africa/09rebels.html?_r=0):

<sup>117</sup> St'u **Landler M.**, Obama Tells Qaddafi to Quit and Authorizes Refugee Airlifts, New York Times, 3 March, 2011, [http://www.nytimes.com/2011/03/04/world/africa/04president.html?\\_r=0](http://www.nytimes.com/2011/03/04/world/africa/04president.html?_r=0):

<sup>118</sup> St'u Libya: Gaddafi son Saif al-Islam says he is innocent, BBC news, 29 November, 2011, <http://www.bbc.co.uk/news/world-africa-15503638>:

<sup>119</sup> St'u Информационная война против Ливии, Санкт-Петербургский центр изучения современного Ближнего Востока, <http://meast.ru/article/informatsionnaya-voyna-protiv-livii>:

յան պատերազմում, երբ հայտարարվեց, թե նավթահորերը պայթեցվում են:

- Քաղաքափին սպանվում է իր երկրի քաղաքացիների ձեռքով և դառնում ծաղրուծանակի առարկա:

Սիրիայում 2011 թ. գրեթե նույն ձևով սկսվեցին հակակառավարական գործողությունները, այնուհետև՝ այսպես կոչված «քաղաքացիական պատերազմը»: Սկզբում Սիրիայում բարձրացավ դժգոհությունների ալիք, և շրջանառվեց, որ խաղաղության հաստատման համար Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը պետք է հեռանա<sup>120</sup>: 2011թ. մարտին մի շարք քաղաքներում, ինչպիսիք են Դամասկոսը, Հալեպը, Լաթակիան, Հոմսը և այլն, սկսվեցին հակակառավարական ցույցեր: Այդ ցույցերը ստացան «Մարտի 18-ի հեղափոխություն» անվանումը, որտեղ ցուցարարները պահանջում էին ժողովրդավարական բարեփոխումներ և նախագահ Բաշար Ասադի հրաժարականը<sup>121</sup>: Տեղի ունեցան ահաբեկչական մի շարք գործողություններ, այդ թվում՝ Հալեպի համալսարանում, որի կազմակերպման պատասխանատվությունը փորձեցին գցել Սիրիայի ղեկավարության վրա:

Հայտնի լրատվամիջոցները հայտնեցին, թե Բաշար ալ-Ասադը իր իշխանությունը պահելու համար պատրաստ է ամեն քայլի, այդ թվում՝ ինքնապաշտպանության նպատակով քիմիական զենք կիրառելուն: Քիմիական զենքի թեման շրջանառելով՝ մեծացան միջազգային ճնշումները, ընդ որում՝ լուրեր տարածվեցին, թե վարչակարգը քիմիական զինանոցը տեղաբաշխել է երկրի տարբեր հատվածներում, որը վնասազերծելու համար բազմաթիվ հարվածներ պետք է հասցնել: Եվրամիությունը մտցրեց պատժամիջոցներ Սիրիայի դեմ: Օգոստոսին ՄԱԿ-ի ԱԽ ներկայացուցիչը հայտարարեց, որ մարդու իրավունքները խախտվել են, և

---

<sup>120</sup> Տե՛ս **Arso S.**, Turkish Premier Urges Assad to Quit in Syria, New York Times, 22 November, 2011, <http://www.nytimes.com/2011/11/23/world/middleeast/turkish-leader-says-syrian-president-should-quit.html>:

<sup>121</sup> Տե՛ս **Barnard A.**, Damascus Puts on Pro-Assad Rally, but Protesters Won't Be Silenced, New York Times, 15, March 2012, [http://www.nytimes.com/2012/03/16/world/middleeast/syria-mass-damascus-rally-for-assad.html?\\_r=0](http://www.nytimes.com/2012/03/16/world/middleeast/syria-mass-damascus-rally-for-assad.html?_r=0):

Սիրիայի խաղաղ բնակչության հանդեպ իշխանությունների կողմից ուժ է կիրառվել:

Տեղեկատվական պատերազմների ոլորտում հայտնի մասնագետ Ի. Պանարինը, Լիբիայի և Սիրիայի դեմ կազմակերպված տեղեկատվական գրոհների վերաբերյալ հղում տալով ֆրանսիացի լրագրող Թիերի Մեյտոնին, հայտնում է, որ այս դեպքում կիրառվել են նոր մեթոդներ<sup>122</sup>. քաթարյան «Ալ-Ջազիրան» հրապարակեց տեսանյութեր և լուսանկարներ, որոնք արված էին հատուկ՝ արհեստական մկարահանման հրապարակներում՝ Սիրիայի (լիբիական բախումների ժամանակ՝ նաև Լիբիայի) գլխավոր քաղաքների հրապարակների նմանակումներով: Այս ամենի նպատակը իրական և ակտիվ պատերազմի տպավորություն ստեղծելն է:

Սիրիական հակամարտության վերաբերյալ «Ասիա Թայմսը» գրում է, որ ընթանում է տեղեկատվական պատերազմ՝ ուղղված միջազգային կարծիքի ձևավորմանը: Հեղինակի կարծիքով՝ դա տեղեկատվական պատերազմների մի նոր մակարդակ է՝ ներկայացված իբրև մարդու իրավունքների և ժողովրդավարության հաստատման համար պայքար: Այն հիմնված է խեղաթյուրման, մանիպուլյացիայի, ստի և կեղծ տեսա-ժապավենների վրա<sup>123</sup>: Հատկանշական է, որ հողվածի հեղինակը գուգահեռներ է անցկացնում սիրիական իրադարձությունների զարգացման և իրաքյան (2003) արշավի միջև: Մեջբերելով ԿՀՎ ներկայացուցիչ Փոլ Փիլլարին՝ նա նշում է, որ դա շարունակությունն է այն ձևաչափի, որը կիրառվում էր նախագահ Ջ. Բուշի կողմից Իրաքում: Այստեղ առկա է նույն մտայնությունը<sup>124</sup>:

Նմանություններ ենք տեսնում նաև հայտնի լրատվամիջոցների տեղեկատվության հաղորդման հիմնական ձևերում. օրինակ՝ քիչ են ներկայացված կամ ընդհանրապես բացակայում են հավաստի աղբյուրներ

---

<sup>122</sup> Տե՛ս **Панарин И.**, СМИ, пропаганда и информационные войны, Сирия и информационная война, [http://propagandahistory.ru/books/Igor-Panarin\\_SMI--propaganda-i-informatsionnye-voyny/42](http://propagandahistory.ru/books/Igor-Panarin_SMI--propaganda-i-informatsionnye-voyny/42):

<sup>123</sup> Տե՛ս **Byrne A.**, Covering Syria: The information war, Asia Times online, 12 July, 2012, [http://www.atimes.com/atimes/Middle\\_East/NG12Ak01.html](http://www.atimes.com/atimes/Middle_East/NG12Ak01.html):

<sup>124</sup> Տե՛ս նույն տեղում:

րը, հղումները, վկայակոչումները: Տեղեկատվությունը կարող է փոխանցվել այնպես, որ տարածված լուրերը հերքվելու դեպքում նահանջի տեղ մնա: Մեղադրանքներն ու քննադատությունները ոչ թե կոնկրետ մեկ հարցի կամ երևույթի շուրջ են, այլ բաղկացած են շատ կետերից: Այն կետը, որը կունենա ավելի լայն արձագանք, դա էլ կսկսվի խորացվել: Տեղեկատվական պատերազմների ժամանակ օգտագործվող հնարքներից է մեծ քանակությամբ և միաժամանակ իրարամերժ նորությունների տեղատարափը, որպեսզի ստեղծվի քաոսային իրավիճակ, և լսարանը չկարողանա «թացը չորից» տարբերել: Ընդ որում՝ իրարամերժ տեղեկատվական հոսքերում հատուկ ուշադրության կենտրոնում է պահվում գլխավոր նպատակը, որը հետագայում պետք է քննարկվի ավելի մանրակրկիտ և ներկայացվի որպես հասարակության շահերից բխող տեղեկատվություն: Այն կարող է լինել չափազանցված և առաջացնել վախի մթնոլորտ, լարվածություն:

- Ինչպես ցույց տվեց իրաքյան, լիբիական և սիրիական իրադարձությունների համեմատական վերլուծությունը, նշված զարգացումների լուսաբանման մեջ նկատելի են որոշակի ընդհանրություններ: Իրաքի, Լիբիայի և Սիրիայի դեմ իրականացվող տեղեկատվական պատերազմների ընդհանրությունների (մարտավարական, տեղեկատվության հաղորդման հիմնական ձևերի և այլն) վերաբերյալ փաստում են նաև մի շարք օտարերկրյա լրագրողներ, «տեղեկատվական պատերազմներ» ոլորտի մասնագետներ, վերլուծաբաններ և այլն:

- Տեղեկատվության տարածման հարցում բավականին ակտիվ են արևմտյան կողմնորոշում ունեցող ազդեցիկ լրատվամիջոցները, որոնք լուսաբանելիս ունեն կոնկրետ նպատակներ: Հասարակական կարծիք ձևավորելու գործում կիրառվում են ինչպես տեղեկատվական պատերազմների ավանդական (ապատեղեկատվության տարածում, առաջնորդների բացասական կերպարի ստեղծում, վախի մթնոլորտի ստեղծում և այլն), այնպես էլ՝ նորագույն (լիբիական, սիրիական քաղաքների հայտնի վայրերի նմանակումներով արհեստական նկարահանման հրապարակներում տեսանյութերի և լուսանկարների պատրաստում) միջոցներ:

- Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում նշված իրադարձությունների կա՛ն նախապես պլանավորված լինելու, կա՛ն միևնույն սկզբնաղբյուրն ունենալու հանգամանքը:

- Նշված երկրների դեմ տեղեկատվական պատերազմների ուսումնասիրումը կարևոր նյութ է տալիս մեզ. մեր հանրապետությունը, շրջապատված լինելով թշնամական երկրներով, հեռու չի կարող մնալ տեղեկատվական-հոգեբանական գրոհներից: Նաև հայտնի լրատվամիջոցները, սեփական շահերով առաջնորդվելով, կարող են համապատասխան հասարակական կարծիք ստեղծել մեզանում: Ուստի հետագա մարտահրավերներին դիմակայելու համար այսօրինակ երկրների դեմ կիրառված փորձը, տեղեկատվական պատերազմների նորագույն մեթոդների հետազոտումը էական կարող են լինել մեզ համար:

### **Առաջադրանքներ**

#### **Ներկայացնե՛լ**

- Իրաքյան, լիբիական և սիրիական բախումների վերաբերյալ լուսաբանման՝ ազդեցիկ ՉԼՄ-ի հիմնական շեշտադրումները:

- Մեղիա դաշտի միջոցով միջազգային հանրության կարծիքի վրա ներգործության հիմնական քայլերը:

- Տեղեկատվական գործողությունները Իրաքի դեմ:
- Տեղեկատվական գործողությունները Լիբիայի դեմ:
- Տեղեկատվական գործողությունները Սիրիայի դեմ:

- Ի՞նչ ընդհանրություններ կան հայտնի լրատվամիջոցների տեղեկատվության հաղորդման հիմնական ձևերում:

## **«Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն» առարկայի ծրագիր**

Գասընթացի ծավալը ընդգրկում է 32 ժամ:

### **Գասընթացի նպատակը և կրթական արդյունքները՝**

Գասընթացի նպատակն է ներկայացնել «տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն» առարկան, դրա կարևորությունը և արդիականությունը, «տեղեկատվական» դարաշրջանում միջազգային անցուղարձեռում տեղեկատվական պատերազմների տեղն ու դերը, կիրառման ոլորտը, մեթոդները, ուսանողներին կողմնորոշել ժամանակակից աշխարհում հաղորդակցության ձևերին, դիվանագետներին ուսուցանել տարբեր իրավիճակներում տեղեկատվության հետ աշխատելու հմտություններին: Գասընթացի շրջանակներում լսարանում տեսական նյութին գուգահեռ կանցկացվեն գործնական աշխատանքը:

Գասընթացի ավարտին ուսանողները կտիրապետեն հետևյալ հիմնական գիտելիքներին.

1. Ի՞նչ է նշանակում «տեղեկատվական պատերազմներ» և «տեղեկատվական անվտանգություն»:
2. Հասարակական կարծիք ձևավորելու մեթոդները, հաղորդակցության միջոցների կիրառումը անցյալում և ներկայում:
3. Տեղեկատվական պատերազմների իրականացման միջազգային փորձը:

### **Թեմա 1. «Տեղեկատվական պատերազմներ» հասկացությունը և սահմանումը (դասախոսություն՝ 2 ժամ)**

«Տեղեկատվական պատերազմներ» հասկացությունը: «Տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը: Տեղեկատվական պատերազմներ եզրույթի առաջացման նախապատմությունը: Տեղեկատվական պատերազմների կարևորությունը, դերակատարությունը հասարա-

կության, պետության կյանքում: «Տեղեկատվական պատերազմների» նպատակները և խնդիրները:

**Թեմա 2. Տեղեկատվական պատերազմների տեսակները**  
*(դասախոսություն՝ 2 ժամ)*

Տեղեկատվական պատերազմների բաղկացուցիչ մասերը՝ ըստ Մարտին Լիբիկիի, տեղեկատվական պատերազմները՝ ըստ մասշտաբի, ըստ զարգացման փուլերի (սերունդների): Աշխարհաքաղաքական տեղեկատվական պատերազմներ: Աշխարհաքաղաքական տեղեկատվական պատերազմների առանձնահատկությունները: Ներքին տեղեկատվական պատերազմներ:

**Թեմա 3. Տեղեկատվական գործողություններն անցյալում**  
*(դասախոսություն՝ 2 ժամ)*

Տեղեկատվական գործողությունները անցյալում: Տեղեկատվության տարածման ձևերը Հին աշխարհում, «Տրոյական ձին»՝ որպես տեղեկատվական գործողությունների դասական օրինակ: Չինացի ստրատեգ Սուն Յզիի տեղեկատվության կիրառման մասին հայեցակարգերը և դրանց արդիականությունը մեր օրերում: Սարսափի ու վախի մթնոլորտի տարածման մեթոդները արևելյան ժողովուրդների կողմից: Գ. Նժդեհի «Ահավարությունը»:

**Թեմա 4. Տեղեկատվական գործունը 20-րդ դարի միջազգային հարաբերությունների պրակտիկայում**  
*(դասախոսություն՝ 2 ժամ)*

Տեղեկատվական գործունի դերը Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում: ԽՍՀՄ քարոզչությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ալլեն Դալլասի՝ ԽՍՀՄ-ի կազմաքանդման ծրագիրը: Տեղեկատվական գործունը «սառը պատրազմի» տարիներին: Կիբեռքաղաքականություն: Նոոքաղաքականություն: Մեդիաքաղաքականություն:



**Թեմա 5. Ինֆոզեմ (տեղեկատվածին) սպառնալիքները և դրանց միջազգային վերահսկողության միջոցները**  
*(դասախոսություն` 2 ժամ)*

Պետության անվտանգության հիմնասյուները և տեղեկատվական գործոնը: Տեղեկատվական անվտանգության պահպանմանն ուղղված քայլերը: Ինչպիսի՞ն կարող են լինել տեղեկատվածին (ինֆոզեմ) սպառնալիքները: Տեղեկատվածին սպառնալիքների միջազգային վերահսկողության հիմնախնդիրը: Ցանցային անվտանգության հիմնախնդիրը մեր օրերում:

**Թեմա 6. Տեղեկատվական գործընթացները և դիվանագիտությունը**  
*(դասախոսություն` 2 ժամ)*

Տեղեկատվական գործոնը դիվանագիտության մեջ: «Ուղղորդված» տեղեկատվություն: Դիվանագիտական գործունեությունը և «տեղեկատվական հասարակությունը»: ՉԼՄ-ների դերը: Դիվանագիտական գործունեության մեջ տեղեկատվական անվտանգության պահպանման հիմնախնդիրները: Տեղեկատվական սպառնալիքները դիվանագիտական ոլորտում: Հանրային դիվանագիտություն:

**Թեմա 7. Տեղեկատվական պատերազմների իրականացման միջոցները**  
*(դասախոսություն` 2 ժամ)*

Մանիպուլյացիայի (ձեռնածության) տեսակները: Նոսամ Չոմսկու՝ մանիպուլյացիայի 10 ռազմավարությունները: Մանիպուլյացիայի դրսևորման ձևերը ՉԼՄ-ներում: Տեղեկատվություն և ապատեղակատվություն: Քարոզչություն և ենթաքարոզչություն: Քարոզչության տեսակները: Լոբբի:

**Թեմա 8. ՉԼՄ-ների կիրառումը տեղեկատվական պատերազմներում**  
*(դասախոսություն՝ 2 ժամ)*

ՉԼՄ-ների գործառնությունները տեղեկատվական գործողություններում: Բարձրակարգ (էլիտար) լրատվամիջոցների դերը տեղեկատվական պատերազմներում: Տպագիր մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը որպես տեղեկատվական պատերազմների գործոն: «Նոր մեդիայի» կիրառումը տեղեկատվական պատերազմներում:

**Թեմա 9. ԱՄՆ-ի տեղեկատվական քաղաքականության սկզբունքները:**  
**Չինական փորձը տեղեկատվական պատերազմներում**  
*(դասախոսություն՝ 2 ժամ)*

Չ. Բրայսի՝ հասարակական կարծիքի վրա ներգործելու մեխանիզմները: ԱՄՆ-ի տեղեկատվական քաղաքականությունը 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո: «Տեղեկատվական գործույթների ճանապարհային քարտեզ» փաստաթուղթը: Տեղեկատվական պատերազմների չինական փորձը: Չինական տեղեկատվական քաղաքականության հիմնական սկզբունքները:

**Թեմա 10. Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները (2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրինակով)**  
*(դասախոսություն՝ 2 ժամ, գործնական պարապմունք՝ 2 ժամ)*

Ադրբեջանական տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները ներքին լսարանում: Արտաքին լսարանում ադրբեջանական տեղեկատվական քաղաքականության հիմնական սկզբունքները: ՀՀ լրատվական դաշտը և ռազմական գործողությունների լուսաբանումը: Ադրբեջանի տեղեկատվական «ջանքերը»՝ ուղղված հայկական լսարանին: ՀՀ տեղեկատվական գրոհներն Ադրբեջանի դեմ:

**Թեմա 11. Իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմները  
21-րդ դարում**

*(դասախոսություն` 2 ժամ, գործնական պարապմունք` 2 ժամ)*

Իսլամական հեղափոխությունը և միջպետական հարաբերությունների խզումը ԱՄՆ-ի և Իրանի միջև. արևմտյան մամուլի արձագանքը լուսաբանումը: 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները և Իրանը: Իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմների հիմնական ուղղությունները: Սոցցանցերի կիրառումը Իրանի դեմ տեղեկատվական պատերազմներում: Նորագույն տեխնոլոգիաներով վիրուսների տարածումը Իրանում:

**Թեմա 12. Հակաիրանական քարոզչությունը և Իրանի  
միջազգային վարկանիշը**

*(դասախոսություն` 2 ժամ)*

Հակաիրանական քարոզչության հիմնական շեշտադրումները: 2009 թ. նախագահական ընտրություններն Իրանում և դրա միջազգային արձագանքը: Միջէթնիկական և միջկրոնական տարձայնությունների շահարկումը Իրանում: Իրանի` երկրի միջազգային վարկանիշի բարելավմանն ուղղված քայլերը:

**Թեմա 13. Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական  
պատերազմների համեմատական վերլուծությունը**

*(դասախոսություն` 2 ժամ, գործնական պարապմունք` 2 ժամ)*

Իրաքյան, լիբիական, սիրիական ռազմական գործողությունների լուսաբանումը արևմտյան լատվամիջոցներում: Քաղաքացիական պատերազմը Լիբիայում: Քաղաքացիական պատերազմը Սիրիայում:

**«Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն» դասընթացի  
հիմնական նկարագրիչները**

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և խնացություն*

1. ներկայացնելու «տեղեկատվական պատերազմներ», «տեղեկատվական անվտանգություն» եզրույթները, տեղեկատվական պատերազմների տեսակները,

2. ներկայացնելու տեղեկատվածին սպառնալիքները և դրանց միջազգային վերահսկողության միջոցները,

3. ներկայացնելու տեղեկատվական պատերազմների իրականացման մեթոդները, համեմատել դրանց առանձնահատկությունները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

4. մասնագիտական, վորձագիտական գրականության ու աղբյուրների ուսումնասիրման միջոցով վերլուծելու (հայ-ադրբեջանական, իրանա-ամերիկյան և այլն) տեղեկատվական պատերազմների առանձնահատկությունները,

5. մեկնաբանելու ժամանակակից տեղեկատվական պատերազմները, վերհանելու դրանց դրսևորման և զարգացման հիմնական միտումները,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները:**

1. Թեմատիկ գրականության ընթերցում. սահմանված ժամանակացույցով նախապես ծանոթացնել դասընթացի թեմատիկ հիմնական գրականությանը՝ սահմանված թեմաներով լսարանային հանդիպումներին պատրաստվելու համար:

2. Թեմատիկ զեկուցումների պատրաստում. սահմանված հերթականությամբ, անհատական կամ խմբային սկզբունքով, լսարանային

հանդիպումների ժամանակ ներկայացնել դասընթացի թեմաների վերաբերյալ դիտարկումներ:

3. Ինտերակտիվ դասախոսությունների և թեմատիկ քննարկումների համակցությամբ լսարանային հանդիպումներ, որոնք ուղղված են դասընթացի հիմնական թեմաների վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը և դրանց վերաբերյալ բանավեճային կարողությունների զարգացմանը, ընդհանուր քննադատական մտածողության զարգացմանը:

### **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

1-ին և 2-րդ ընթացիկ քննություններ

*Գնահատման մեթոդը՝* գրավոր ընթացիկ քննություն, որը հիմնված է հարցատոմսի տեսական 2 հարցերին (յուրաքանչյուրը՝ 2-ական միավոր արժեքով) ուսանողի ներկայացրած գրավոր պատասխանի վրա:

*Չափանիշները՝* սեփական բառերով վերաշարադրված՝ հարցատոմսում ներառված թեմատիկ նյութի բովանդակությունը:

Եզրափակիչ քննություն

*Գնահատման մեթոդը՝* բանավոր հարցում՝ հիմնված հարցատոմսում ներառված 3 հարցերին (որոնցից երկուսը՝ 3-ական, իսկ մեկը՝ 4 միավոր արժեքով) ուսանողի տված բանավոր պատասխանի վրա:

*Չափանիշները՝*

- Սեփական բառերով վերաշարադրված՝ ներկայացնել հարցատոմսում ներառված հարցի վերաբերյալ հանճարարված աղբյուրների (մոտեցումներ, հայեցակարգեր և այլն) հիմնադրույթները,

- ինքնուրույն վերլուծել ու գնահատել (հիմնավորելով կամ քննադատելով) թեմատիկ նյութը:

**«Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն» առարկայի  
քննական հարցաշար**

1. Ի՞նչ է «տեղեկատվական պատերազմը», և ի՞նչ է «տեղեկատվական անվտանգությունը»

2. Տեղեկատվական պատերազմների 7 բաղկացուցիչ մասերը՝ ըստ Մարտին Լիբիկիի

3. Տեղեկատվական պատերազմների տեսակները

4. Տեղեկատվական գործողությունները Առաջին, Երկրորդ համաշխարհային և «սառը պատերազմի» տարիներին

5. Տեղեկատվական գործոնը դիվանագիտության մեջ

6. Տեղեկատվածին սպառնալիքները և դրանց միջազգային վերահսկողության հիմնախնդիրները

7. Սուն Յզիի տեղեկատվական գործողությունների հայեցակարգը

8. Քարոզչություն և ենթաքարոզչություն, ապատեղեկատվություն և լոբբի

9. Մանիպուլյացիայի տեսակները

10. Էլիտար լրատվամիջոցների դերը տեղեկատվական պատերազմներում

11. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության դերը տեղեկատվական պատերազմներում

12. Համացանցի հնարավորությունները տեղեկատվական պատերազմներում

13. ԱՄՆ-ի փորձը տեղեկատվական պատերազմներում

14. Չինաստանի փորձը տեղեկատվական պատերազմներում

15. Ադրբեջանի հակահայ տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները

16. Հայ-ադրբեջանական կիբեռպատերազմներ

17. Իրանա-ամերիկյան տեղեկատվական պատերազմների հիմնական ուղղությունները

18. Իրանի՝ 2009 թ. նախագահական ընտրությունները և սոցցանցերի կիրառումը

19. Տեղեկատվական պատերազմների կիրառումը Իրաքում, Լիբիայում, Սիրիայում

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Ա. Աղբյուրներ

1. Information Operation Roadmap, USA, Department of Defence, 2003, [http://nsarchive.gwu.edu/NSAEBB/NSAEBB177/info\\_ops\\_roadmap.pdf](http://nsarchive.gwu.edu/NSAEBB/NSAEBB177/info_ops_roadmap.pdf).
2. The National Intelligence Strategy of the United States of America, 2009.
3. Thomas P. Rona. Weapon Systems and Information War. Boeing Aerospace Co., Seattle, WA, 1976. [http://www.dod.mil/pubs/foi/Reading\\_Room/Science\\_and\\_Technology/09-F-0070-Weapon-Systems-and-Information-War.pdf](http://www.dod.mil/pubs/foi/Reading_Room/Science_and_Technology/09-F-0070-Weapon-Systems-and-Information-War.pdf).

### Բ. Մենագրություններ և էլեկտրոնային գրքեր

1. Ալավերդյան Դ., Տեղեկատվական պատերազմներ, ԵՊՀ հրատ. Եր., 2014:
2. Երիցյան Ս., Հեռուստատեսություն: Գործառույթները, զարգացման միտումները և հեռանկարները, Եր., «Մանկավարժ», 2005:
3. Հարությունյան Գ., ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2003:
4. Մելքոնյան Ն., Քաղաքական իմիջ, մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2007:
5. Միրաբյան Վ., Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները, Եր., 2010:
6. Ջամալյան Դ., Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը, Եր., ԵՊՀ հրատ., 2015:
7. Մուն Յզի, Երկ նազմարվեստի մասին, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., ՎՆ:
8. Lasswell H.D. The Structure and Function of Communication in Society, Mass Communication, Ed. by Schramm W. Urbana, 1960.
9. Lasswell H.D., Propaganda Technique in the World War, NY 1938.
10. Libicki M., What is Information Warfare. National Defense University, 1995, <http://www.iwar.org.uk/iwar/resources/ndu/infowar/a003cont.html>.

11. Lowi J., Theodore, Ginsberg B., Shepslie A. Kenneth, American Government, Power and Purpose, Sources of Media Power, Brief 10th Edition, W.W. Norton and Company, NY, 2008.

12. Herman S., Edward, Chomsky N., Manufacturing Consent: A Propaganda Model, Pantheon Books, 1988, [http://www.thirdworldtraveler.com/Chomsky/Noam\\_Chomsky.html](http://www.thirdworldtraveler.com/Chomsky/Noam_Chomsky.html).

13. Арутюнян Г., Стратегия развития, О некоторых проблемах национальной безопасности, «Нораванк» НОФ, Ер., 2010.

14. Атанесян А., Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций, Ер., изд. ЕГУ, 2008.

15. Бжезинский З., Американское превосходство и его геостратегические императивы // Великая шахматная доска, М., «Международные отношения», 2010,

16. Ворошилов В., Журналистика, Учебник 5-е издание, С. П., изд. Михайлова В., 2004.

17. Лисичкин В, Шелепин Л., Третья мировая информационно-психологическая война, М., 1999.

18. Панарин И., Информационная война и геополитика, М., «Покорение», 2006,

19. Почепцов Г., Информационные войны, Основы военно-коммуникативных исследований, М., «Рефл-бук», Ваклер, 2000.

20. Шейнов В., Психология лидерства и власть, М., изд. «Ось-89», 2008,

21. Уткин А., Правда об Ираке, или Битва в Месопотамии, М., ЗАО, Олма Медиа групп, 2007.

## **Գ. Հոդվածներ**

1. Ժամակոչյան Ա. Պրոպագանդա, ազդեցիկա, մանիպուլյացիա և հանդուժ, «Նորավանք» ԳԿՀ, 2015, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=13705](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=13705):

2. Հարությունյան Գ., Արդրեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Նորավանք ԳԿՀ, <http://ysu.am/files>, Եր., 2009, 114 էջ:



3. Միրաքյան Վ., Ռադիոյի ազդեցության հնարավորությունները, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4293](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4293), 09.02.2010

4. Միրաքյան Վ., Տեղեկատվա-հոգեբանական ազդեցությունը տպագիր լրատվամիջոցներով, [http://noravank.am/arm/issues/detail.php?element\\_id=2208](http://noravank.am/arm/issues/detail.php?element_id=2208), 08.09.2009:

5. Chomsky Noam, The International Coalition, Top 10 Media Manipulation Strategies, [http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation\\_08.html](http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation_08.html).

6. <http://www.entekhab.ir/fa/news/36907/>, ۱۱ شهریور ۱۳۹۰ /տեսլստեմ-բերի 2/, *واکنش تهران به اظهارات سارکوزی درباره احتمال حمله به ایران*.

7. BBC Persian, 13,1390 مرداد, (2011, 08) <http://www.bbc.co.uk/persian/iran/2011/08/>, *احمدی نژاد اختلاف با آیت الله خامنه‌ای را تکذیب کرد.*

8. [www.jangafzar.ir](http://www.jangafzar.ir), (2009 June), *افزار جنگ*.

9. *خبرگزاری دانشجویان ایران*, 1390/08/04 , <http://isna.ir/isna/NewsView.aspx?ID=News-1877581>, *آمریکا در راستای آسیب رساندن به ایران دائماً سرگرم توطئه‌ریزی است.*

10. *شهریور*, ۳۱, <http://www.mashreghnews.ir/fa/news/68083>, *مشرق نیوز*, *قطع ارتباط ایران و آمریکا به ضرر دو طرف است*, ۱۳۹۰.

#### **Գ. Համացանցային կայքեր**

1. [www.noravank.am](http://www.noravank.am)
2. [www.nytimes.com](http://www.nytimes.com)
3. [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com)
4. [www.latimes.com](http://www.latimes.com)



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՀԱՅԿ ԶՎՎԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆ

Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն

*Ուսումնամեթոդական շեռնարկ*

Айк Завенович Назарян

Информационная война и дипломатия

*Учебное пособие*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի  
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:  
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 25.06.2017:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 9.125:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.y-su.am](http://www.publishing.y-su.am)



ԿՐԾԱՐԱՎՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2017  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)